



ՌԷԳ մեկտեղման /սկոպինգ/ զեկույց

«Հայաստանում ԿԿԹԿ ոլորտի Ռազմավարական
զարգացման ծրագրի, ճանապարհային քարտեզի և
երկարաժամկետ ներդրումային ծրագրի»
Ռազմավարական էկոլոգիական գնահատում

Երևան, Հայաստան

2016

Բովանդակություն

1.	ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1.1.	Նախաբան.....	3
1.2.	Հիմնախնդիրների սահմանման նպատակը.....	4
1.3.	Տեղեկատվություն թափոնների կառավարման պլանի վերաբերյալ.....	5
1.4.	Սանիտարական աղբավայրեր.....	10
1.5.	Թափոնների կառավարման պլանի նպատակը և խնդիրները.....	13
1.6.	Թափոնների կառավարման պլանի հիմնական շահագրգիռ կողմերը.....	14
2.	ՋՈՒՐ.....	16
2.1.	Նախնական վերլուծություն.....	16
2.2.	Համապատասխան ռազմավարական փաստաթղթերը.....	22
2.3.	Բնապահպանական ու առողջապահական քաղաքականության նպատակները....	26
2.4.	ԶԿՊ շրջանակներում ՌԷԳ կողմից հասցեագրվող հիմնական խնդիրները.....	27
3.	ՀՈՂ և ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.....	29
3.1.	ՀՀ հողերի Գծապատկերագրությունը.....	29
3.2.	Հողային ռեսուրսների խնդիրները ՀՀ-ում.....	33
3.3.	Ընդերքօգտագործում	34
3.4.	Երաշտ	37
3.5.	Սողանքներ.....	39
3.6.	Սելավներ.....	41
3.7.	Հողի աղակալում.....	43
3.8.	Թափոններ.....	43
4.	Կենսաբազմազանություն, մթնոլորտային օդ և կլիմա.....	44
4.1.	Հիմնական բացահայտումներ.....	44
4.2.	Կլիմայական փոփոխությունը ՀՀ-ում.....	55
4.3.	Մթնոլորտային օդի պահպանության ներկա խնդիրներն ու լուծումները.....	58
4.4.	Արտանետումներ.....	61
4.5.	Թափոններ.....	63
4.5.1.	Կոշտ կենցաղային թափոններ(ԿԿԹ).....	63

4.5.2.	Թափոնների կառավարման վերաբեյալ ԵՄ մոտեցումը՝ որպէս միջազգային պրակտիկայի օրինակ	67
4.5.3.	Աղբահանության վիճակը ՀՀ ԲՀՊՏ-ներում.....	70
5.	Սոցիալ-տնտեսական իրավիճակը Հայաստանում.....	71
5.1.	Տնտեսությունը.....	71
5.2.	Ժողովրդագրական տվյալներ ու բնակչության սոցիալական իրավիճակը.....	73
5.3.	Թափոնների կառավարման իրավիճակը	75
5.4.	Մշակութային ժառանգություն.....	76
5.5.	Երկրի սոցիալ-տնտեսական մարտահրավերները.....	76
6.	Հանրային առողջություն.....	78
6.1.	Մարդու առողջությանն առնչվող խնդիրներն ու թափոնների կառավարումը.....	78
	Հղումներ.....	108
	Հավելվածներ.....	110

1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Նախաբան

Ռազմավարական էկոլոգիական գնահատումը (ՌԷԳ) կայուն զարգացման աղյուսակետ խթան է՝ ազգային և տեղական մակարդակում բնապահպանությունը տնտեսական զարգացման գործընթացներում ինտեգրելու համար: ՌԷԳ-ը բնապահպանական կառավարման հիմնավոր, գործնական ու արդյունավետ պլանավորման գործիք է / համակարգ է, որը մշակվել է ՄԱԿ-ի ԵՏՀՌԷԳ արձանագրության անդրսահմանային համատեքստում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) կոնվենցիայի (Էսպո) շրջանակում:

ՌԷԳ-ը հնարավորություն է տալիս բացահայտել ծախսերի ամենահարմար ու արդյունավետ ռազմավարական զարգացման այլընտրանքները՝ նոր ներդրումներ իրականացնելու ու միջավայրը բարելավելու նպատակով: ՌԷԳ-ը նաև թույլ է տալիս ուժեղացնել բնապահպանական կառավարումը՝ խթանելով թափանցիկություն և խորհրդակցություններ համապատասխան շահագրգիռ կողմերի և հանրության հետ՝ նախքան պլանների ու ծրագրերի հաստատումը, ինչը զգալիորեն բարելավում է հանրային իրազեկությունն ու մասնակցությունը ազգային ու տեղական մակարդակներում բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում: Անդրսահմանային համատեքստում ՌԷԳ-ը կարող է նաև զգալիորեն դյուրինացնել բնապահպանական հարցերի շուրջ տարածաշրջանային համագործակցությունը:

ՄԱԿ-ի ԵՏՀ քարտոզարության կողմից տրամադրվում է կարողությունների զարգացմանն ուղղված աջակցություն, որի նպատակն է Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրներում Էսպո կոնվենցիայի և ՌԷԳ արձանագրության կիրարկման ապահովումը, արձանագրության դրույթների համապատասխանեցումը ազգային օրենսդրության դրույթներին, ազգային փորձի զարգացումը, ՌԷԳ ուղեցույցների մշակումը, ՌԷԳ-ի արդյունավետ իրականացումը Հայաստանի Հանրապետությունում՝ առաջնորդվելով ՌԷԳ արձանագրությամբ: Հայաստանում որպես ՌԷԳ փորձնական ծրագրի առարկա ընտրվել է «Հայաստանում ԿԿԹԿ ոլորտի Ռազմավարական զարգացման ծրագիր, Ճանապարհային քարտեզ և Երկարաժամկետ ներդրումային ծրագիրը» /այսուհետ թափոնների կառավարման պլան/:

1.2 Հիմնախնդիրների սահմանման նպատակը

ՌԷԳ գործընթացի նախնական քայլը սովորաբար համարվում է հիմնախնդիրների սահմանումը: Հիմնախնդիրների սահմանման նպատակն է բացահայտել պլանին կամ ծրագրին առնչվող բնապահպանական ու առողջապահական խնդիրները, որոնք պետք է ՌԷԳ շրջանակներում կրկին վերլուծության ենթարկվեն:

Հիմնախնդիրների սահմանումը կարևոր է ՌԷԳ գործընթացի արդյունավետության համար, քանի որ այն թույլ է տալիս ՌԷԳ հիմքում ընդունել միայն այն հնարավոր ու զգալի ցուցանիշները, որոնք էական են առաջարկվող պլանի կամ ծրագրի դեպքում:

Թափոնների կառավարման պլանի ՌԷԳ հիմնախնդիրների սահմանումը ենթադրում է.

- Շրջակա միջավայրի բաղադրիչների ու առողջապահական առկատվալների նախնական վերլուծություն:
- Թափոնների կառավարման պլանից բխող շրջակա միջավայրի ու առողջապահական խնդիրների սահմանում:
- Թափոնների կառավարման պլանից բխող շրջակա միջավայրի ու առողջապահական քաղաքականության հիմնախնդիրների սահմանում: Խորհրդակցություններ շահագրգիռ կողմերի հետ:

ՌԷԳ փորձնական ծրագրի նպատակը - ՌԷԳ փորձնական ծրագրի նպատակն է «Հայաստանում ԿԿԹԿ ոլորտի Ռազմավարական զարգացման ծրագիր, Ճանապարհային քարտեզ և Երկարաժամկետ ներդրումային ծրագիր» նախաձեռնության վերաբերյալ իրականացնել ռազմավարական գնահատման գործընթաց՝ ՌԷԳ արձանագրությանը և ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Փորձնական ծրագրի իրականացման արդյունքում վեր կհանվեն Օրենքի գործնական կիրառման հնարավորությունները, բացթողումներ՝ ՌԷԳ գործընթացի իրականացման առումով: *Փորձնական ծրագրի իրականացումը հիմք կհանդիսանա, արձանագրության պահանջներին համապատասխան, ՌԷԳ ազգային օրենսդրության վերաբերյալ առաջարկությունների մշակման համար*, կնպաստի Հայաստանի Հանրապետությունում ՌԷԳ գործընթացի կիրարկման ապահովմանը, ՌԷԳ-ի օգուտների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

Ներկայացվելու է ծրագրին առնչվող ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերը, ՀՀ-ում Ռազմավարական էկոլոգիական գնահատման

իրականացման օրենսդրական հիմքերը, առնչող բնապահպանական խնդիրները, զարգացման տենդենցները, դրանց վերլուծությունը և առաջարկությունները: Փորձնական ծրագրի իրականացման գործընթացում ի հայտ եկած հակասությունների, դժվարությունների և ոլորտին վերաբերող ՀՀ օրենսդրական բացերի առկայության արդյունքում կմշակվի օրենսդրական առաջարկությունների և փոփոխությունների փաթեթ:

ՌԷԳ իրականացման գործընթացում թափոնների կառավարման պլանի իրականացման հնարավոր ազդեցությունները՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա կհասցվի նվազագույնի, հաշվի առնելով ոլորտի մասնագետների, հանրության, պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կարծիքներն, առաջարկություններն ու եզրակացությունները:

1.3 Տեղեկատվություն թափոնների կառավարման պլանի վերաբերյալ

Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը:

Հայաստանի կառավարությունը /Հկ/ և Ասիական զարգացման բանկը /ԱԶԲ/ Ծրագրի նախապատրաստման համար նախաձեռնել են երկու փուլից բաղկացած տեխնիկական աջակցության /ՄԼՏԱ/ հանձնարարության իրականացում, որն ուղղված է Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի բարելավման պլանավորմանը: Թափոնների կառավարման պլանի իրականացման պատասխանատուն համարվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, որը տեղակայված է ք.Երևան Հանրապետության Հրապարակ, Կառավարության տուն 3 հասցեում:

Հիմնադրությային փաստաթղթի անվանումը, նպատակը, Թափոնների կառավարման պլան, որը ներառում է Ռազմավարական զարգացման ծրագիր, Ճանապարհային քարտեզ և Երկարաժամկետ ներդրումային ծրագիր /այսուհետ թափոնների կառավարման պլան/:

Այս փաստաթղթում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության թափոնների ոլորտի ռազմավարական զարգացումը: Թափոնների կառավարման պլանը նախատեսված է 20-30 տարվա համար:

Հայաստանում կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծառայությունների իրականացումը գտնվում է ցածր մակարդակի վրա, որի հետ կապված առաջանում են սոցիալական, բնապահպանական և ընդհանուր սանիտարական խնդիրները: Միաժամանակ երկրում բացակայում է ազգային

ռազմավարություն կամ գործողությունների ծրագիր, այս ԿԿԹԿ ոլորտի զարգացման ռազմավարության նպատակն է՝ աջակցել թափոնների ենթակառուցվածքի ժամանակակից զարգացմանը, ինչպես նաև սահմանել ռազմավարական ուղղությունը:

Թափոնների կառավարման պլանի հիմնախնդիրը ձևակերպվում է հետևյալ կերպ.

Հայաստանը կունենա ժամանակակից ԿԿԹԿ համակարգ, որը կընդգրկի ամբողջ երկիրը, կհամապատասխանի լավագույն միջազգային պրակտիկային և որում հաշվի կառնվեն երկրի՝ ԵՄ մոտարկմանն ուղղված ջանքերը, և որը կմատուցի տեխնիկապես, ֆինանսապես և էկոլոգիապես կայուն կերպով ծախսարդյունավետ ծառայություններ:

Այն ընդգրկում է 2017-ից 2036 թվականների միջև ընկած ժամանակահատվածը: Այս ռազմավարությունում նկարագրված միջոցառումները կիրականացվեն աստիճանաբար՝ փուլերով: Չնայած նրան, որ քսան տարին երկար ժամանակահատված է պլանավորման համար, նախատեսված է պլանավորման ընթացքում կատարել փոփոխություններ:

Թափոնների կառավարման պլանի շրջանակներում իրականացվելու են 5 ենթածրագրեր՝ Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Լոռու, Երևանի համար, որոնք կծառայեն նաև ներքին համայնքներին: Այժմ մշակման փուլում են Կոտայքի և Շիրակի մարզերի թափոնների կառավարման պլանները: Մնացած 3-ի աշխատանքները դեռևս սկսված չեն: Բոլոր 5 ծրագրերն էլ հաստատվելու են ՀՀ Կառավարության կողմից: Նշված ծրագրերի նախագծման, հաստատման ժամկետները դեռևս հստակ սահմանված չեն:

ՌԷԳ փորձական ծրագիրը իրականացվում է <<Հայաստանում ԿԿԹԿ ոլորտի Ռազմավարական զարգացման ծրագիր, Ճանապարհային քարտեզ և Երկարաժամկետ ներդրումային ծրագիր>> (Թափոնների կառավարման պլան) փաստաթղթի հիման վրա, ռազմավարական էկոլոգիական գնահատման գործընթացը իրականացվելու է՝ ՌԷԳ արձանագրության և ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության համապատասխան:


Հիմնադրությային փաստաթղթի բնութագիրը /արտադրական հզորություններ, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ/

Առաջարկվող կոշտ կենցաղային թափոնների կառավարման տարածաշրջանային համակարգը պատկերված է Պատկեր 1-ում: Այն ենթադրում է տարածաշրջանային հինգ սանիտարական աղբավայր, որոնք ծառայում են նույն թվով սպասարկման տարածքների: ԵՄ չափանիշներով նախագծվող աղբավայրերը

գտնվելու են Շիրակում, Լոռիում, Կոտայքում, Երևանում և Սյունիքում: Երևանի աղբավայրը կլինի Նուբարաշենի աղբավայրի ավելի ընդլայնված տարբերակը, որում կօգտագործվի գոյություն ունեցող առկա Նուբարաշենի հողակտորը: Այն կունենա տարեկան պայմանական 300 հազար տոննա կարողություն և 20 տարվա կյանք և, բացի մայրաքաղաք Երևանից, այն նաև երեք փոխանցման կայանների միջոցով կծառայի Արմավիրին, Արարատին, Վայոց ձորին և Արագածոտնին: Տարածաշրջանային աղբավայրերը սովորաբար կլինեն 20 հեկտար և նույնպես կծառայեն 20 տարի: Դրանք կսպասարկվեն 6 այլ փոխանցման կայանների միջոցով:

Բացի փոխանցման կայաններից, կմշակվի հավաքման ինտեգրված ժամանակակից համակարգ, որն իր մեջ կընդգրկի թափոնների համար սպասարկման տարածքները: Քաղաքային վայրերումայն կընդգրկի հավաքման համար մեկ ենթակառուցվածք, որի հիմքում կլինեն ըստ տեղի և հասանելիության ընդանուր չափանիշով մշակված կոնտեյներներ՝ բնակելի տարածքներում ծառայությունների մատուցման նպատակով: Նմանապես, մեքենաների ընտրությունը կլինի առավելագույնս ստանդարտացված: Ավելի փոքր, հասանելի գյուղական համայնքներում կլինեն ավելի մեծ աղբամաններ, որոնցից կարելի է արդեն հավաքել թափոնները և դրանք տեղափոխել դեպի փոխանցման կայաններ կամ անմիջապես դեպի աղբավայրեր: Ազգային համակարգի հետ կապ չունեցող հեռավոր գյուղական համայնքները կսպասարկվեն ընդլայնված տեղական ծառայությունների միջոցով: Երևանն ինքնուրույն կգարգացնի հավաքման, տեղափոխման, ինչպես նաև հեռացման և օգտահանման իր կարողությունները:

Պատկեր 1 Սանիտարական աղբավայրերի և փոխանցման կայանների ենթադրյալ տեղակայման վայրերով թափոնների կառավարման տարածաշրջանային համակարգի հայեցակարգային պատկեր



Քաղաքի բոլոր կենտրոններում կապահովվի վերամշակման համար աղբամանների տեղադրման ստանդարտացված համակարգ, որի միջոցով կոմունալ բնակելի հավաքման կետերին մոտ կտեղադրվեն աղբի հավաքման համար աղբամաններ: Հիմնվելով այլ տեղերում ընդհանուր փորձի վրա, այս աղբամանների

տեղադրման արդյունքում աստիճանաբար կաճի չոր վերամշակելի թափոնների հավաքման գործակիցը: Թափոնների հավաքման ապագա համակարգի հիմնական նպատակն է՝ բարելավել գոյություն ունեցող թափոնների հավաքման համակարգը քաղաքներում և քաղաքապետարաններում՝ հավաքման մեքենաների բավարար քանակի մատակարարման և կոնտեյներներով հագեցած հավաքման կետերի ստեղծման միջոցով: Ենթադրվում է, որ թափոնների հավաքումը քաղաքներում կիրականացվի ամեն օր /շաբաթը 7 օր/:

Փոխանցման կայաններ ստեղծելու հիմնական նպատակն է նվազեցնել թափոնների՝ մեծ տարողությամբ մեքենաներով դեպի տարածաշրջանային աղբավայր փոխադրման ծախսը /ծախսը, տոննան, կիլոմետրը/, ի համեմատ քաղաքապետարանների կողմից թափոնների հավաքման համար օգտագործվող ավելի փոքր մեքենաների: Ավելին, փոխանցման կայանն ապահովում է ծառայությունների ավելի մեծ հնարավորություն այն փոքր ձեռնարկությունների համար, որոնք ինքնուրույն են հավաքում և տեղափոխում թափոնները, քանի որ դեպի փոխանցման կայան տանող ճանապարհին ավելի կարճ է:

Աղյուսակ 1. Պլանավորման մոդելում ներառված փոխանցման կայանները

Շրջան	Սպասարկման տարածք	Տեղակայման վայր	Տարողություն (տոննա տարեկան)	Հեռավորությունը մինչև տարածաշրջանային աղբավայր (կմ)
Շիրակի մարզ	Փոխանցման կայան չկա	-	-	-
Լոռու մարզ	Տավուշի մարզի Բերդը, Դիլիջանը և Իջևանը	Դիլիջան	22,000	36
	Ախթալան, Ալավերդին, Շամլուղը, Լոռու մարզի Թումանյանը, ինչպես նաև Տավուշի մարզի Այրումը և Նոյեմբերյանը	Ալավերդի	12,000	50
Կոտայք	Գեղարքունիքի մարզի Գավար, Մարտունի և Վարդենիսը	Գավար, Մարտունի շրջան	38,000	52
Հարավային շրջան /Երևանի	Արագածոտնի մարզ	Աշտարակ	24.000	43
	Արմավիրի մարզ	Վաղարշապատ	53,000	21

մոտ		տ		
	Արարատի մարզի Արարատը, Արտաշատը և Վեդին	Արտաշատ	36,000	32
	Վայոց Ձորի մարզ	Եղեգնաձոր	11,000	124
Սյունիք	Սյունիքի մարզի Դաստակերտը, Գորիսը և Սիսյանը	Գորիս	14,000	66
	Սյունիքի մարզի Ագարակը և Մեղրին	Մեղրի	4,000	101

1.4 Սանիտարական աղբավայրեր

Հավաքված կոշտ կենցաղային թափոնները կտեղավորվեն մի շարք ժամանակակից սանիտարական աղբավայրերում: Ենթադրվում է, որ աղբավայրերը տեղակայվում, նախագծվում և շահագործվում են թափոնների աղբավայրի վերաբերյալ ԵՄ-ան հրահանգի համաձայն 1999/31/ԵՀ):

Պլանավորման մոդելում ներառված տարածաշրջանային աղբավայրերը ներկայացված են Աղյուսակ 2-ում: Աղբավայրերի ճշգրիտ վայրը պետք է մանրամասն սահմանվի նախնական գնահատման ուսումնասիրության միջոցով, որում Կոտայքի և Լոռու մարզերի նշվում են որպես հետաքննարարյալ վայրեր՝ համաձայն ՎԶԵԲ-ի և KfW-ի կողմից կատարված Իրագործելիության ուսումնասիրության: Աղյուսակում նշված աղբավայրի տարածքը պարզապես հատկանշական է, իսկ իրական տարածքի սահմանումը կախված կլինի աղբավայրի ճշգրիտ վայրի և վերջնական սպասարկման տարածքի սահմանումից: Աղբավայրերը պետք է պլանավորվեն որպես թափոնների կառավարման տարածաշրջանային կենտրոնի մաս՝ հետագայում լրացուցիչ տարածություններ ներառելու հնարավորությամբ /ընդհանուր տարածքը կավելանա/:

Աղյուսակ 2: Պլանավորման մոդելում ենթադրվող տարածաշրջանային սանիտարական աղբավայրեր

Սպասարկման տարածք	Աղբավայրի տեղակայման վայրը	Քսան տարվա տարողություն (միլլ տոննա)	Անհրաժեշտ տարածք (հեկտար)	ընդհանուր
Շիրակի մարզ	Գյումրիի տարածք	1.1	17	
Լոռու մարզ	Լոռու մարզի	1.3	20	

Տավուշի մարզ	Վանաձորի տարածք		
Կոտայքի մարզ Գեղարքունիքի մարզ	Կոտայքի մարզի Հրազդանը	1.5	23
Արագածոտնի մարզ Արմավիրի մարզ Արարատի մարզ Վայոց Ձորի մարզ	Նուբարաշենի աղբավայր /Երևան/	8.0 /ներառյալ Երևան քաղաքից եկող թափոնները/	Նուբարաշենում գոյություն ունեցող ընդլայնված և թարմացված աղբավայրը
Սյունիքի մարզ	Կապանի տարածք	0.5	10

Ապագայում, մինչև պլանավորման ժամկետի ավարտը կհիմնադրվեն ԿԿԹ-ի համար աղբավայրի բջիջներ՝ յուրաքանչյուրը 3 տարվա տարողունակությամբ:

Այն գյուղական վայրերում, որտեղ գյուղերը հասանելի են մեծ տարողությամբ խտացնող մեքենաների համար, թափոնների հավաքումը կիրականացվի այնպես, ինչպես քաղաքներում, օգտագործելով փողոցներում տեղադրված 700 լիտր տարողությամբ ստանդարտ կոնտեյներները և խտացնող բեռնատար մեքենաները: Սակայն, հավաքման հաճախությունն ավելի ցածր կլինի գյուղական վայրերում, քան քաղաքներում /ենթադրվում է՝ շաբաթը մեկ անգամ/:

Այն գյուղական շրջաններում, որտեղ խտացնող մեծ բեռնատար մեքենաները չեն կարող հասնել կամ որտեղ ճանապարհները վատ վիճակում են, առաջարկվում է <<գյուղերում հավաքման կետեր>> մոտեցումը՝ գյուղի աղբանոցները և այլ անհարիր պրակտիկան, ինչպես օրինակ, բաց այրումը կամ թափոնների անկանոն դատարկումը աստիճանաբար կրճատելու համար:

Գյուղի թափոնների հավաքման կետը բաղկացած կլինի ճանապարհի եզրին գտնվող, ցանկապատված տարածքից, որտեղ կ5 խորանարդ մետր կոնտեյներներ, որոնք կդատարկվեն մեծ տարողությամբ խտացնող բեռնատար մեքենաներով՝ թափոնները սանիտարական աղբավայր կամ փոխանցման կայաններ տեղափոխելու համար: Գյուղերում հավաքման կետերը պետք է տեղակայվեն խտացնող մեքենաներին հարմար՝ հիմնական ճանապարհին հարակից: Տեղում հավաքման մեքենաները /փոքր բեռնատար մեքենաներ և/կամ տրակտորներ/ կարող են գյուղերում թափոնները հավաքել և տեղափոխել գյուղերի հավաքման կետեր:

Կոնտեյներները կտեղադրվեն այնպես, որ խտացնող մեքենան կարողանա ետ գնալ և դրանք հատ-հատ դատարկել: Նույն բեռնատար մեքենան կօգտագործվի որպես գյուղում հավաքման մեքենա, թափոնները դատարկելիս, սովորաբար ձեռքով:

Յուրաքանչյուր հավաքման կետի համար պետք կլինի նախագիծ, որը հարմարեցված կլինի տեղանքի ձևին և ներառվող կոնտեյներների քանակին

համապատասխան: Սովորական հավաքման կետը կներառի 6 կոնտեյներներ մոտավորապես 200 քառակուսի մետր տարածքում :

Ենթադրվում է, որ հավաքման կետից օգտվող գյուղական շրջաններում թափոնների հավաքումն ու տեղափոխումը դեպի գյուղերում հավաքման կետեր կկազմակերպվի համայնքային մակարդակով, մինչդեռ միջքաղաքային կազմակերպություն կամ համաձայնագիր կհաստատվի, որով թափոնները կտեղափոխվեն գյուղի հավաքման կետերից, փոխանցման կայաններից և սանիտարական աղբավայրից:

Աշխատանքներ կտարվեն, որպեսզի տեղում թափոնների օգտահանման ծրագրերի միջոցով դեպի աղբավայր տարվող թափոնների քանակը նվազագույնի հասցվի: Կարող են նաև լինել տեղական համայնքներ կամ համայնքների խմբեր, որտեղ մեկ աղբանոց կարող է բարելավվել և այն բավարար կդառնա շահագործումը շարունակելու համար, թեև լիարժեք սանիտարական ստանդարտներից ցածր: Սա այլընտրանք է գյուղերի հավաքման կետերից տեղափոխմանը, մասնավորապես այնտեղ, ուր կարող են լինել հեռավորության, ճանապարհային պայմանների և եղանակային խոչընդոտներ: Դրամաշնորհային միջոցներով նմանատիպ նախաձեռնությունները ֆինանսավորելու համար խորհուրդ է տրվում ստեղծել ազգային ֆինանսական մեխանիզմ:

Այս համակարգը զարգացնելու համար հատկացվող ռեսուրսները նաև պետք է հատկացվեն գոյություն ունեցող պաշտոնական և ոչ պաշտոնական աղբավայրերի համակարգված փակման համար, որը հիմնականում ներառում է աղբի և ծավալուն թափոնների մեկանգամյա մաքրում/ հեռացում, որից հետո կիրականացվի զննում և դրենաժիսկողության հիմնական միջոցառումներ:

Գյուղերում հավաքման կետերի անհրաժեշտությունը կարող է տարբեր լինի մեկ շրջանից մյուսը, կախված գյուղի չափերից և ճանապարհային պայմաններից: Իրականացումը պետք է համակարգվի համայնքներում թափոնների հավաքման հիմնման հետ և, ի թիվս այլոց, պետք է հաշվի առնվի պլանավորված ճանապարհների բարելավումը:

Գյուղական շրջաններից մնացած թափոնները հավաքվում և անմիջապես ուղարկվում են տարածաշրջանային սանիտարական աղբավայր կամ փոխանցման կայան, իսկ այնտեղից՝ դեպի տարածաշրջանային աղբավայր:

Գյուղական շրջաններում թափոնների առաջացման փոքր չափի և քաղաքների հետ համեմատած վերամշակվելիք նյութերի հավաքման համար ավելի շատ ծախսերի պատճառով, ենթադրվում է, որ պլանավորման ժամանակահատվածում գյուղական շրջաններում ներդրված չէ վերամշակվելիք նյութերի հավաքման համակարգ:

1.5 Թափոնների կառավարման պլանի նպատակը և խնդիրները

Նպատակը

- Իրականացնել թափոնների կառավարման պլանի ՌԷԳ գործընթաց համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին >> ՀՀ օրենքի:
- Վեր հանել թափոնների ծրագրի հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, և առաջարկել լուծումներ դրանց կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված:
- Գործընթացի ամենավաղ փուլերից սկսած հանրությանը ներգրավել թափոնների ծրագրի ՌԷԳ գործընթացում, հաշվի առնել հանրության կարծիքը:
- Պետական կառավարման մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին թափոնների փորձնական ծրագրի օրինակով ծանոթացնել ՌԷԳ գործընթացի օգուտներին և իրականացման անհրաժեշտությունը:

Խնդիրները

- Հանրապետությունում չկա թափոնների տեսակավորման համակարգ:
 - Գրեթե բոլոր կարգի թափոնները առանց տեսակավորման հեռացվում են կենցաղային թափոնների աղբավայր:
 - Գոյություն ունեցող աղբավայրերը չեն համապատասխանում սահմանված չափորոշիչներին:
 - ՌԷԳ կարգավորող Օրենսդրական դաշտը ամբողջովին չի արտացոլում ՌԷԳ արձանագրության պահանջները, հատկապես առողջապահական ոլորտում:
 - Հանրապետությունում չկան ոլորտի կարգավորման մեթոդական ձեռնարկներ, որոնք գործընթացի մասնակիցներին կօգնեն առավել հեշտությամբ հաղթահարել ծառացած դժվարությունները՝ ՌԷԳ իրականացման գործընթացում:
 - Հայաստանում չկա ոլորտին վերաբերող տվյալների և տեղեկատվության միասնական համակարգ, ինչը դյուրին կդարձնի, և ժամանակի առումով կհեշտացնի գործընթացի իրականացումը: /լրացնել ճյուղային փորձագետների առաջարկով/:
- Աղբավայրերի տեղակայման վայրերը կլինեն բնակավայրերից նվազագույնը 500մ հեռավորության վրա և կսահմանվի սանիտարական գոտի:

- Գյուղատնտեսական հողերը և անտառները չեն օգտագործվի որպես աղբավայրեր:
- Նախընտրելի կհամարվեն այն տարածքները, որտեղ ստորերկրյա ջրերը կգտնվեն 2մ խորության վրա:
- Աղբավայրերը կտեղակայվեն օդանավակայաններից 15կմ հեռավորության վրա:
- Աղբավայրերի տարածքների օգտագործման ժամկետը կսահմանվի 25 տարի:
- Ստորին միջնաշերտը պետք է լինի ոչ պակաս քան 0.5մ խորը հոսող ջրի նորմայով ոչ ավել քան 105սմ/վ. (0.0086 մ/օրը) /սահմանվում է կավահողի բնական վիճակով/: Այն դեպքում, եթե հոսող ջրի նորման գերազանցում է 105սմ/վ. պետք է տեղադրվի արհեստական թաղանթ:
- Տարածքների ընտրության համար նախաընտրելի լինեն դեգրադացված տարածքները
- Այնպիսի կլիմայական պայմաններում, որտեղ խոնավությունը չի գերազանցում 52% և տարեկան անձրևների քանակը ավելի քիչ է, քան 100մմ, ջրաթափանց շերտ տեղադրելու կարիք չկա:

1.6 Թափոնների կառավարման պլանի հիմնական շահագրգիռ կողմերը

<i>Շահագրգիռ կողմ (հաստատություն/պատասխանատու)</i>	<i>Հետաքրքրություն/մտահոգություն</i>
<i>ՀՀ կառավարություն</i>	<i>Թափոնների ոլորտի քաղաքականության վարում</i>
<i>ՀՀ բնապահպանության նախարարություն</i>	<p><i>1. Թափոնների կառավարման պլանի նախնական գնահատման հայտի փորձաքննություն և տեխնիկական առաջադրանքի տրամադրում /30-աշխատանքային օրյա ժամկետում/:</i></p> <p><i>2. Թափոնների կառավարման պլանի /ներառյալ ՌԷԳ/ վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության եզրակացության տրամադրում 60-աշխատանքային օր/:</i></p> <p><i>3. Մասնակցություն փորձաքննության</i></p>

	փուլերում իրականացվող հանրային քննարկումներին:
ՀՀ առողջապահության նախարարություն	Թափոնների ոլորտին վերաբերող մարդու առողջության անվտանգության պահանջների մշակում: Պլանի վերաբերյալ եզրակացության, կարծիքի տրամադրում՝ մարդու առողջության հետ կապված աղտոտվածությունների /օդ, ջուր, հող/ և բնակելի տարածքների սանիտարական պաշտպանության առումով:
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:	Պլանի իրականացման պատասխանատվություն: ՌԷԳ առաջարկությունների հիման վրա Թափոնների կառավարման պլանի լրամշակում, փոփոխությունների իրականացում:
ՀՀ տարածքային կառավարման մարմիններ որոնք համաձայն համարվում են քննարկումների պատասխանատուներ: 1. Շիրակի մարզպետ /մարզպետարաններ/ 2. Լոռու մարզպետ 3. Սյունիքի մարզպետ. 4. Գոտայքի մարզպետ 5. Երևանի քաղաքապետ	Մասնակցություն իրենց տարածքներում Պլանի իրականացմանը: Պատասխանատվություն հանրության իրազեկման, քննարկումների կազմակերպման համար: Համաձայն ՀՀ կառավարության <<Հանրային ծանուցման և քննարկումների կազմակերպման>>1325-Ն որոշման
Տեղական ինքնակառավարման մարմիններ: Համայնքների անվանումները պարզ կլինի տարածքի ընտրությունից հետո, այս փուլում ազդակիր համայնքները հնարավոր չէ ճշտել, կճշտվի առանձին ՇՄԱԳ-ի փուլում:	Մասնակցություն իրենց տարածքներում Պլանի իրականացմանը: Հետագա փուլերում /ՇՄԱԳ/ պատասխանատվություն հանրության իրազեկման, քննարկումների կազմակերպման համար:

<p><i>ՀԿ, հանրություն</i></p> <p><i>համաձայն ՀՀ կառավարության << Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը >> 1325-Ն որոշման ձեռնարկողի, մարզպետարանի կողմից իրականացվում է ծանուցում՝ ՀՀ պաշտոնաթերթի, էլեկտրոնային փոստերի, ազդակի համայնքներում /մարզպետարաններում/ հայտարարությունների ձևով:</i></p> <p><i>Առանձին հրավերներ չեն ուղղարկվում, բոլոր ցանկացողները մասնակցում են ազատ հիմունքներով, վերը նշված կարգում նախատեսված են նաև ժամկետներ գրավոր առաջարկությունների ներկայացման համար:</i></p>	<p><i>Մասնակցություն պլանի վերաբերյալ հանրային քննարկումներին, կարծիքի, առաջարկությունների ներկայացում:</i></p>
--	---

2. ՋՈՒՐ

2.1. Նախնական վերլուծություն

Հաշվի առնելով երկրում առկա բոլոր ջրային ռեսուրսները՝ Հայաստանն ունի բավարար պաշար մեկ շնչի հաշվով տարեկան մոտավորապես 3,100 խորանարդ մետր ջուր մատակարարելու համար: Հայաստանի բոլոր գետերը Արաքս և Քուռ գետերի վտակներ են հանդիսանում: Գետերի մեծ մասը փոքր են, արագահոս, սնուցվում են հալոցքաջրերով, աղբյուրներով և ստորերկրյա ջրերով: Ընդհանուր գետային հոսքը (երկրում ձևավորվող) գնահատվում է 6.8 միլիարդ խորանարդ մետր: Այս ջրային ռեսուրսները հավասարապես բաշխված չեն, և աչքի են ընկնում զգալի սեզոնային ու տարեկան տատանմամբ: Ջրային ռեսուրսները սակավ են հատկապես խիտ բնակեցված Հրազդան գետի ավազանում՝ երկրի կենտրոնական հատվածում: Քարտեզ 1-ը (Հավելված 1) և ստորև բերված Աղյուսակ 3-ը ներկայացնում են ջրավազանային կառավարման վեց տարածքները (ՋԿՏ), որոնք ներառում են 14 խոշոր գետավազաններ և գործում են համապատասխան Ջրավազանային կառավարման բաժինների (ՋԿԲ) կողմից (տես Աղյուսակ 3):

**Աղյուսակ 3.Ջրավազանային կառավարման բաժինները (ԶԿԲ)և գետավազանները
Հայաստանում**

ԱԿԲ	Գետավազան	Տարածք (կմ ²)	Գետի հոսքը (ՄխՄ/տարեկան) ¹
Հյուսիսային ԶԿԲ	Դեբեդ	3,895	1,203
	Աղստև	2,480	445
	Քուրի վտակներ	810	199
Հրազդանի ԶԿԲ	Քասախ	1,480	329
	Հրազդան	2,565	733
Սևանի ԶԿԲ	Սևանա լիճ	4,750	265
Արարատյան ԶԿԲ	Ազատ	952	232
	Վեդի	998	110
	Արփա	2,301	764
Ախուրյանի ԶԿԲ	Ախուրյան	2,784	391
	Մեծամոր	2,240	711
Հարավային ԶԿԲ	Որոտան	2,476	725
	Ողջի	1,341	502
	Մեղրիգետ	664	166
Ընդամենը՝			6,775

Աղբյուրը:ԱՄՆ ՄԶԳ, 2008:

Գոյություն ունի նաև գետերի հոսքի զգալի սեզոնային և տարեկան տատանողականություն, այդ թվում՝ հաճախակի երաշտների և ջրհեղեղների ռիսկ գարնանը, երբ տարեկան ընդհանուր հոսքի մոտավորապես 55 տոկոսը տեղի է ունենում առավելագույն ձնհալի շրջանում: Առավելագույն ու նվազագույն հոսքի հարաբերակցությունը կարող է հասնել 10:1 (Բնապահպանության նախարարություն, 2010):


Սևանա լիճը՝ քաղցրահամ ջրի ամենամեծ պաշարըՀայաստանում, (մոտ 35 միլիարդ խորանարդ մետր), կարևոր բազմանպատակային ջրամբար է ոռոգման, հիդրոէներգետիկ և ռեկրեացիոն օգտագործման համար և հանդիսանում է աշխարհի ամենախոշոր բարձրադիր լճերից մեկը: Լիճ են լցվում 28 գետ ու գետակներ և սկիզբ է առնում Հրազդան գետը: 1930-ականներից սկսած լճի արտահոսքը արհեստականորեն կարգավորվել է ոռոգման և Սևան- Հրազդան հիդրոէլեկտրակայանների կասկադի նպատակներով: 1930-1980-ականներին

¹ՄխՄ = միլիոն խորանարդ մետր:

գերօգտագործման պատճառով Սևանա լճի մակարդակը զգալիորեն իջավ՝ հանգեցնելով լուրջ բնապահպանական ու էկոլոգիական խնդիրների, այդ թվում ջրի որակի վատթարացման, բնական միջավայրի ոչնչացման և կենսաբազմազանության կորստի: 1980-ական թվականներից սկսած նախաձեռնվեցին լճի մակարդակի կայունացման և բարձրացման ծրագրեր: Սա ներառեց Արփա-Սևան եւ Որոտան-Արփա թունելների կառուցումը, որոնք համապատասխանաբար մինչև 250 և 165 միլիոն խորանարդ մետր (ՄԽՄ) ջուր են տեղափոխում, նաև ջրառի սահմանափակումը տարեկան մինչև 170 միլիոն խորանարդ մետրի: Որպես արդյունք, 2001 թվականից ի վեր Սևանա լճի մակարդակը շարունակաբար բարձրանում է: Այնուամենայնիվ, լուրջ խնդիր է մնում լճում ձկան գերորսը:

Հայաստանն ունի ստորերկրյա ջրերի զգալի պաշար, ինչը կարևոր դեր ունի ընդհանուր ջրային հաշվեկշռում: Խմելու ջրի մոտ 96 տոկոսը և ընդհանուր ջրառի շուրջ 40 տոկոսը կազմում են ստորերկրյա ջրերը: (Գծապատկեր 1) (ԱԶԲ, 2011):

Գծապատկեր 1. Ջրառն ըստ աղբյուրների, 1995-2012




Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

Ներկայում ստորերկրյա ռեսուրսների առկայության և որակի մասին տեղեկությունը սահմանափակվում է մոնիտորինգի անբավարարության պատճառով: Խորհրդային Միության փլուզումից հետո ստորերկրյա ջրերի մոնիտորինգը դադարեցվել էր ավելի քան 20 տարովն վերսկսվել է միայն վերջին 4-5 տարիների ընթացքում: Իսկ 1980-ականներին իրականացված վերջին համազգային գնահատման համաձայն, ստորերկրյա ջրային ռեսուրսների, ընդհանուր ծավալը կազմում է տարեկան 4.0 մլրդ խորանարդ մետր, որից 1.6 մլրդ խորանարդ մետրը աղբյուրների հոսքն է, 1.4 մլրդ խորանարդ մետր՝ դրենաժային հոսքը, և 1.0 միլիարդ խորանարդ մետր՝ խորքային հոսքը:

Գծապատկեր 2-ը ցույց է տալիս ջրի սպառումն ըստ ջրօգտագործման ոլորտների, առանց վերամշակված ջրի սպառման կամ կեղտաջրերի և կոյուղաջրերի կրկնակի օգտագործման: Ջրի սպառումը տատանվել է Ժամանակի ընթացքում, սակայն, ոռոգումը շարունակում է մնալ խոշորագույն սպառողը:


Գծապատկեր 2. Ջրի սպառումն ըստ տնտեսության ոլորտների



Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

Արարատյան դաշտը հարուստ է բարձր որակի արտեզյան ստորերկրյա ջրերով, որոնք կարող են առանց լրացուցիչ մշակման ծառայել որպես խմելու ջուր և ներկայացնում են երկրի խմելու ջրի ռազմավարական պաշարը: Այս ռեսուրսը պատմականորեն օգտագործվել է խմելու և ոռոգման նպատակներով: 2006թ.-ից սկսած Արարատյան դաշտում բարձրորակ ստորերկրյա արտեզյան ջրերի հարուստ պաշարների առկայության ու ցածր արժեքի պատճառով հիմնվեցին մեծ քանակությամբ ձկնաբուծարաններ, որոնք դարձան խոշոր ջրօգտագործողներից մեկը: ձկնաբուծությունը ներառվել է 2008թ.-ի առաջնահերթ զարգացման ծրագրերի ցանկում, ինչի հետևանքով ձկնաբուծարանների համար ավելի շատ ջրօգտագործման թույլտվություններ են տրամադրվել՝ գերազանցելով ստորերկրյա ջրային ռեսուրսների վերականգնվող մակարդակը, որը սահմանված է Ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենքի (2006) 6-րդ հոդվածով: 2013թ.-ի ստորերկրյա ջրերի օգտագործումը միայն ձկնաբուծական տնտեսությունների կողմից գերազանցել է կայուն մակարդակը (Գծապատկեր 3): Որոշ դեպքերում, ձկնաբուծարանները ջրօգտագործման թույլտվությամբ (ՋԹ) սահմանվածից ավելի շատ ջուր են սպառում: Բացի այդ, կան ապօրինի հորեր, որոնք գործում են առանց ՋԹ-ների: Ստորերկրյա ջրային ռեսուրսների գերսպառման արդյունքում արտեզյան ստորերկրյա պաշարները կտրուկ նվազել են և փոքրացել է արտեզյան ստորերկրյա ջրային գոտին:

Գծապատկեր 3. Արարատյան դաշտում գործող հորերի ջրի էլքը 2007-ին և 2013-ին




Աղբյուրը: ՄՄՆ ՄԶԳ 2014.

Նշում. «Այլ նպատակները» ներառում են ոռոգումը, խմելու և արդյունաբերական ջրի օգտագործումը:

Կենցաղային ջրի սպառումը, ինչը ոռոգումից հետո ջուր օգտագործող երկրորդ խոշոր ոլորտն էր, խիստ նվազել է 1990-ականներին (Գծապատկեր 4): Այս զգալի անկումը վերագրվում է ջրաչափերի ներդրմանը և սպառված ջրի ծավալի հիման վրա վարձավճարների գանձման համակարգի ներդրմանը:

Գծապատկեր 4. Կենցաղային հատվածում ջրի սպառումը




Վերջին տասնամյակում ջրի մատակարարումը Հայաստանում զգալիորեն բարելավվել է պետական – մասնավոր համագործակցության բարելավման արդյունքում: Հաջողություն է գրանցվել հատկապես ջրի մատակարարման

տնտեսության բարելավման, ջրաչափերի տեղադրման և վճարումների գանձման արդյունավետության առումով: Թեև վճարների հավաքագրման մակարդակը բարձր է, սակագինը շարունակում է մնալ ցածր, ինչը թույլ չի տալիս նույնիսկ ֆինանսավորել ամենօրյա աշխատանքի, պահպանման և ներդրումային ծախսերը:

Ավելին, ջրի մատակարարման զգալի առաջընթացին զուգահեռ ջրահեռացման զարգացումը դեռևս հետ է մնում: Կեղտաջրերի հավաքման եւ մշակման համակարգերը բավարար և գործառնական չեն, և կեղտաջրերը հաճախ ուղղակիորեն հոսում են դեպի ջրային մարմիններ կամ հող՝ հանգեցնելով ոչ հիգիենիկ պայմանների և ջրի որակի խնդիրների: Ներկայումս, բնակչության 68 տոկոսը (2 միլիոն, հիմնականում քաղաքային բնակչությունը) միացված է կոյուղու ցանցին:

Երկրում ջրի որակի անկման հետ կապված մտահոգությունները աճում են: Աղտոտող նյութերը ջուր են լցվում տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ արտադրական ու հանքարդյունաբերական ձեռնարկություններից, գյուղատնտեսական հողերից, գյուղական համայնքների տնային ու ֆերմերային տնտեսություններից, և, հատկապես, կոյուղաջրերի համակարգերից՝ քաղաքային համայնքներում: 2008-ից 2012-ին ընդհանուր կեղտաջրերի ծավալը կրկնապատկվել է (375 մլն-ից 813 ՄԽՄ մեկ տարվա ընթացքում), իսկ չմաքրվող արտահոսքի ցուցանիշը աճել է յոթ անգամ (42 մլն-ից 307 ՄԽՄ մեկ տարվա ընթացքում) (Գծապատկեր 5): Այս աճի որոշ մասը կարելի է վերագրել չափումների բարելավմանը և ձկնաբուծարաններից իրականացվող ջրահեռացման աճին: Երկրում առկա են կեղտաջրերի մաքրման կայաններ, որոնք կառուցվել են 1990-ական թվականներից առաջ և պատշաճ կերպով չեն շահագործվում. դրանք կամ չեն գործում կամ մասնակիորեն են գործում՝ իրականացնելով միայն մեխանիկական մաքրում, իսկ կեղտաջրերի կենսաբանական և քիմիական մաքրում չի իրականացվում: Կեղտաջրերի մաքրման կայանների վերականգնման և արդիականացման, ինչպես նաև դրանք գյուղական բնակավայրեր ևս հասցնելու համար խոշոր ներդրումների անհրաժեշտություն կա: (ԱԶԲ 2011, Համաշխարհային բանկ, 2011):

Գծապատկեր 5. Կեղտաջրերի հեռացումը.



Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

2.2. Համապատասխան ռազմավարական փաստաթղթերը

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում բարեփոխումները նախաձեռնվել են 1999-2000-ականներին Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում» ծրագրի միջոցով: Վերջինիս իրականացման արդյունքում Հայաստանի կառավարությունը երկրի ջրային ոլորտի բարելավմանը, դաշտի իրավական ու ինստիտուցիոնալ շրջանակի վերանայմանն ուղղված ծրագիր նախաձեռնեց: :

Նոր Ջրային օրենսգիրքը, որն ընդունվել է 2002թ.-ի հունիսի 4-ին, ամենակարևոր քայլերից էր, որն ուղղված էր ջրային ոլորտի բարելավմանը: Սույն օրենսգրքի հիմնական նպատակը ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև սույն օրենսգրքի հետևյալ խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը.

- ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծումը,
- ջրային ռեսուրսների պահպանումն ու պաշտպանությունը՝ ապահովելով աղտոտման նվազեցումը, ջրերի ստանդարտների ու ազգային ջրային պաշարի մակարդակի պահպանումն ու վերահսկողության իրականացումը,
- ջրերի վնասակար ներգործության կանխարգելումը,
- ջրային ռեսուրսների հաշվառման ապահովումը,

- բնակչությանն ու տնտեսությանը կարգավորվող սակագներով անհրաժեշտ քանակի և որակի ջրով ապահովումը,
- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անվտանգ ու անխափան աշխատանքը և դրանց շահագործման ու պահպանման բնականոն պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը,
- ՀՏԿ-ների անվտանգ և անխափան օգտագործման ու պահպանման պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը,
- ջրային համակարգերի կառավարման կազմակերպումը, պահպանումը և զարգացումը:

Ջրային օրենսգրքից հետո՝ 2005թ.-ին, ընդունվեց *Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին օրենքը*: Այս օրենքը ավելի լայն սահմանում և հստակեցնում է հիմնական դրույթները, այդ թվում՝ սահմանում է ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանման գերակայությունները, հաստատում է պահանջարկի ու ջրային ռեսուրսների գնահատման ընթացակարգը, ուրվագծում է ջրային քաղաքականության լրացուցիչ սկզբունքները (որոնք չեն սահմանվում Ջրային օրենսգրքով) և շեշտադրում է ջրավազանային կառավարման պլանների կարևորությունը:

Սույն օրենքի նպատակը ներկայում և ապագայում մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է:

2006թ.-ին ընդունվեց *Ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենքը*: Այս օրենքը շարունակում է հստակեցնել տարբեր հարցեր, այդ թվում՝ «պաշարների» տարբեր տեսակների սահմանում, ջրային համակարգերի դասակարգում և Պետական նշանակություն ունեցողների բացահայտում, ջրի պահանջարկի և առաջարկի գնահատում, ջրային ռեսուրսների պահպանման, բաշխման եւ օգտագործման ռազմավարության մշակում, ջրային տարբեր ենթաճյուղերի տարանջատում (օրինակ, ջրամատակարարում և ջրահեռացում, ոռոգում, հիդրոէներգետիկա), ջրի ստանդարտների մշակում և ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավում: Ծրագրի ընդհանուր նպատակն է օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բնակչության և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ռազմավարական ջրային պաշարի ձևավորման և օգտագործման, ազգային ջրային պաշարի պահպանությունը: Մշակվել են Ջրի ազգային ծրագրի իրականացման համար

կարճաժամկետ (մինչև 2010 թ.), միջնաժամկետ (2010-15), և երկարաժամկետ (2015-21) միջոցառումներ:

Վերջին տասնամյակում Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել ջրային ռեսուրսների կառավարման բարելավված համակարգի համար ինստիտուցիոնալ և իրավական շրջանակ հիմնելու գործում: Հայաստանում ջրային բարեփոխումների երկրորդ սերունդը նպատակ ունի ապահովել ներդաշնակեցումը ԵՄ ջրային օրենսդրության հետ և, մասնավորապես, կիրառել ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի մոտեցումները: ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվը և ջրի կառավարմանն ու գետավազանային պլանավորմանն ուղղված մեթոդաբանությունները որպես ուղեցույց են ընդունվել երկրում ջրային ռեսուրսների կառավարման համար:

Ջրի ազգային ծրագիրը (հոդված 24) վերաբերում է ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերին ու ջրի որակի ապահովման նորմերին: Համաձայն այս հոդվածի, ջրի որակի ապահովման նորմերը սահմանվում են՝ էլեկտրաառողջապահական, ինչպես նաև ջրային ռեսուրսների դեգրադացումը, հյուծումը, աղտոտումը կանխելու, բնապահպանական թողքերը ապահովելու պահանջներից: Միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ջրի ստանդարտները պետք է ներառեն բոլոր հավանական աղտոտող նյութերի թույլատրելի սահմանները և դրանց նվազեցման ցուցանիշներն ըստ տարիների::

ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվը մոնիտորինգի չափանիշների ու արձանագրությունների ներդրման շարժիչ ուժն է: <<Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի գործողությունների կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 743-Ա որոշումը (29.04.2004) ազգային ու ԵՄ օրենսդրության ներդաշնակեցման հիմքն է:

Ջրային օրենսգրքի 8-8րդ գլխի համաձայն, ՋՌԿԳ-ն պետք է սահմանի ջրի որակի ստանդարտներ՝ մակերևութային և ստորերկրյա ջրերի որակը պահպանելու համար:: Օրենսգրքի համաձայն, այս ստանդարտները պետք է պարբերաբար վերանայվեն և և ներառվեն Ջրի ազգային ծրագրի մեջ: ՋՌԿԳ կարող է սահմանել ջրօգտագործման թույլտվությամբ նախատեսվող եղտաջրերի արտանետումների չափաքանակները: Եթե ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ստանդարտներին հնարավոր չէ հասնել, ապա ջրօգտագործման թույլտվություն ունեցող անձը Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին է ներկայացնում առաջիկա 5 տարիների համար իրավաբանորեն պարտադիր գործողությունների աստիճանական բարելավման պլան, որը հանդիսանում է ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մասը:

«Ջրի որակի ստանդարտների մշակումը և կիրարկումը» ամենակարևոր հարցերից է, որ ներառված է ՋԱԾ Միջոցառումների փուլային ծրագրում (ՄՓԾ): Որպես կարճաժամկետ միջոցառում ՋԱԾ-ը ենթադրում է, «միջազգայնորեն ընդունելի մեթոդաբանության ներդրում՝ սահմանելու համար այն նորմերը, որոնք կսահմանափակեն ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա և այն ստանդարտները, որոնք կապահովեն ջրերի որակը՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը: Որպես միջնաժամկետ միջոցառում ՄՓԾ-ի թիրախում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող և ջրի որակը երաշխավորող նորմերի մշակումն ու ընդունումն է: Այն նաև ներառում է ջրավազանային կառավարման տարածքներում ջրի որակի ստանդարտների տեղայնացման հնարավորությունների ուսումնասիրությունը: Երկարաժամկետ միջոցառումները ներառում են. ա) Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ու ջրի որակը երաշխավորող ստանդարտների կիրարկումը, բ) ավազանային կառավարման տարածքների մակարդակով ջրի որակի ստանդարտների ընդունումը:

ՀՀ նոր Ջրային օրենսգրքի պատշաճ կիրառումը երաշխավորելու համար՝ 2002թ. ի վեր մի շարք նոր օրենքներ ու ավելի քան 120 ենթաօրենսդրական ակտեր են ընդունվել, որոնք վերաբերում են ջրօգտագործման թույլտվությունների տրամադրմանը, գետավազանային կառավարմանը, որոշումների կայացման գործընթացներում թափանցիկությանն ու հանրային մասնակցությանը, տեղեկատվության հասանելիությանը, պետական ջրային կադաստրի հիմնմանը, ջրային ռեսուրսների մոնիտորինգի ձևավորմանը, անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարմանը և այլն:

Կարգավորող հիմնական փաստաթղթերը ներառում են.

- և «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությանը հավանություն տալու մասին», 2011թ. փետրվարի 3-ի ՀՀ կառավարության արձանագրային որոշում, որը 14 հիմնական գետավազանների համար մշակվելիք Գետավազանային կառավարման պլանների (ԳԿՊ) բովանդակությանն ու տեխնիկական բնութագրերին ֆորմալ կարգավիճակ տվեց: Լթյունն:
- 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշումը ընդունեց գետավազանների մակերևութային ջրերի որակի ստանդարտներն ու ջրի որակի դասակարգումը՝ հաշվի առնելով ֆոնային կոնցենտրացիաները և յուրաքանչյուր գետավազանի առանձնահատկությունները: Որոշումը սահմանեց քիմիական մակերևութային ջրի որակի հինգ դաս՝ բարձր, լավ,

միջին, բավարար և վատ: Յուրաքանչյուր դասի համար հատուկ որակի նորմերը սահմանված են՝ ըստ, ընդհանուր առմամբ, 117 չափանիշների:

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային» (Ջրային կոնվենցիա) կից «Ջուր և առողջություն» արձանագրությունը 1999թ. հունիսի 17-ին, Լոնդոնում: Վավերացման գործընթացը սկսված է:

Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան (Արհուսի կոնվենցիա) 2001թ. մայիսի 14-ին:

2.3. Բնապահպանական ու առողջապահական քաղաքականության նպատակները

1. Մեծ քաղաքներում կեղտաջրերի չկարգավորվող հոսքի նվազում (Ձևակերպվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա. Ջրի ազգային ծրագիր ու «Հայաստանի Հանրապետությունում Ջուր և առողջություն արձանագրության շրջանակում թիրախների ու թիրախային ժամկետների սահմանում»²)
2. Հայաստանում ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիտորինգի համակարգի վերականգնում:
(Ձևակերպվել է հետևյալ փաստաթղթի հիման վրա. Ջրի ազգային ծրագրի կարճաժամկետ միջոցառումներ)
3. Ջրային էկոհամակարգերի վրա բացասական ազդեցության կանխում, ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավում, աղտոտման կանխում:
(Ձևակերպվել է հետևյալ փաստաթղթի հիման վրա. Ջրի ազգային ծրագիր)

²Թիրախը հիմնված է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային» (Ջրային կոնվենցիա) կից «Ջուր և առողջություն» արձանագրության հոդված 6,2-ի վրա, որը Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 1999թ. հունիսի 17-ին, բայց դեռևս չի վավերացրել:

4. Էկոլոգիան ազդեցության գնահատման չափանիշների ու ուղեցույցի մշակում՝ որպես ջրօգտագործման թույլտվությունների գործընթացի մաս, այն դեպքերում, երբ տվյալ ջրօգտագործման արդյունքում հնարավոր է զգալի ազդեցություն շրջակա միջավայրի վրա:

(Ձևակերպվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա. Ջրի ազգային ծրագիր և, «Ըստ Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների՝ խմելու-կենցաղային, գյուղատնտեսական նպատակներով ջրի պահանջարկի, ինչպես նաև բնապահպանական թողքերի գնահատումը սահմանելու մասին» 2011 թ. հունիսի 30-ի 927-Ն Կառավարության որոշում):

5. Հանրային իրազեկության և մասնակցության խթանում ջրային ռեսուրսների կառավարման գործընթացներում (այդ թվում՝ համայնքային կոշտ թափոնների ոչ պատշաճ կամ ապօրինի աղբավայրեր կամ գետեր լցնելու հետևանքով առաջացած ջրի որակի խնդիրների շուրջ):

(Ձևակերպվել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա. Ջրի ազգային ծրագիր և Օրհուսի կոնվենցիա):

2.4. ՋԿՊ շրջանակներում ՌԷԳ կողմից հասցեագրվող հիմնական խնդիրները

Հիմնական խնդիրներ	Առանձնահատուկ մտահոգություններ ու խնդիրներ	Մտահոգության աշխարհագրական տարածքը	Թափոնների կառավարման պլանի հետ հնարավոր կապը
Ջուր և ստորերկրյա ջրեր	Կեղտաջրերի մաքրումը կիրառվում է սահմանափակ տարածքներում, կիրառվում է միայն մեխանիկական մաքրում Մակերևութային ջրերի աղտոտում	Ազգային մակարդակ, սակայն ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի Արարատյան ավազանին ու Սևանա լճին	Միջազգային և / կամ ԵՄ ստանդարտներին համապատասխանող պատշաճ աղբավայրերի բացակայություն Ջրի հանդեպ հսկողություն և ֆիլտրատի կառավարում Աղբավայրի տարածքը որոշելիս պետք է հաշվի

	<p>տնային տնտեսություններից ու արդյունաբերությունից առաջացած քիմիական նյութերով</p> <p>Մակերևութային ջրերի մանրէաբանական աղտոտում</p> <p>Որոշ քաղաքներում կոյուղին միայն մասնակի կերպով է հասանելի (Երևան-96%, Գյումրի -50%, Վանաձոր-70%, Սիսիան-41%, Ալավերդի - 37%, Արարատ 38%, Արտաշատ-55%, Էջմիածին-62%, Գավառ-49%, Վարդենիս-48%, Սևան-58%)</p> <p>Աղբավայրերի բացակայության պատճառով կենցաղային թափոնները հայտնվում են գետերի ափերին՝ աղտոտելով մակերևութային ջրերը</p>		<p>առնել.</p> <ul style="list-style-type: none"> - Տարածքի հեռավորությունը բնակելի ու հանգստի գոտիներից, ջրային ուղիներից, և այլ գյուղատնտեսական կամ բնակեցված վայրերից - Ստորերկրյա ջրերի առկայությունը տարածքում <p>Որոշակի դասի աղբանոցի ընդունման չափանիշը պետք է հիմնվի շրջակա միջավայրի պահպանության վրա (մասնավորապես ստորերկրյա ու մակերևութային ջրերի);</p> <p>Աղբի տեսակավորման բացակայության հետևանքով քիմիական նյութերն, ինչպիսիք են ներկանյութերն ու այլ շինարարական նյութերը, ինչպես նաև դեղանյութերը աղտոտում են մակերևութային ջրերը և / կամ հոսում դեպի հող:</p>
--	--	--	--

3. ՀՈՂ և ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

3.1. Հայաստանի Հանրապետության հողերի Գծապատկերագրությունը (առկայությունը և շարժը)

Հայաստանում գրանցվել է քայքայված հողերի 640 հատված՝ 7530 հա ընդհանուր տարածքով, որից 3780-ը մինչև քայքայումը հանդիսանում էին գյուղատնտեսական հողատարածքներ [7]: Ընդհանուր առմամբ, հանրապետության 81.9%-ը կամ 24.353 կմ² ենթարկված է տարբեր աստիճանի անապատացման: Հարկ է նշել, որ հանրապետության հողերի 50%-ը էրոզացված է, մոտ 60%-ում արտահայտված են սողանքային և սելավային երևույթները, 40%-ը քարքարոտ տարածքներ են, աղակալած հողերը կազմում են մոտ 30.0 հազ.հա, տեխնածին աղտոտված հողերը՝ 90 հազ.-ից ավելի:

Հայաստանը խիստ սակավահող երկիր է. հողային ֆոնդը կազմում է ընդամենը 2.974.259 հա: 1 շնչին ընկնող հողային տարածքի ցուցանիշով (0,4 հա) ՀՀ-ն աշխարհում զբաղեցնում է վերջին տեղերից մեկը: Բուսականության, ռելիեֆի և կլիմայական պայմանների մեծ բազմազանության շնորհիվ այստեղ հանդիպում են հողերի 14 ծագումնաբանական տիպեր, որոնցից 7-ը գոտիական են, և որտեղ գերակշռում են լեռնային սևահողերը, շագանակագույն և կիսաանապատային գորշ հողերը (տարածքի 42,5 %-ը): Մյուս 7-ը միջգոտիական են, որտեղ գերակշռում են մարգագետնասևահողերը, գետահովտադարավանդային, ճահճային, մարգագետնային, աղուտ-ալկալի և ոռոգելի մարգագետնային հողերը (տարածքի 6%-ը) (աղյուսակ 4): Անտառային հողերն զբաղեցնում են 697 հզ. հա (հանրապետության տարածքի 22,4 %-ը), անտառածածկ տարածությունները՝ 334.2 հզ. հա (11,7 %):


Աղյուսակ 4, Բնահողային գոտիները և հողատիպերը [9]:*

Գոտիները	Մարզերը	Հողերի տիպերը	Տարածքը		Բարձրությունը ծ.մ. (մ)
			Հազ.հա	%	
Կիսաանապատային	Արագածոտն, Արարատ, Արմավիր, Կոտայք, Երևան	1.Կիսաանապատային գորշ 2.Ոռոգելի մարգագետնային գորշ 3.Պալեոհիդրոմորֆ կապակցված ակվալիացած 4.Աղուտ-ակվալի	152 53 2 29	5.8 2.0 0.1 1.1	850-1250
		Ընդամենը	236	9.0	
Չոր Տափաստանային	Արագածոտն, Արարատ, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր	Շագանակագույն	242	9.2	1250-1900
Տափաստանային	Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր, Շիրակ	Սևահող Մարգագետնա-սևահողային Գետահովտա-դարավանդային Հողագրունտներ	718 13 48 18	27.4 0.5 1.8 0.7	1300-2450
		Ընդամենը	797	30.4	
Անտառային	Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ	Անտառային գորշ Ճմակարբոնատային Դարչնագույն	133 15 564	5.2 0.6 21.6	500-2400
		Ընդամենը	712	27.4	

Լեռնա-Մարգագետնային	Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ	Լեռնամարգագետնային Մարգագետնա-տափաստանային	346 283	13.2 10.8	2200-4000
		Ընդամենը	629	24.0	
Ընդամենը			2616	100	

* 358.3 հազար հա՝ արմատական ապարների ելքեր են, ավազներ, ջրեր, ճանապարհներ և շինություններ:

Գծապատկեր 6: Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները



Հայաստանի հողային ռեսուրսների գերակշիռ մասն են կազմում գյուղատնտեսական նշանակության հողերը: Դրանց հաջորդում են անտառային, հատուկ պահպանվող տարածքների և բնակավայրերի հողերը: Չնչին մաս են կազմում պահուստային հողերը (աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Հայաստանի հողային ռեսուրսները, հազ.հա

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2015, %
Ընդհանուր հողային տարածքը, այդ թվում՝	297 4.3	297 4.3	297 4.3	297 4.3	297 4.3	297 4.3	297 4.3	297 4.3	297 4.3	297 4.3	2974.3	100
գյուղատնտեսական նշանակության հողեր	213 5.3	212 9.6	212 2.1	212 1.2	212 0.3	210 0.9	207 6.9	205 2.4	205 1.0	204 9.4	2045.7	68.8
բնակավայրերի հողեր	133. 9	150. 5	151. 0	151. 2	151. 6	152. 0	152. 2	151. 6	151. 7	151. 8	151.8	5.1
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	20.9	28.1	28.2	29.2	29.4	31.8	33.0	33.6	34.9	36.4	36.5	1.2
էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	9.1	11.9	12.1	12.2	12.4	12.5	12.8	12.5	12.6	12.6	12.6	0.4
հատուկ պահպանվող տարածքների հողեր	187. 8	220. 6	229. 3	229. 7	229. 9	249. 4	298. 0	331. 9	331. 7	331. 7	335.4	11.3
հատուկ նշանակության հողեր	29.5	31.6	31.7	31.7	31.7	31.6	31.7	31.6	31.6	31.6	31.6	1.1
անտառային հողեր	398. 0	373. 0	370. 6	369. 8	369. 8	369. 1	343. 1	334. 2	334. 3	334. 3	334.2	11.2
ջրային հողեր	22.1	28.3	28.6	28.6	28.6	26.4	26.0	25.9	25.9	25.9	25.9	0.9
պահուստային հողեր	37.7	0.7	0.7	0.7	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.0

Վերջին 10 տարիների ընթացքում մոտ 4.2%-ով կրճատվել են հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերը (խոտհարքները պակասել են 5.8 հազար հեկտարով, վարելահողերը՝ 4.6 հազար հեկտարով, արոտները՝ 64.1 հազար հեկտարով), իսկ անտառային հողերի մակերեսների կրճատումը նույն ժամանակշրջանում կազմել է ավելին քան 16.0%:

Էապես ավելացել են պահպանվող տարածքների հոդերը՝ 78.6%, կամ 102.4 հազար հեկտարով, բազմամյա տԳծապատկերկները 7 տարվա ընթացքում ավելացել են մոտ 4500 հեկտարով:

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում գործում են 3 պետական արգելոցներ (“Խոսրովի անտառ”, “Շիկահող” և “Էրեբունի”)՝ զբաղեցնելով 35439.6 հա տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 1.19 %-ը, 4 ազգային պարկեր (“Սևան”, “Դիլիջան”, “Արփի լիճ” և “Արևիկ”)՝ զբաղեցնելով 236802.1 հա տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 7.96 %-ը, ինչես նաև 27 պետական արգելավայրեր:

3.2. Հայաստանի Հանրապետության հողային ռեսուսների հիմնախնդիրները

Հայաստանի Հանրապետությունում հողերի դեգրադացմանը նպաստող կարևոր մարդածին գործոններից է հողերի աղտոտումը, որի աղբյուրներն են տնտեսական գործունեության գրեթե բոլոր ոլորտները: Տեխնածին վտանգների տեսանկյունից հանրապետության հողային, բուսական ծածկույթների և ջրային ավազանի աղտոտվածության աղբյուր են հանքարդյունաբերությունը, էներգետիկան, գյուղատնտեսության քիմիացումը, քիմիական արդյունաբերությունը, ավտոտրանսպորտը: Անցյալ դարի 90-ական թվականներին հանրապետությունում գործել է 300-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություն, որոնց արտանետումները հիմնականում առանց մաքրման արտամղվել են շրջակա միջավայր՝ պատճառ դառնալով բնական միջավայրի աղտոտման: Բազմաթիվ աղտոտող աղբյուրների (Երևանում՝ 50-ից ավելի, Վանա- ձորում՝ 7, Ալավերդիում՝ 12, Կապանում, Քաջարանում, Ագարակում՝ 3-ական, Հրազդանում և Արարատում՝ 4-ական) և տասնյակ պոչամբարների արտանետումները 90հազ.հա տարբեր աստիճանի աղտոտված հողերի առաջացման պատճառ են դարձել: Արդյունաբերական աղբյուրների և քաղաքամերձ շրջանների հողերում որոշ ծանր մետաղների ընդհանուր և շարժուն ձևերի պարունակությունը գերազանցել է նորմային հետևյալ արժեքներով. պղինձը՝ 5.3-39.3 և 14.0-69.2 անգամ, կապարը՝ 15.5-54.4 և 14.3-36.9, մոլիբդենը՝ 12.0- 49.2 և 11.8-42.4, ցինկը՝ 3.7-17.8 և 8.7-17.8, կոբալտը՝ 3.6-6.9 և 4.1-7.4, կադմիումը՝ 6.5-17.8 և 4.0-10.5, երկաթը՝ 4.8-26.0 և 3.4-15.4, սնդիկը՝ 3.8-4.9 և 7.5-2.8, նիկելը՝ 7.8-9.4 և 5.2-12.0 անգամ [7] Ըստ տարիների դիտվում է ծանր մետաղների ավելացում (աղյուսակ 6):

**Աղյուսակ 6. Ծանր մետաղների պարունակությունը և կուտակման դինամիկան
տեխնածին աղտոտված հողերում (0-20սմ)**

Աղտոտվածությ ան աստիճանը	1980				1985				2005				2015			
	Cu	Pb	M o	Zn	Cu	Pb	M o	Zn	Cu	Pb	M o	Zn	Cu	Pb	Mo	Zn
Խիստ	243 6	1094	80	121 6	246 5	110 8	86	139 8	2497	113 0	89	140 0	2411	1143. 2	93. 2	143 6
Միջին	213	179. 8	5.7	728	217	184	6.4	765	221. 6	187	7.2	724	224. 5	190	7.7	796
Թույլ	90.4	31.8	2.3	96.2	92	33.5	2.4	96.4	93	34.5	2.4	90	93.8	32.6	2.6	94
Չաղտոտված	72	30.5	2.4	65.1	67.2	27.9	2.1	66.3	65.1	316	2.2	70	72.4	31	2.1	72


3.3. Ընդերքօգտագործում

Հանրապետության հողերի դեգրադացման և աղտոտման հիմնական աղբյուրներից մեկը ընդերքօգտագործումն է:

Ընդհանուր առմամբ ՀՀ օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայում հաշվառված է հաստատված պաշարներով պինդ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր, այդ թվում՝ 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթահանքային և 1 ալյումինահանքային հանքավայր: Բացի հիմնական մետաղներից բացահայտված է հազվադեպ և ցրված տարրերի առկայություն՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիում, հելիում, թալիում, բիսմութ և այլն:

Բացի գնահատված և Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերից, ՀՀ տարածքում հայտնաբերված են տարբեր մետաղների 115 երևակումներ:

Հայաստանն ունի ոչ մետաղական օգտակար հանածոների զգալի պաշարներ, մասնավորապես՝ տուֆեր, տրավերտիններ, բազալտներ, գրանիտներ, պեռլիտներ, պեմզաներ, ցեոլիտներ, բենտոնիտներ, այլ գունագեղ, շինարարական քարեր,



հանքային կլանիչներ: Հանրապետության հիմնական հանքագործական շրջաններն են Սյունիքը և Լոռին:

Առանձնակի ուշադրության են արժանի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը, որոնց դիտարկված աճը պայմանավորված է ընդերքի ռեսուրսների նկատմամբ շուկայական մեծ պահանջարկով: Այս նպատակով հողերի տրամադրումը իրականացվել է ինչպես անտառային, այնպես էլ պահուստային և գյուղատնտեսական նշանակության (մոտ 7000.0 հա միայն գյուղ. նշանակության հողերի հաշվին) հողերի հաշվին: Ընդհանուր առմամբ հանրապետության ընդերքօգտագործման հողերի մակերեսը 2015թ-ին կազմել է 13532.7 հա կամ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի մոտ 37.0 և Հայաստանի Հանրապետության հողերի՝ 0.45%-ը:

Ինչպես ցույց է տրված աղյուսակ 2-ում 2005-2015թթ ժամանակաշրջանում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը ավելացել են 15.6 հազար հեկտարով կամ 74.6 %-ով:

Ըստ ՀՀ հողային հաշվեկշռի՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը 2015 թ.-ին՝ 36.6 հազ.հա, այդ թվում՝ 11.6 հազ.հա ընդերքօգտագործման հողեր (այս դասի հողերի բացվածքը բերվում է աղյուսակ 7-ում):

Միայն 2013-2015թթ-ին ընդերքօգտագործման հողերն ավելացել են 17%-ով:

Աղյուսակ 7. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողային ֆոնդի առկայությունը և բաշխումը*

	Ընդամենը հողեր	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	ընդերքօգտագործ ման հողեր
2013			
Արագածոտն	275632.1	2444.7	849.1
Արարատ	209003.2	2999.6	303.8
Արմավիր	124210.9	2879.7	656.6
Գեղարքունիք	148581.3	3670.1	776.2
Լոռի	379864.5	3706.3	668.8
Կոտայք	208552.9	3419.3	681.9

Շիրակ	268027.0	3880.3	1675.8
Սյունիք	450541.8	5666.3	3836.4
Վայոց Ձոր	230783.0	1998.3	1635.0
Տավուշ	270399.0	1154.2	347.3
Երևան	22328.0	3116.2	135.6
Ընդամենը	2974259.4	34935.0	11566.4
2014			
Արագածոտն	275632.1	2444.7	849.1
Արարատ	209003.0	3037.6	305.8
Արմավիր	124210.9	2874.9	656.5
Գեղարքունիք	534916.8	3670.1	1271.3
Լոռի	379864.5	3718.9	677.2
Կոտայք	208552.9	3423.2	681.9
Շիրակ	268027.0	3894.6	1690.1
Սյունիք	450541.8	7053.5	5220.6
Վայոց Ձոր	230783.0	1998.3	1635.0
Տավուշ	270399.0	1153.5	347.3
Երևան	22328.0	3114.1	132.2
Ընդամենը	2974259.4	36383.3	13466.9
2015			
Արագածոտն	275632.1	2444.6	849.1
Արարատ	209003.2	3037.5	305.8
Արմավիր	124211.4	2877.8	656.5
Գեղարքունիք	534916.8	3675.0	1271.3
Լոռի	379864.5	3937.9	739.7
Կոտայք	208553.2	3426.1	684.2
Շիրակ	268027.0	3889.4	1691.1
Սյունիք	450541.8	7059.0	5220.6
Վայոց Ձոր	230783.0	2000.8	1635.0
Տավուշ	270399.0	1154.2	347.2
Երևան	22328.1	3114.2	132.2
Ընդամենը	2974259.4	36616.6	13532.7

** ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվություն*

Հանրապետությունում գործող միայն մետաղական հանքավայրերի մակերեսը կազմում է մոտ 4700 հա: Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակով հատկացված է ավելի քան 250 հազ.հա մակերեսով հողատարածք:


Հանրապետությունում առկա են 22 գործող և կոնսերվացված պոչամբարներ, որոնց գումարային ծավալային տարողունակությունը կազմում է մոտ 600 մլն. մ³, իսկ զբաղեցրած մակերեսը՝ ավելի քան 700 հա (այդ թվում՝ Թեղուտի հանքի պոչամբարը): ՀՀ բոլոր պոչամբարների պոչերը թաց տեսակի են, իսկ պոչամբարների մեծամասնությունը նախագծվել և կառուցվել է ԽՍՀՄ տարիներին՝ չունենալով ջրի փակ շրջանառություն և չպարունակելով պոչերի անվտանգ պահպանման նորագույն տեխնոլոգիաներ (ջրամերժ թաղանթապատում, գազահեռացում և այլն):

Հիմնականում ընդերքօգտագործման (այդ թվում՝ հանքաքարի հարստացման և մետաղների մշակման) տեխնածին արտանետումների, այդ թվում ծանր մետաղների տարածման արեալները դիտվում են աղբյուրից 15-25 կմ հեռավորության վրա: Տեխնածին աղբյուրների (Ալավերդու լեռնամետալուրգիական գործարան, Ագարակի հարստացուցիչ ֆաբրիկա) հարակից տարածքներում ձևավորվել են տեխնածին անապատներ (ընդհանուր մակերեսով՝ 200-250 հա): Շրջակա միջավայր արտանետված տեխնածին աղտոտիչները բացասաբար են անդրադառնում հողերի ագրոքիմիական, ֆիզիկաքիմիական, ֆիզիկական ցուցանիշների վրա: Տեխնածին աղտոտված հողերում հումուսի պարունակությունը հողի վերին շերտում (0-20սմ) ստուգիչի նկատմամբ նվազել է 2.5-3.8, կալցիումը՝ 2.8-2.3, մագնեզիումը՝ 2.0-2.8, նատրիումը՝ 1.3-1.5 անգամ: Ընդհանուր և շարժուն ազոտը նվազել է՝ 1.6-1.9 և 2.8-2.4, ֆոսֆորը՝ 1.6-2.7 և 1.4-3.2, կալիումը՝ 1.4-1.2 և 1.5-1.9 անգամ [7]:

3.4. Երաշտներ


Հայաստանի տարածքի 7233 կմ² (24.3 %) գտնվում է անապատացման ռիսկի գոտում, 14519 կմ² (48.8 %) տարածքը (Լոռու և Տավուշի մարզերում) անապատացվում է, միայն տարածքի 6742 կմ² (22.6 %)-ի վրա առայժմ անապատացման պրոցեսներն արտահայտված չեն [9]:

Գծապատկեր 7: Անապատացման ռիսկի գոտին Հայաստանում



Հանրապետության տարածքում անապատացման բնական գործոններից են երաշտները, որոնց հաճախականությամբ աչքի են ընկնում Արարատյան գոգավորության ցածրադիր և նախալեռնային գոտիները, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի առանձին շրջաններ:

Գծապատկեր 8: Երաշտային տարածքները ՀՀ-ում (մանուշակագույն)




3.5. Սողանքներ

Հայաստանում բավականին տարածված են սողանքները և ցավոք վերջին տասնամյակներում տեղի ունեցած անտառհատումների, ջրերի կառավարման և ոռոգման աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման, սողանքների զանգվածում շրջապատույտ կատարող ջրերի բալանսի փոփոխմամբ պայմանավորված դիտարկվում է դրանց վերաակտիվացում և թվի ավելացում: Հոսքերը, հիմնականում, զարգացած են Եղեգիս, Ազատ և Վեդի գետերի հովիտներում, Սևանա լճի հյուսիս-արևելյան ափին, Իջևան քաղաքի շրջակայքում և հանրապետության այլ վայրերում:

Սողանքային երևույթները ընդգրկում են շուրջ 1216 կմ² մակերես (հանրապետության տարածքի շուրջ 4.1 %), սակայն համաձայն Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) ուսումնասիրությունների ՀՀ բնակչության 15%-ը (մոտ 470,000 մարդ) ապրում է սողանքավտանգ տարածքներում, իսկ սողանքային աղետի կառավարմանն ուղղված ՃՄՀԳ հետազոտության (2004-2006թթ.) արդյունքում հաշվառվել է 2,504 սողանք, զբաղեցնելով հանրապետության տարածքի 8%-ը:

Համաձայն «Հայաստանի գյուղատնտեսական համակարգերի խոցելիության նվազեցումը կլիմայի փոփոխությունների նկատմամբ» հետազոտության Հայաստանի շուրջ 960 համայնքներից 233-ը վնասված է սողանքներից, որոնցից ավելի քան 100-ում դիտվում է սողանքների զգալի ակտիվություն, ինչի հետևանքով վնասվել են հարյուրավոր բնակելի տներ, հաղորդակցության ուղիներ և կենսապահովման այլ օբյեկտներ, վնասվել է ավտոճանապարհների ցանցի շուրջ 3.2%-ը և երկաթգծի ցանցի՝ շուրջ 0.5%-ը:

Գծապատկեր 9: Հայաստանի Հանրապետության սողանքները [9]



Գծապատկեր 10: Խոսրովի 2007 թ սողանք-հոսքի պատկերը



Սողանքների տարածվածությունը ՀՀ-ում բերված է աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. ՀՀ սողանքային երևույթների տարածումն ըստ մարզերի


Մարզ	Տարածքի մակերես, կմ ²	Սողանքների թիվը	Սողանքների ընդհանուր մակերեսը, կմ ²	Սողանքների հարաբերական մակերեսը, %
Արագածոտ ն	2763.4	19	75.5	3
Արմավիր	1191.6	0	0.0	0
Երևան	222.3	152	13.0	6
Կոտայք	2034.0	110	77.8	4
Տավուշ	2740.7	151	210.6	8
Շիրակ	2682.6	23	20.6	1
Արարատ	2090.2	142	143.9	7
Գեղարքուն իք	5369.6	126	202.8	4
Լոռի	3852.0	217	234.8	6
Սյունիք	4492.2	289	246.7	5
Վայոց Ձոր	2287.9	184	242.4	11

3.6. Սելավներ

Հայաստանում սելավներն ինտենսիվ արտահայտված են միջին բարձրության լեռնային գոտում, որը զբաղեցնում է հանրապետության տարածքի կեսից ավելին:

Սելավների ակտիվացումը պայմանավորված է թեք լանջերին մերկացած և հողմնահարված նյութի առկայությամբ և առատ մթնոլորտային տեղումներով: Սելավներից պարբերաբար տուժում են Երևանը, Վանաձորը, Գյումրին, Կապանը, Գորիսը, Ալավերդին և մի շարք այլ բնակավայրեր, գյուղական համայնքներ, երկաթուղիներ և ավտոճանապարհներ:

Գծապատկեր 11: Հայաստանի սելավային գոտիներն ըստ երևույթի կրկնման



Մեկավների տարածվածությունը ՀՀ-ում ներկայացված է Գծապատկեր 11-ում, իսկ սելավաբեր շրջաններն ըստ մարզերի՝ աղյուսակ 9-ում:

Մեկավներն առավել վտանգավոր են ընդերքօգտագործման շրջաններում, որտեղ առկա են ահռելի մակերեսներ զբաղեցնող լանդշաֆտի մերկացումներ, լցակույտեր, բացահանքեր, ինչպես նաև պոչամբարներ, որոնցում պարունակվում են տարբեր տեսակի մետաղներ և վտանգավոր նյութեր:

Աղյուսակ 9. Մեկավներ շրջաններն ըստ մարզերի [10]:

Մարզ	Տարածքի մակերես, կմ ²	Մեկավաբեր շրջանների թիվը	Մեկավաբեր շրջանների մակերեսը, կմ ²	Մեկավների հարաբերական մակերեսը, %
Արագածոտն	2763.37	8	1441.3	52
Արմավիր	1191.6	0	0.0	0
Երևան	222.3	0	0.0	0
Կոտայք	2034.0	7	867.3	43
Տավուշ	2740.7	8	2147.0	78
Շիրակ	2682.6	8	1102.3	41
Արարատ	2090.2	6	1033.6	49

Գեղարքունիք	5369.6	10	1551.4	29
Լոռի	3852.0	17	2494.6	65
Սյունիք	4492.2	13	3153.9	70
Վայոց Ձոր	2287.9	10	2277.3	100

3.7. Հողերի աղակալում

Հանրապետությունում հողերի բնական աղակալումը տարածված է հարթավայրերի ցածրադիր տարածքներում, ուր ստորգետնյա ջրերի մակարդակը մոտ է երկրի մակերևույթին: Տարբեր մասնագիտական գնահատականներով դրանց ընդհանուր մակերեսը կազմում է 28-40 հազ.հա: Սակայն ազգային զեկույցներում չափազրված է մոտ 30 հազ.հա աղակալած հողեր՝ հիմնականում Արմավիրի և Արարատի մարզերում: Նշենք, որ նախկինում մեկտրացվել էր մոտ 5400 հա աղուտ-ալկալիական հողեր, սակայն դրենաժային հաամակարգի փակված լինելու արդյունքում Արարատյան դաշտավայրի հողերի աղակալումը շարունակվում է:

3.8. Թափոններ

Հայաստանում թափոններն առաջանում են հիմնականում արտադրությունում, որի մեծամասնությունը կազմում են ընդերքօգտագործման թափոնները՝ դատարկ ապարների լցակույտերի և պոչամբարներում կուտակված ապարախյուսի տեսքով և կենցաղում՝ կոշտ կենցաղային թափոնների տեսքով (ԿԿԹ):

Աղյուսակ 10-ում բերված են ՀՀ արտադրական վնասական թափոնների քանակները և դրանց օգտագործման, վնասագերծման ցուցանիշները:

Աղյուսակ 10. *Արտադրական վնասակար թափոնների առաջացումը, օգտագործումը և վնասագերծումը 1000 տոննա*

Տարիներ	Առաջացել է	Օգտագործվել է	Վնասագերծվել է
2005	10899.1	0.8	2.5
2006	12069.0	0.8	2.3
2007	13346.0	2.5	2.5
2008	11455.4	2.4	1.5
2009	14766.1	2.4	0.5
2010	23307.8	159.9	0.3
2011	27609.0	134.0	0.02
2012	39030.9	9.1	0.2
2013	49332.1	5.9	4.3
2014	46511.9	9.1	8.7

Հանրապետության պոչամբարներում ներկայումս ապարախյուսի տեսքով տեղադրված է ավելի քան 300 մլն. տոննա հանքահարստացման պոչեր, որոնց ծավալը ավելանում է տարեկան մոտ 20 մլն. տոննայով: Միևնույն ժամանակ դրանց տարեկան արտադրությունն ավելի կավելանա Թեղուտի հանքի նախագծային հզորության հասնելու, ինչպես նաև այլ հանքերի շահագործման հանձնման արդյունքում:

Արդի վիճակը կարելի է գնահատել իբրև աղետալի, քանի որ ներկայումս ընդերքօգտագործման բնագավառում չկան թափոնների կամ դրանցից առաջացող վնասի նվազեցման գործուն մեխանիզմներ և չեն խրախուսվում լավագույն հասանելի տեխնոլոգիաների (BAT) և բնապահպանական լավագույն փորձի (BEP) կիրառումը: Թերևս բացառություն է 2000-ական թթ-ին Արարատի ոսկու պոչամբարի պոչերի վերամշակումը AGRC կազմակերպության կողմից, որին տրվել էին որոշակի հարկային արտոնություններ:

4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

4.1. Հիմնական բացահայտումներ

Տարածաշրջանը, որտեղ գտնվում է Հայաստանը, այսինքն՝ Կովկասն իր բացառիկ հարուստ կենսաբազմազանությամբ Բնության Համաշխարհային Հիմնադրամի կողմից (WWF) ընդգրկված է համամոլորակային նշանակություն ունեցող 200 էկոտարածաշրջանների ցանկում, իսկ Conservation international կազմակերպությունն այն ճանաչել է որպես վտանգված տարածք և ներառել 34 Առանցքային Վտանգված Տարածքների ցուցակում: ՀՀ տարածքը հանդիսանում է տարածաշրջանում բուսական և կենդանական աշխարհների ձևավորման օջախներից մեկը, մի շարք միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ հանգստավայր, իսկ նրանց մի մասի համար նաև բնադրավայր:

Հայաստանը համարվում է մշակաբույսերի ծագման աշխարհի հինգ կենսացենոզներից մեկը:

Երկրի տարածքում հայտնի են շուրջ 3600 տեսակի բարձրակարգ ծաղկավոր բույսեր, 4700 տեսակի սնկեր, ավելի քան 17500 տեսակի կենդանիներ, այդ թվում՝ շուրջ 540 ողնաշարավոր և դեռևս չճշգրտված մեծաթիվ ստորակարգ բույսեր ու մանրէներ:

Այսօր հանրապետությունում գործում է 3 պետական արգելոց՝ «Խոսրովի անտառ», « Շիկահող» և « Էրեբունի», որոնք զբաղեցնում են 35439,6 հա տարածք, կամ ՀՀ ընդհանուր տարածքի 1,19 %:

Գործում է 4 ազգային պարկ՝ “ Սևան” “Դիլիջան”, “ Արփի լիճ”, և “ Արևիկ”, որոնք զբաղեցնում են 236802.1 հա տարածք, կամ ՀՀ ընդհանուր տարածքի 7.96 %:

Կան 27 պետական արգելավայրեր, որոնք զբաղեցնում են՝ 114812.7 հա տարածք, կամ ՀՀ ընդհանուր տարածքի 3.95 %:

Հայաստանում առկա է 232 բնության հուշարձան:

ՀՀ-ում պահպանվող տարածքները կազմում են հանրապետության տարածքի 13 % :

Եթե հանենք Սևանա լճի մակերեսը կմնա 6-7 %: Ըստ կարգի ամեն երկիր պահպանության տակ է դնում իր ընդհանուր տարածքի շուրջ 17 %:

Հայաստանում հատուկ պահպանվող տարածքները կազմում են 385 հազ. հա, անտառային հողերը՝ 334,3 հազ. հա, որից անտառածածկ տարածքները՝ 289,5 հազ. հա: Վերը նշված 232 բնության հուշարձաններից 106-ը երկրաբանական են, 48-ը՝ ջրաերկրաբանական, 40-ը՝ ջրագրական, 21-ը՝ կենսաբանական և 17-ը՝ բնապատմական: Ամենաշատ բնության հուշարձանները գտնվում են Սյունիքի մարզում՝ 56, Վայոց ձորի մարզում՝ 49-ը, Կոտայքում՝ 33:

<<Խոսրովի անտառ>> պետական արգելոցը (ՊԱ) ստեղծվել է 1958թ., լեռնային չորասեր համակեցությունների, մշակովի բույսերի վայրի ցեղակիցների, արիդային նոսրանտառների, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների ու բույսերի պահպանության նպատակով: Այստեղ հանդիպում են վտանգված այնպիսի տեսակներ ինչպիսիք են՝ հայկական մուֆլոնը (Armenian mouflon), փոքր ճագարամուկը (small five-toed jerboa), լայնականջ ոզնին (Erinaceus (Hemiechinus aurifus), սև անգղը (Aegypius monachus), խոցելի տեսակ համարվող բեզուարյան այծը (bezoar goat), անտառակատուն (wild cat), գորշ արջը (ursus arctos), ժայռային սիտեղը (rock marten), կարմրակատար շամփրուկը (Lanius senator), ներկարարը (coracias garrulus), բվեճը (Bubo bubo), գեղանի կռունկը (Anthropoides virgo), սապսանը (Falco peregrinus), տափաստանային հողմավար բազեն (Falco naumanni), քարաբծիվը (Aquila nivalensis), օձակեր արծիվը (Circus cyaneus), սպիտակագլուխ անգղը (griffon vulture), գառնանգղը (lammergeier), հայկական կամ Ռադդեի իժը (Armenian or Raddes viper), կովկասյան կատվածը (Cat snake), կրիտիկական վիճակում գտնվող կովկասյան ընձառյուծը (Panthera pardus), անդրկովկասյան մողեսիկը (Transcaucasian racerunner), երկարոտ սցինկը (Schneider's skink) , միջերկրածովային կրիան (spur-thighed tortoise), հսկա իշաճանճը (satanas gigas Evermann) և այլն;

Ոչնչացման սպառնալիքի ենթակա բույսերից՝ վտանգված տեսակ, ադիանտում վեներայի վարսը, աննշմարակող անհարթապտուղը (*Aphanopleura trachysperma*), Երևանյան տերեփուկը (*Василек*), Կղմուխ Օշեի (*Девясил Оше*), Առյուծաթաթ հայկականը (*Леонтика армянская*), Էրուկաստրում Թախտաջյանի (*Эрукаструм Тахтаджяна*), Օշան թաղիքայինը (*Солянка войлочная*), Կորնգան հայաստանի (*Эспарцет Айастанский*), Գազ Վեդու (*Астрагал Вединский*), տանձենի Ֆեոդորովի (*груша Феодорова*) և այլն:

Խոցելի տեսակ Սզնի (*Ալոճ*) պոնտականը (*Боярышник понтийский*):

«Շիկահող» ՊԱ»-ն ստեղծվել է 1954թ.՝ Էնդեմիկ և ռելիկտային բուսատեսակների, խոնավասեր անտառների, հարավային Հայաստանում միայն այստեղ հանդիպող արևելյան հաճարենու և հատապտղային կենու պուրակների, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների ու բույսերի պահպանության նպատակով:

Այստեղ բացի վերը նշված միջերկրածովային կրիայից, սպիտակագլուխ անգղից, գորշ արջից, անտառկատվից, ընձառյուծից, Հայկական իծից հանդիպում են նաև այնպիսի խոցելի տեսակներ, ինչպիսիք են փայտփորը (*желена или черний дятел*), Վայրի հնդկահավը (*ուլար*), (*каспискуй улар*), սովորական երկարաթև չզջիկը (*обыкновенный длиннокрыл*), հնդկական վայրենակերպը կամ մացառախոզը (*индийский дикообраз*), անդրկովկասյան սահնոօձը:

Վտանգված տեսակ Շելկովնիկովի կուտորան (*кутора Шелковникова*), գիշանգղը:

Վտանգված բույսերի տեսակներից ձագախոտ կարմրակապույտը (*желтушник лиловый*), կրիտիկական վիճակում գտնվող արծվապտեր տավրիականը (*орляк таврический*), կենի սովորականը (*тисс ягодный*):

Խոցելի տեսակներից ձնծաղիկ Արտյուշենկոյի (*подснежник Артюшенко*) և այլն:

«Էրեբունի» պետական արգելոցը (ՊԱ) ստեղծվել է 1981 թվականին՝ վայրի հացազգիների գենոֆոնդի և աճելավայրերի պահպանության նպատակով:

Գիտությանը հայտնի վայրի ցորենների 4 տեսակներից ՀՀ-ում աճում են 3-ը՝ Բեովտական վայրի միահատիկ ցորենը-*Triticum boeoticum*, վայրի Ուրարտու միահատիկ ցորենը (*Tr. urartu*) և Արարատյան վայրի երկհատիկավոր ցորենը կամ վայրի հաճարը (*tr. araraticum*):

Հայաստանում գործում են 4 ազգային պարկեր՝ «Սևան» ԱՊ – հիմնվել է 1980 թվականին Սևանա լճի էկոհամակարգերի պահպանության նպատակով: Սևանա լճում հանդիպել են անհետացված տեսակ համարվող ձմեռային իշխանը (*բախտակ*) *зимний ишхан (бахтак)* և բոջակը - (*боджак*), կրիտիկական վիճակում գտնվող ամառային իշխանը (*բախտակ*) (*летний ишхан, бахтак*), և Գեղարքունիին – (*Гегаркуни*):

Այստեղ հանդիպում են խոցելի տեսակ Սևանի կողակը (севанская храмуля), Սևանի բեղլուն- (севанский усач), Հաշամը – (жерех красногубый), Այս տեսակն ավելի շատ հանդիպում է Ստեփանավանի, Աշոցքի, Արարատի և Եղեգնաձորի տարածաշրջանների գետերում:

Հանդիպում են վտանգված տեսակներ՝ Հայկական կարմրակնը (армянская плотва), հանդիպում է Արարատի և Արագածոտնի մարզերի գետերում, Քուռի քարթակը (куринский пескарь) հանդիպում է Ստեփանավանի, Արագածոտնի, Արարատի և Եղեգնաձորի տարածաշրջանների գետերում և նույն գետերում հանդիպող առաջավոր ասիական ծածանը (переднеазиатская золотистая шиповка):

«Դիլիջան» ԱՊ- ստեղծվել է 2002 թվականին՝ կաղնու և հաճարենու ռելիկտային անտառների, հատապտղային կենու եզակի պուրակի, բնական սոճուտների, հանքային աղբյուրների սնման մակերեսների, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների ու բույսերի պահպանման համար: Այստեղ հանդիպում են այնպիսի վտանգված բուսատեսակներ, ինչպիսիք են ՝ Բրաունի բանպոտը (многорядник Брауна), ընդեղ Գոհարի (Безвременник Гоар), դժգույն պապլորը (гадючий лук бледный), սնկերից սև սպիտակ բոլետոպսիսը (Болетопсис черно-белый), խոցելի տեսակ սպիտակ սունկը (թնջուկ) (Белый гриб боровик), վտանգված տեսակ սատանայասունկը (Դիվասունկը) (сатанийский гриб), վտանգված տեսակ Վարսանդավոր կլավարիադելֆուս (клавариадельфус пестиковый, рогатик пестиковый), խոցելի տեսակ ցիստոդերմա ամիանտայինը (Цистодерма амиантовая), կրիտիկական վիճակում գտնվող հապլոպորուս հոտավետը (гаплопорус пахучий), խոցելի տեսակ՝ սև հելվելան (черная Гельвелла), խոցելի՝ բուստանման /մարջանանման ոգնասունկը (гериций коралловидный, ежевик коралловидный) կրիտիկական վիճակում գտնվող ոգնասունկ փշոտը, կաղնու ոգնասունկը (Герициум ежевидно-колючий, ежевик дубовый), վտանգված տեսակ՝ կարմրոդ հովանոցասունկը (гриб-зонтик краснеющий), վտանգված շնային մուտինուսը (мутинус собачий), գետնասունկ ամառային, ուտելի- трюфель летний, съедобный: Կենդանիներից հանդիպում են գորշ արջը, ազնվացեղ եղջերուն և այլն:

«Արփի լիճ» ԱՊ -- Հիմնադրվել է 2009 թվականի Արփի լճի էկոհամակարգի, հազվագյուտ և չվող թռչնատեսակների բնադրավայրերի, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակների պահպանության համար: Այստեղ հանդիպում են այնպիսի հազվագյուտ տեսակներ, ինչպիսիք են կրիտիկական վիճակում գտնվող դեղին կոկոռը (Кубышка желтая), սիբիրյան հիրիկը (Касатик сибирский), Ռոզենի մկնասոխը (Пролеска Розена) վտանգված տեսակ՝ Կովկասյան անթեմը (Пыпавка кавказская):

Սղոցակիր ճպուռը(коромысло зазубренное), խոցելի հազվագյուտ տեսակ), արիոն կապտաթիթենը(голубянка Ариона), Դարևսկու իժը(гадюка Даревского), Հայկական լեռնատափաստանային իժը(армянская горно-степная гадюка), մոխրապտ սուզակը(серощекая поганка red-necked grabe), վարդագույն հավալուսնը(great wite pelican), գանգրափետուր հավալուսնը(dalmatian pelican), մեծ ձկնկուլը(great cormorant), սև արագիլը(black storc), քաջահավը(glossy ibis), տարգալակտուցը(Eurasian spoonbill), մոխրագույն սագը(greylag goose), սպիտակաճակատ սագը(greater white), կարմիր բադը(ruddy shelduck), խայտաբադը(common shelduck), մարգագետնային մկնաճուռակը(Montagu's harrier), տափաստանային արծիվը(steppe eagle), քարարծիվը(golden eagle), տափաստանային հողմավոր բազեն(lesser kestrel), սապսանը(peregrine falcon), մոխրագույն կռունկը(common crane), սուլթանական հավը(purple swamphen), փոքր արոսը(little bustard), մեծ իլիկակտցարը(black-tailed godwit), կրկնակտցարը(great snipe), հայկական որորը(Armenian gull), ներկարարը(European roller), դեղնագլուխ խաղտոնիկը(citrine wagtail), խայտաքիսը(Europea marbled polecat), ջրասամույրը(Eurasian otter) և այլն:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են անողնաշար 155 և ողնաշարավոր 153 տեսակի կենդանիներ և 452 տեսակի բույսեր, ինչպես նաև 40 տեսակի սնկեր: ԲՀՊՏ-ներում պահպանվում է Հանրապետության ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60%-ը:

Հայաստանի 27 արգելավայրերից 13-ը գործում են ՀՀ բնապահպանության նախարարության, 13-ը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, իսկ մեկը՝ ֆիզիկայի ինստիտուտի ենթակայության ներքո:

ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության ներքո գործում են հետևյալ արգելավայրերը՝

- 2 Ախնաբադի կենոս – հիմնվել է ռելիկտային կենոս հատապտղային տեսակի պահպանության համար:
- 3 Արեգունու գիհու նոսրանտառային արգելավայրը -- ստեղծվել է բազմապտուղ, զարշահոտ և երկարատերև գիհու տեսակների գերակշռությամբ նոսրանտառների պահպանության համար:
- 4 Սոսու պուրակ – Սոսու արևելյան տեսակի բնական պուրակի պահպանության նպատակով:
- 5 Գոռավանի ավազուտներ – ավազուտային անապատի և դրան բնորոշ բուսական և կենդանական աշխարհի պահպանության նպատակով:

- 6 Որդան կարմիր – հայկական որդան կարմիրի աղուտային բնակության վայրերի և աղասեր բույսերի պահպանության համար:
- 7 Սև լիճ – բարձրլեռնային Սև լճի էկոհամակարգերի պահպանության համար:
- 8 Խոր Վիրապ – խոնավ էկոհամակարգերի պահպանության համար:
- 9 Զանգեզուր – մարգագետնատափաստանային, ենթալպյան և ալպյան էկոհամակարգերի պահպանության համար:
- 10 Զիկատար – անտառային էկոհամակարգերի պահպանության համար:
- 11 Խուստուփ – անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի պահպանության համար:
- 12 Հանքավանի ջրաբանական – հանքային աղբյուրների սնման ավազանների պահպանության համար:
- 13 Ջերմուկի ջրաբանական – հանքային տաք աղբյուրների սնման ավազանների պահպանության համար:
- 14 Բողաքար - էնդեմիկ բուսատեսակների (վարդակակաչ, Սոսնովսկու, խլածաղիկ Թախտաջյանի, կաղնի արաքսյան և այլն) պահպանության նպատակով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ենթակայությամբ գործում են հետևյալ արգելավայրերը՝

- 1 Արջատիպենու- ռելիկտային արջատիպենու և կենու պուրակների պահպանության համար:
- 2 Գյուլագարակի – ռելիկտային սոճու անտառների պահպանության համար:
- 3 Հերիերի նոսրանտառային – գլիու ռելիկտային նոսրանտառների պահպանության նպատակով:
- 4 Ջերմուկի անտառային- խոշորառեջ կաղնու լեռնային անտառների և դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանության նպատակով:
- 5 Բանքսի սոճու – բանքսի սոճու եզակի տնկարանային պուրակի պահպանության պատակով:
- 6 Կովկասյան մրտավարդենու – կովկասյան մրտավարդի ռելիկտային տեսակների պահպանության նպատակով:
- 7 Արզական- Մեղրաձորի – անտառային հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, կովկասյան մարեհավ) պահպանության նպատակով:
- 8 Գանձաքարի – լեռնային անտառների հազվագյուտ կենդանիների (այծյամ, գորշ արջ, կովկասյան մարեհավ) պահպանության նպատակով:

- 9 Գետիկի - լեռնային անտառների հազվագյուտ կենդանիների (այծյամ, գորշ արջ, կովկասյան մարեհավ) պահպանության նպատակով:
- 10 Իջևանի – անտառային լանդշաֆտների և դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանության նպատակով:
- 11 Մարգահովտի – խոնավասեր անտառների և դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանության նպատակով:
- 12 Եղեգնաձորի (Եղեգիսի) – անտառային լանդշաֆտների և դրանց բնորոշ կենդանիների պահպանության նպատակով:
- 13 Գորիսի - անտառային լանդշաֆտների և դրանց բնորոշ կենդանիների պահպանության նպատակով:

Ֆիզիկայի ինստիտուտի ենթակայությամբ գործում է՝

- 1 Արագածի ալպյան արգելավայրը – սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

Հանրապետությունում առավել խոցելի են համարվում Սյունիքի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերը, որտեղ առավել ինտենսիվ են ընթանում հանքարդյունահանման գործընթացները: Այս տարածքներում են գտնվում Ագարակի և Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատները, Քաջարանի, Թեղուտի և այլ հանքավայրերը, որոնք հանրապետության արդյունաբերության համար ունեն առանցքային նշանակություն:

Այսօր ՀՀ-ում կա 22 գործող և կոնսերվացված պոչամբար, որոնց գումարային տարողությունը 600-700 մլն. է , իսկ զբաղեցրած մակերեսը՝ 700 հա: Բոլոր պոչամբարների մոտ կենդանիներ են արածեցվում: Բոլոր պոչամբարները թաց տիպի են, իսկ աշխարհում ընդունված է չոր տիպը:

3780 հա գյուղ. նշանակության հողեր դարձել են քայքայված: ՀՀ-ի հողերի 81,9%, կամ 24353 կմ² ենթարկված է տարբեր աստիճանի անապատացման: Այս տարածքները հարուստ են կենսաբազմազանությամբ և շարունակական զարգացման արդյունքում դառնում են առավել խոցելի:

Հայաստանի համար առավել զգայուն և վտանգված տարածք է համարվում Սևանա լիճը իր էնդեմիկ ձկնատեսակներով և խմելու ջրի հսկայական պաշարով: Զգայուն է համարվում նաև ԼՂՀ տարածքը, որն ունի հարուստ կենսաբազմազանություն , սակայն գտնվում է զինված հակամարտությունների գոտում:

ՀՀ-ում բուսական և կենդանական տեսակները, էնդեմիկների քանակները և տեսակների հանդիպման հաճախականությունները

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են ՀՀ-ում բուսական և կենդանական տեսակների, էնդեմիկների քանակները և տեսակների հանդիպման հաճախականություններն՝ ըստ կարգաբանական խմբերի:

Աղյուսակ 11 ՀՀ-ում բուսական և կենդանական տեսակների և էնդեմիկների քանակն ըստ կարգաբանական խմբերի

Կարգաբանական խմբեր	Տեսակների քանակը	Էնդեմիկների քանակը
Բույսեր՝		
Ջրիմուռներ	388	--
Սնկեր	4167	2
Քարաքոսեր	300	--
Մամուռներ	395	--
Անոթավոր բույսեր	≈ 3600	125
Ընդամենը՝	≈ 8850	127
Կենդանիներ՝		
Անողնաշարավորներ	≈ 17000	316
Ձկներ	39	9
Երկկենցաղներ	7	1
Սողուններ	53	6
Կաթնասուններ	83	6
Թռչուններ	353	1
Ընդամենը՝	≈ 17523	339

Աղյուսակ 12 ՀՀ-ում տեսակների հանդիպման հաճախականությունն ըստ կարգաբանական խմբերի (հատ/հազ քառ.կմ.)

Կարգաբանական խմբեր	Տեսակների քանակը ՀՀ-ում	Տեսակների քանակը 1000 քառ. կմ-ի վրա
--------------------	-------------------------	-------------------------------------

		Հայաստանի Հանրապետությունում	Աշխարհում
Բույսեր՝			
Ցածրակարգ բույսեր	4855	161,8	0,15
Բարձրակարգ բույսեր	≈ 4000	131,66	1,67
Կենդանիներ՝			
Փափկամարմիններ	155	5,16	0,10
Հոդվածոտանիներ	≈ 5900	194,33	5,86
Ձկներ	39	1,31	0,05
Երկկենցաղներ	7	0,23	0,02
Սողուններ	53	1,76	0,05
Կաթնասուններ	83	2,76	0,03
Թռչուններ	353	11,86	0,06

Բիոտոպերի կորուստը տեղի է ունենում բաց հանքարդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսական պրակտիկայի, հատումների, ՀԷԿ արտադրության, հանգստի եւ զբոսաշրջության ոլորտների զարգացման արդյունքում: Քաղաքային թափոնների հեռացումն ուղղակիորեն դեպի շրջակա միջավայր, կենսաբազմազանության վայրեր, հատուկ պահպանվող տարածքներ և ջրային գոտիներ ազդում է Հայաստանի կենսաբազմազանության վրա:

Թափոնների դատարկումը հանգեցնում է հողում վնասակար քիմիական նյութերի կուտակման, պինդ և գազային մասնիկների միջոցով օդի աղտոտվածության, ստորգետնյա ջրերի և գետերի աղտոտման, արդյունաբերական թափոնների և պոչամբարների կուտակման և լանդշաֆտային դեգրադացիայի, աճի համար անբարենպաստ պայմանների, անտառային էկոհամակարգերի արժեքավոր, սպառնալիքի տակ գտնվող և հազվագյուտ տեսակների վերացման, արտադրողականության և բերքատվությունն որակի նվազեցման: Կենսաբազմազանության վրա թափոնների բացասական ազդեցության արդյունքում բնակչությունը բախվում է տարբեր առողջական խնդիրների, էկոհամակարգի հնարավորությունների կազմալուծման հետևանքով եկամտի անկման, կենսաբազմազանության / ագրոկենսաբազմազանության որակի կրճատման, ինչը

ազդում է գյուղատնտեսության և առևտրի վրա, որը ծառայում է որպես համայնքներում եկամուտի հիմնական աղբյուր:

Հողի և ջրի աղտոտումը, հողի կենսաբազմազանության (անողնաշարավորներ, բակտերիաներ) վերացումը, տեսակների փոփոխությունը, արժեքավոր ու հազվագյուտ բուսատեսակների կրճատումը և էկոհամակարգի կազմալուծման արդյունքում առողջական խնդիրների առաջացումը՝ հանքային պարատանյութերի օգտագործված քանակի վերաբերյալ վիճակագրական տվյալների և համապատասխան մոնիտորինգի բացակայության պարագայում, տեղի են ունենում թափոնների ու բնապահպանական աղտոտման բացասական ազդեցության հետևանքով:

Կենսաբազմազանության և էկոհամակարգի փոփոխությունները խախտում են ջրային ռեժիմը և ագրարային ու անտառային հատվածների ներկա իրավիճակը, ինչը կարող է լուրջ սպառնալիք հանդիսանալ մարդկային առողջության, սննդի և ջրի մատակարարման համար:

Համաձայն ՀՀ հողի հաշվեկշռի՝ 2011թ.-ին արդյունաբերական, ստորգետնյա ռեսուրսների շահագործման եւ այլ արտադրական նպատակներով հողերը կազմել են 33.0 հազար հա, 2012 թ.՝ 33.6 հազ. հա, 2013 թ.՝ 34.9 հազար հեկտար, իսկ 2014-ին՝ 36.4 հազար հեկտար, ինչը նշանակում է, որ օգտագործվող տարածքները աստիճանաբար աճում են հատկապես ընդերքի շահագործման հողերի հաշվին:

Հանքարդյունաբերության հիմնական աշխարհագրական – էկոլոգիական հետևանքները, որոնք նույնպես սպառնում են կենսաբազմազանությանը, ներառում են հողային ծածկույթին հասցված վնասը, պոչամբարների տարածումը, թափոնների կուտակումները, եւ ջրային ռեսուրսների աղտոտումը: Բնական է, որ այդ վնասը՝ հողածածկույթի վերացումը և թափոնների կուտակումը վստահաբար առաջացնում են բույսերի ու կենդանիների համայնքների ֆրագմենտացիա, խախտում են կենդանիների միգրացիոն ուղիները և անգամ սպառնում են որոշ հազվագյուտ տեսակների գոյությանը:

Հանքերի պոչամբարների և հանքաքարի վերամշակման գործարանների տարածումը շարունակում է անհանգստացնել: Դրանցից որոշներում (օրինակ՝ Ախթալա, Լոռու մարզ, հյուսիսային Հայաստան) հանքահարստացումը կատարվում է ֆլոտացիոն եղանակով, որի արդյունքում բնությունը աղտոտվում է միայն մի քանի մակերեսային ակտիվ նյութերի միջոցով, որոնք բացասական ազդեցություն են ունենում ջրային էկոհամակարգերի վրա: Մինչդեռ, այնարտադրությունների դեպքում, որոնք կիրառում են հին տեխնոլոգիաներ, շատ ավելի վտանգավոր նյութեր են օգտագործվում՝ արտադրելով շատ ավելի թունավոր թափոններ: Համաձայն ՀՀԳԱԱ Էկոլոգանոոսֆերային Էկոլոգիական հետազոտությունների կենտրոնի

տվյալների՝ հողի և ջրի աղտոտումը երկրի բազմաթիվ տարածքներում էականորեն գերազանցում է առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները, և աղտոտման հիմնական աղբյուրը պոչամբարների արտահոսքն է:

Ցեմենտ արտադրող գործարանը նույնպես բացասական ազդեցություն ունի: Ոչ կատարյալ տեխնիկական սարքավորման պատճառով ցեմենտի փոշին արտանետվում է օդ, ինչը ազդում է բնական էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների վրա՝ փոխելով հողի պայմանները, ինչպես նաև ազդեցություն ունենալով անողնաշարավորների ֆաունայի և բույսերի ֆոտոսինթետիկ գործունեության վրա: Մակերևույթի ջրային ուղիները և լանդշաֆտները աղտոտվում են նաև պինդ կենցաղային թափոնների միջոցով:

Գյուղատնտեսության հիմնական սպառնալիքը պարարտանյութերի և թունաքիմիկատների չափից ավելի օգտագործումն է: Միևնույն ժամանակ հաճախ օգտագործվում են ժամկետանց նյութեր՝ ավելի բարձր արտադրողականության նպատակով ավելի մեծ քանակությամբ, ինչը լուրջ սպառնալիք է հանդիսանում մարդկային առողջությանը գյուղատնտեսական արտադրանքի միջոցով: Այս գործընթացի վերաբերյալ պաշտոնական տվյալներ գոյություն չունեն:

Զբոսախնջույքի վայրերի աղտոտումը կենդանային աղբի միջոցով նույնպես խնդիրներ է առաջացնում, հատկապես եթե նման վայրերը հարմարեցված չեն հանգստի նպատակներին՝ համապատասխան ծառայությունների տրամադրմամբ: Վերջին տարիներին իրավիճակը բարելավվել է, մասնավորապես Հաղարծինի կիրճում՝ Դիլիջանի ազգային պարկում, որտեղ ստեղծվել են բացօթյա հանգստի համար նախատեսված հատուկ վայրեր, նույնը նախատեսվում է նաև որոշ այլ հաճախ այցելվող տարածքներում, ինչպիսիք են Գառնին, Օրգովը և այլն, թեև մասշտաբը բավարար չէ:

Գյուղատնտեսության ոլորտում շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները ներառում են ոչ արդյունավետ ոռոգման արդյունքում առաջացած ջրային կորուստները, ինչպես նաև հողի աղակալումը, էրոզիան, գյուղատնտեսական աղբի պատճառով առաջացած աղտոտումը: Ներկայում վարելահողերի մոտ 33%-ը կամ 150 հազար հեկտարը չի օգտագործվում այդ նպատակով: Սա սպառնում է վայրի կենսաբազմազանությանը, քանի որ լքված մշակելի հողերը ծածկվում են ագրեսիվ մոլախոտերով և դառնում են դրանց վերարտադրության կենտրոնը: Բնական էկոհամակարգերի՝ որպես արոտավայրեր օգտագործման դեպքում, ամենամեծ սպառնալիքը արոտավայրերի բեռի անհամամասնական բաշխումն է, երբ հեռավոր արոտավայրերում արածումը թերի է լինում: Սա հանգեցնում է էկոհամակարգերի փոփոխության, մասնավորապես՝ ալպյան մարգագետիններով ալպյան գոգերի փոխարինմանը, ինչպես նաև ենթալպյան մոլախոտերի ակտիվ ներթափանցմանը

ալայան էկոհամակարգեր: Ներկայում դիտարկվում է ջրային էրոզիայի ակտիվացում և ճահճային տարածքների ընդլայնում 12 բնական արոտավայրերում: Ջրի օգտագործումը գյուղատնտեսության և էներգիայի արտադրության ոլորտի զարգացման նպատակով հաճախ հանգեցնում է ջրային ուղիների չորացման, ինչը առաջ է բերում ափամերձ և ջրային էկոհամակարգերի՝ հատկապես ձկնատեսակների և դրանցով կերակրվող տեսակների վերացում: Ջրային ուղիների մաքրման և փոփոխման աշխատանքները հաճախ հիմնավորված չեն և հանգեցնում են գետերի բիոտոպերի, այդ թվում՝ ձկների կերերի ու դրանց ձվադրման տարածքների վերացմանը:

4.2. Կլիմայի փոփոխությունը Հայաստանում

Ըստ կլիմայի փոփոխության առաջին ազգային հաղորդագրության ՀՀ-ում ամենալավատեսական գնահատականով կանխատեսվում էր 2100թ-ին միջին տարեկան ջերմաստիճանի բարձրացում 1.7 աստիճանով և տեղումների նվազում՝ 10%-ով: Հայաստանի 2-րդ հաղորդագրության պատրաստման ժամանակ (2006թ.) արձանագրված միջին տարեկան ջերմաստիճանի բարձրացումը 1961-1990թ.թ. միջինի նկատմամբ կազմել էր 0,85°C, իսկ ընդհանուր տեղումների նվազումը 6%: 2012թ. Տվյալներով ամբողջ տարածքի միջինացված ջերմաստիճանը բարձրացել է 1,03 °C-ով, իսկ տեղումները նվազել են 10 %-ով:

Հայաստանի 14 գլխավոր գետավազանները ներառում են մոտ 10000 գետեր ու վտակներ, որոնցից միայն 300-ի երկարությունն է 10 կմ-ից ավելի: Կան 100 լճեր:

Կլիմայի փոփոխությունը Հայաստանի մշակաբույսերի վրա կթողնի 3 հիմնական ազդեցություն: Նախ յուրաքանչյուր մշակաբույսի աճեցման գոտին մինչև 2030 թ. Վեր է բարձրանալու 100 մետրով, իսկ մինչև 2100թ.՝ 200-400 մետրով: Մշակաբույսերի աճեցման համար ավելի մեծ տարածքներ կառաջանան բարձր գոտիներում, որը որոշակի մրցակցություն կառաջացնի բարձր գոտիներում արոտավայրերի ու խոտհարքների հետ:

Երկրորդը՝ եթե ոռոգման մակարդակը չբարձրացվի և ոռոգվող տարածքները չընդլայնվեն, բարձր ջերմաստիճանների, գոլորշիացման ավելացման և Հայաստանի շատ տարածքներում տեղումներին վազումը բերելու է մշակաբույսերից շատերի արտադրողականության կրճատմանը:

Երրորդը՝ եղանակի փոփոխություններն այնպիսի վնաս են պատճառելու մշակաբույսերին և հողերին, ինչը հնարավոր չ է կանխատեսել միջին ջերմաստիճանների բարձրացման կամ տարեկան տեղումների փոփոխությունների հիման վրա:

Կլիմայի փոփոխությունը շատ կարևոր է Հայաստանի պես երկրների համար, քանի որ երկիրը ավելի խոցելի է դրա նկատմամբ: Այս առումով, անհրաժեշտ է նվազեցնել արտանետումները և դրանք հասցնել ընդունելի նվազագույն քանակի, որը կարող է կլանվել բնության կողմից (օվկիանոսներ ու բուսականություն)՝ կանխելով գազի կոնցենտրացիաները մթնոլորտում:

Արտանետումների ավելցուկը պետք է աստիճանաբար կրճատվի երկրների կողմից՝ մեկ շնչի հաշվարկով իրենց բաժին ընկածի չափով:

Հայաստանում, ինչպես Խորհրդային Միության նախկին այլ երկրներում, արտանետումները կտրուկ նվազել են 1990թ.-ի համեմատ և մինչև այժմ մնում են 1990թ.-ի համեմատ ավելի ցածր մակարդակում:

Ըստ կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի վերջին գնահատականների՝ նոր մարտահրավերների հետ կապված հիմնական եզրահանգումները հետևյալն են.

Կլիմայական համակարգի տաքացումն աներկբա է և բխում է մթնոլորտի և օվկիանոսի միջին ջերմաստիճանի աճի, ձյան և սառույցի լայնածավալ հալոցքի և ծովի մակարդակի աճի դիտարկումներից:

20-րդ դարի երկրորդ կեսից դիտարկված ջերմաստիճանի աճը ջերմոցային գազերի կոնցենտրացիաների աճի հետևանք է:

Վերջին 11 տարիները (սկսած 1850թ.-ից) դիտարկված ամենատաք 12 տարիների շարքում են:

Ջերմաստիճանի աճի տեմպը ($0,13^{\circ}\text{C} / 10$ տարի) վերջին 50 տարում 2 անգամ ավելի է, քան վերջին 100 տարում:

Ջերմաստիճանի ընդհանուր աճը 20-րդ դարի ընթացքում կազմել է $0,74^{\circ}\text{C}$, Ծովի մակարդակի բարձրացման տեմպը՝

ա) 1961-2003 թթ. - $1,8$ մմ/տարի

բ) 1993 – 2003 թթ. – $3,1$ մմ/տարի

Հետագա 2 տասնամյակներում նախատեսվում է ջերմաստիճանի բարձրացում $0,2^{\circ}\text{C} / 10$ տարի:

Նույնիսկ, եթե ջերմոցային գազերի կոնցենտրացիաները մնան 2000թ. մակադակին, ջերմաստիճանի բարձրացումը կկազմի $0,1^{\circ}\text{C} / 10$ տարի:

Ըստ ջերմոցային գազերի արտանետումների տարբեր սցենարների՝ ջերմաստիճանն առաջիկա 100 տարիների ընթացքում կաճի $1,8-4^{\circ}\text{C}$, իսկ ծովի մակարդակը կբարձրանա $0,18-0,59$ մետրով:

Հայաստանը փոքր երկիր է և նրա համար կարևոր նշանակություն ունեն ջերմոցային գազերի (CO_2 , մեթան, ջրի գոլորշի, ազոտի երկօքսիդ)

արտանետումները: Եթե համեմատենք նրան Չինաստանի հետ , որն արտադրում է ՋԳ-ների 21,9 % կամ ԱՄՆ-ի ` 18,1 %, Հնդկաստանի ` 6.6 %, ՌԴ-ի` 5,1 %, Ճապոնիայի` 3,7 % հետ , ապա Հայաստանը գրեթե չի աղտոտում շրջակա միջավայրը: Հայաստանը չունի ՋԳ-ների արտանետումների նվազեցման պարտավորություններ և ընդգրկված չէ “ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա” -ի հավելված 1-ի մեջ: Մեզ մոտ արտանետումների մակարդակը նվազել է և այժմ 1 շնչի հաշվով տարեկան արտանետվում է 0.0015 Գգ CO2 , որը կազմում է 1 շնչին բաժին ընկնող համաշխարհային ցուցանիշի` 0,0043 Գգ 1/3 մասը:

ՋԳ-ների կրճատման ուղղությամբ նախատեսվող ծրագրերում ՀՀ-ի համար կարելի է նշել թոչնաֆաբրիկաներում թոչնաղբի օգտագործումը, որպես վառելիք և նույն նպատակով օգտագործել օրինակ Նուբարաշենի աղբավայրը: ՀՀ-ում կանխատեսվում է ՋԳ-ների ընդհանուր արտանետումների աճ` մինչև 23 հազ. տոննա առանց միջոցառումների իրականացման և 15 հազ. տոննա, եթե իրականացվեն նախատեսված միջոցառումները:

Արտանետումների քանակը կրճատելու համար անհրաժեշտ է կատարել էներգիանայողություն և էլեկտրաէներգիա արտադրել գազով:

Պետք է ավելացնել անտառապատ տարածքները, քանի որ հենց սրանք են կլանում ՋԳ-ները: Ապահով կենսագործունեության համար 1 շնչին ընկնում է 15-24 քմ կանաչ տարածք: 2005 թվականին ՀՀ-ում այդ թիվը կազմում էր 4-5քմ,իսկ Երևանում ` ըստ քաղաքապետարանի ` 7-8քմ:՝

Ըստ Կիոտոյի արձանագրության ՋԳ-ները պետք է նվազեցնել և հասցնել 1990 թվականի մակարդակի 90%-ին համապատասխան արժեքին: ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի 3-րդ խորհրդաժողովում ընդունվեց քվոտաների վաճառքի և փոխանակման մեխանիզմ, այսինքն ՋԳ արտադրող և թթվածին ծախսող երկիրը պետք է տուգանք վճարի, եթե ածխածնի դիօքսիդի քանակը գերազանցում է թթվածնի քանակին: ՋԳ-ների արտանետումը և կլիմայի համընդանուր տաքացումը կարելի է նվազեցնել էներգիայի այլընտրանքային աղբյուրների (ջրի, քամու էներգիայի) օգտագործմամբ, անտառապահպանությամբ, անտառի վերականգնմամբ և մարդու տնտեսական գործունեության ընդհանուր հզորության նվազմամբ:

Հստակ չի կարելի ասել , թե գազերից, որն ավելի մեծ դեր ունի երկրի ջերմոցային էֆեկտի առաջացման մեջ, սակայն ենթադրվում է , որ ջրայի գոլորշին 36-70 %, CO2-ը ` 9-26 %, մեթանը` 4-9 % և ազոտը` 3-7 % դեր ունեն այդ երևույթի առաջացման մեջ:

Հայաստանում հիմնական ՋԳ-ների ընդհանուր արտանետումներում ածխածնի երկօքսիդի մասնաբաժինը կազմել է 62.8 % , մեթանինը՝ 34,2 %, ազոտի եկօքսիդինը՝ աճել է 3 %-ով:

20-րդ դարի առաջին կեսում ածխաթթու գազի քանակը մթնոլորտում եղել է 0.03 %, 1956 թվականին՝ 0,028 %, 1985 թվականին՝ 0,034 %, 2000 թվականին՝ 0.038 %: Ըստ նշանակության ՋԳ-ներից 2-րդը մեթանն է, նրա պարունակությունը մթնոլորտում ամեն տարի աճում է 1 %-ով:

Մեթանի արտադրության հիմնական աղբյուրներն են աղբանոցները, գոմաղբը և բրնձի դաշտերը:

4.3. Մթնոլորտային օդի պահպանության ներկա խնդիրներն ու լուծումները

Վնասակար նյութերի արտանետումը ազդում է շրջակա միջավայրի վրա: Ներքոնշյալ աղյուսակները ներկայացնում են կայուն աղբյուրներից ու տրանսպորտից արտանետվող վնասակար նյութերի քանակն ու բաշխումը:

Աղյուսակ 13. Կայուն աղբյուրներից ու տրանսպորտից արտանետվող վնասակար նյութերի քանակն ու բաշխումը ՀՀ մարզերում ու Երևանում, 2012

	Արտանետվող վնասակար նյութերի քանակը	Կլանվող վնասակար նյութերի	Մթնոլորտ արտանետվող նյութերի քանակը
Երևան	18734,2	3518,6	15215,6
Արագածոտն	608,3	--	608,8
Արարատ	148314,2	146728,2	1586,0
Արմավիր	3127,1	--	3127,1
պաշտոնյաները	2345,4	--	2345,4
Լոռի	40540,3	--	40540,3
Կոտայք	23271,6	1296,0	21975,6
Շիրակ	1987,6	--	1987,6
Փյունիկը	8775,8	156,0	8619,8
Վայոցձոր	3121,6	4,5	3117,1
Տավուշ	18289,4	--	18289,4
Ընդհանուրը	269115,5	151703,3	117412,2

Աղյուսակ 14. Փոխադրամիջոցների պատճառով վնասակար նյութերի քանակը և համապատասխան ցուցանիշները (2007-2012)

Ամսաթիվ	Արտանետումներ		
	Ընդհանուրը (տոննա)	Ըստ մ քմ-ի (տոննա)	Մեկ շնչի հաշվով (կգ)
2007	149659,8	5,0	46,4
2008	172155,9	6,0	53,2
2009	160406,9	5,6	49,5
2010	166450,9	5,8	51,1
2011	154675,8	5,4	47,3
2012	142417,7	5,0	47,1

Մթնոլորտային օդի պահպանության կառավարումն իրականացվում է հետևյալ սկզբունքով՝ արտանետումների նորմավորում (սահմանափակում), հաշվառում և վերահսկողություն:

Ջերմոցային գազերի կադաստր

ԶԳ ազգային կադաստրը ներառում է ԶԳ արտանետումների և կլանումների գնահատումը բազային՝ 2010թ. և միտումները՝ 2000-2010թ.թ. ժամանակահատվածի համար: Հաշվի են առնվել հետևյալ սեկտորները՝ «Էներգետիկա», «Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում» (ԱՊԱՕ), «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում» (ԳԱՏԱՀ), «Թափոններ»:

2010 թվականին ՀՀ-ում ԶԳ ընդհանուր արտանետումները կազմել են 7463,6 Գգ CO₂ համարժեք: 1990 թ. համեմատությամբ ԶԳ արտանետումները կրճատվել են 70 %-ով, իսկ 2000 թ. համեմատությամբ՝ աճել 26 %-ով:

Աղյուսակ 15. ՀՀ-ում ջերմոցային գազերի արտանետումներն ըստ սեկտորների (Գգ), 2010 թ

Սեկտորներ	CO ₂	CH ₄	N ₂ O	HFC	CO ₂ համ.
Էներգետիկա	4231.0	35.64	0.094	0	5008.6
Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում	225.9	0	0	0.133	481.1
Գյուղատնտեսություն	0	44.26	1.26	0	1320.5
Թափոններ	7.64	27.77	0.202	0	653.4
Ընդամենը	4464.54	107.67	1.556	0.133	7463.6

**Առանց անտառային տնտեսության և այլ հողօգտագործման:*

2010 թվականի ՋԳ-ների 59.8 %-ը բաժին է ընկնում ածխաթթու գազին, 30,3 %-ը մեթանին, 6,5 %՝ ազոտի ենթօքսիդին, 3.4 5 ֆտոր գազերին: Արտանետումների բաշխումն ըստ հիմնական սեկտորների հետևյալն են.

«Էներգետիկա՝ 67 %, ԱՊԱՕ՝ 6,4 %, գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում (ԳԱՏԱՀ)՝ 17.9 % և թափոններ՝ 8,7 %»:

Աղյուսակ 16. ՋԳ արտանետումների միտումները 2000-2010 թ.թ.

ՀՀ-ում ջերմոցային գազերի արտանետումները (Գգ CO2 համ)

Գազ	2000թ.	2003թ.	2005թ.	2008թ.	2010թ.
CO2	3207.0	3181.9	4077.7	5109.1	4464.6
CH4	1844.7	1869.1	2097.5	2458.0	2261.0
N2O	479.8	569.4	632.1	483.9	482.8
HFCs	3.7	17.8	45.0	173.0	255.2
Ընդամենը	5535.2	5638.2	6852.3	8224.0	7463.6

2000-2008թ.թ ընդհանուր առմամբ, նկատվել է ՋԳ արտանետումների աճ, որը պայմանավորված է տնտեսական զարգացման բարձր տեմպերով, իսկ՝ 2009-2010թ.թ.՝ իջեցում, հիմնականում «Էներգետիկա» և «ԱՊԱՕ» սեկտորներում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության ժգնաժամով:

F գազերի (HFCs), որոնք օգտագործվում են, որպես օզոնաքայքայիչ նյութերի փոխարինողներ, արտանետումների ավելացումը, հիմնականում պայմանավորված է սառեցման և օդորակման զարգացման հետ:

Այս ամբողջ գործընթացից անկախ իրականացվում է մթնոլորտային օդի աղտոտվածության մոնիտորինգ, որը մի կողմից հնարավորություն է տալիս գնահատել պահպանությանն ուղղված գործունեությունը, մյուս կողմից բացահայտում է խնդրահարույց աղտոտիչները և դրանք արտանետող խոշոր աղտոտման աղբյուրները՝ հանդիսանալով մթնոլորտային օդի պահպանության զարգացման դրդապատճառ: Մթնոլորտային օդի վիճակը գնահատելու համար սահմանվում են մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվներ:

Վնասակար նյութերի արտանետումների աղբյուրները բաժանվում են 2 խմբի՝ աղտոտման անշարժ աղբյուրներ (կայանքներ, սարքավորումներ) և աղտոտման շարժական աղբյուրներ (ավտոտրանսպորտ, այլփոխադրամիջոցներ):

Ներկայում արտանետումների պետական հաշվառման և նորմավորման ոլորտում ընդգրկված են 1483 կազմակերպություն՝ արտանետման ավելի քան 3850 աղբյուրներով: Դրանք ընդգրկում են հանրապետությունում անշարժ աղբյուրներից կատարվող արտանետումների ավելի քան 90%-ը, և դրանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է պետական վերահսկողություն ՀՀ բնապահպանական պետական տեսչության կողմից:

Աղտոտման շարժական աղբյուրների արտանետումների սահմանափակումը հիմնված է վառելիքի որակի և շարժիչի որակի և սարքինության վրա:

Ավտոտրանսպորտից արտանետումների կրճատման նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել է հայեցակարգ և միջոցառումների ծրագիր, արգելվել է կապարացված բենզինի օգտագործումը և արտանետումների չեզոքացուցիչներ չունեցող ավտոմեքենաների ներմուծումը: Վերջին տարիների ընթացքում մոտ 10 անգամ նվազեցվել է բենզինում և դիզելային վառելիքում ծծմբի պարունակության թույլատրելի քանակությունը: Տարեց տարի ավելացել է սեղմված բնական գազի օգտագործումը՝ ի հաշիվ բենզինի օգտագործման պակասեցման: Այս ամենի արդյունքում զգալիորեն զսպվել է վնասակար արտանետումների աճը ավտոտրանսպորտից:

Հայաստանում դեռևս չեն գործում ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) համակարգերը և չկա բնապահպանական խնդիրների նկատմամբ “բարի կամքի” մոտեցում: Թերի է նաև իրազեկումը այս ոլորտում: Հետևապես, եթե արտանետման չափաքանակները բավարարում են արտանետման թույլտվություն ստանալու համար, ձեռնարկությունները որևէ լուրջ քայլեր կամ ներդրումներ չեն ձեռնարկում իրենց տեխնոլոգիաները փոխարինելու համար:

Անշարժ աղբյուրների համար տեխնոլոգիական նորմավորման սկզբունքը և նորագույն տեխնոլոգիաների ներդրումը ներկայում հանդիսանում են մթնոլորտային օդի պահպանության կարևորագույն խնդիր:

4.4. Արտանետումներ

Անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները

Ներկայում արտանետումների պետական հաշվառման և նորմավորման ոլորտում ընդգրկված են մոտ 1514 (1483) կազմակերպություն՝ արտանետման ավելի քան 3850 աղբյուրներով: Դրանք ընդգրկում են հանրապետությունում անշարժ աղբյուրներից կատարվող արտանետումների ավելի քան 90%-ը, և դրանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է պետական

վերահսկողություն ՀՀ բնապահպանական տեսչության կողմից: Ընդհանուր առմամբ արտանետումների թիվը կազմել է 128400,6 տոննա:

Անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները

Վնասակար նյութերի արտանետումները մթնոլորտ 2013 թվականին կազմել են 261,4 հազ. տ, որի 54,2%-ը բաժին է ընկել ավտոտրանսպորտին, 45,8%-ը՝ արտանետման անշարժ աղբյուրներին:

Արտանետման անշարժ աղբյուրների քանակը 2013թ. կազմել է 3176, որոնց 77,0 %-ը ունեցել են սահմանային թույլատրելի հաստատված չափորոշիչներ: Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի քանակը կազմել է 314,4 հազ. տ, որի 61,9%-ը որսվել է, իսկ մնացած 38,1%-ը՝ արտանետվում է մթնոլորտ: Մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի 26,6%-ը կազմել է ծծմբային անհիդրիդը (31,8 հազ. տ), 2,2 %-ը (2,6 հազ.տ),՝ ածխածնի օքսիդը՝ 1,3%- ազոտի օքսիդները (առանց ենթաօքսիդի) (1,5հազ. տ):

Ծանր մետաղների գումարային քանակը մթնոլորտային արտանետումներում կազմել է 49,4տ: Մթնոլորտ արտանետված փոշու քանակը կազմել է 362,2տ, որի 4,1%-ը (148,4տ) բաժին է ընկել օրգանական փոշուն: 2013թ. ցնդող օրգանական միացությունների քանակը մթնոլորտային ընդհանուր արտանետումներում կազմել է 417,6տ:

Աղտոտման շարժական աղբյուրներ

Հայաստանի ավտոպարկը բավական մաշված է: 2014թ. դրությամբ՝ պաշտոնական տվյալների համաձայն, Հայաստանի Հանրապետությունում գրանցված են 533886 տրանսպորտային միջոց:

Ըստ պաշտոնական տվյալների 2014թ. ներմուծվել է 129208 տոննա բենզին, սպառվել է 346259 տոննա սեղմված գազ, իսկ ավտոտրանսպորտից արտանետումները կազմել են 142207 տոննա: Եթե գազի փոխարեն որպես վառելիք օգտագործվեր միայն բենզին, արտանետումները կկազմեին 416 694 տոննա:

Ավտոտրանսպորտից վնասակար նյութերի արտանետումները

Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը 2013թ. կազմել է 141,7 հազ. տ: Դրանց մեջ մեծ տեսակարար կշիռ են ունեցել ածխածնի օքսիդը՝ 102,6հազ. տ կամ ընդհանուր արտանետումների 74,2 %-ը, ցնդող օրգանական միացությունները՝ 23,3 հազ.տ կամ 16,4%, ազոտի օքսիդները՝ 15,3 հազ.տ կամ 10,8%:

Չնայած ավտոտրանսպորտում բենզինի փոխարեն գազի օգտագործման ծավալների ավելացման հետևանքով շրջակա միջավայրն ավելի քիչ է աղտոտվում, սակայն դա չի նշանակում, որ շրջակա միջավայրը գտնվում է իդեալական վիճակում: Տրանսպորտով գերծանրաբեռնվածության հետևանքով մարզկենտրոններում, հանրապետության մեծ քաղաքներում և հատկապես Երևանում դեռևս մթնոլորտի վիճակը բավարար չէ: Մթնոլորտի վիճակը անբավարար է նաև այն քաղաքներում և գյուղերում, որոնք անմիջապես մոտ են գտնվում խոշոր հանքարդյունաբերական տարածքներին կամ գտնվում են նրանց ազդեցության գոտում, օրինակ՝ Հրազդանի և Արարատի ցեմենտի գործարանների, Ագարակի, Ալավերդու, Քաջարանի, Ամուլսարի, Թեղուտի, Սոտքի և այլ հանքերի անմիջական հարևանության են: Այդպիսի բնակավայրերից են Ալավերդին, Թեղուտը, Քաջարանը, Ագարակը, Արարատը, Հրազդանը, Ծաղկաձորը, Լեռնաձորը, Շնողը, Աքորին, Ակները, Սոտքը և այլն:

4.5. Թափոններ

4.5.1. Կոշտ կենցաղային թափոններ(ԿԿԹ).

Ըստ վիճակագրական հաշվառման տվյալների, ՀՀ տարածքում տարեկան առաջանում և աղբավայրեր են տեղափոխվում շուրջ 1529 հազ. մ³ կամ 535,2 հազ տոննա, որի 57.0 %-ը (868.0 մ³) բաժին է ընկնում Երևանին:



Թափոնների կառավարման բնագավառում առկա են վերահսկման որոշակի խնդիրներ, մասնավորապես հանրապետությունում գործում են պաշտոնապես գրանցված 245 աղբավայրեր՝ զբաղեցնելով 1344 հա մակերես, որոնցից թափոնների հեռացման վայրերի ռեեստրում գրանցված են 19-ը (արձանագրվել է ՀՀ վերահսկիչ պալատի կողմից):

Համաձայն ոչ պաշտոնական տվյալների հանրապետությունում առկա է մոտ 200 ապօրինի աղբավայր և աղբանոց, որոնք զբաղեցնում են շուրջ 170 հա մակերես:

Միևնույն ժամանակ աղբավայրերի հարակից տարածքներն գտնվում են խիստ անբարեկարգ վիճակում, դրանցից



շատերում սանիտարական պահպանման գոտիները չեն համապատասխանում գործող նորմերին:

Հայաստանի տարածքում ԿԿԹ հավաքումն իրականացվում է 48 քաղաքային և 468 գյուղական համայնքներում, իսկ 398 գյուղական համայնքներ (գյուղական բնակավայրերի 46%-ը) ընդգրկված չեն թափոնների հավաքման ծառայությունում: Քաղաքային աղբավայրերի ընդհանուր տարածքը կազմում է 219 հա: Խոշոր աղբավայրերը գտնվում են Երևանում (ունի 52.3 հա մակերես, որտեղ կուտակված է մոտ 8 մլն. տոննա աղբ), Վանաձորում (13 հա), Գյումրիում (10 հա), Արմավիրում (8 հա), Էջմիածնում (7 հա) և Հրազդանում (6 հա):

ԿԿԹ-ները ներառում են կենցաղային, առևտրական, և այլ տեսակի թափոններ: Բոլոր աղբավայրերում թափոնները կուտակվում են առանց նախնական դասակարգման և բաժանման: Գոյացած ԿԿԹ-ների քանակը կազմում է տարեկան միջինը 700 հազ. տ, տեղափոխվող և պահեստավորվող աղբավայրերում՝ մոտ 510 հազ. տ (մեկ քաղաքաբնակի հաշվով՝ 241 կգ): Բոլոր աղբավայրերը, բացառությամբ Երևանում գտնվող ամենախոշոր աղբավայրի, ոչ կառավարվող են: Քայքայվող օրգանական ածխածինը ԿԿԹ-ների մեջ կազմում է 50- 60%:



Առկա են ՀՀ Կառավարության համապատասխան որոշումների խախտումներ, կապված աղբավայրերի տեղադրման մակերեսների, դրանց թաղման, վնասագերծման և ոչնչացման հետ:

Հայաստանում ԿԹԿ ոլորտի ռազմավարական զարգացման ծրագրի, ճանապարհային քարտեզի և երկարաժամկետ ներդրումային ծրագրի միջանկյալ զեկույցում նշված են հայտնաբերված հիմնական հարցերը՝

- Հայաստանի ներկայիս /2012թ./ ՔԿԹ առաջացման մակարդակը գնահատվում է տարեկան շուրջ 700 հազար տոննա կամ մարդու համար օրեկան շուրջ 0.6 կգ: Քսանհինգ տարվա կտրվածքով թափոնների կառավարումը նշանակում է, որ 2036 թվականին, տարեկան կառաջանա 950 հազար տոննա ՔԹԿ, որը հավասար կլինի մարդու համար օրեկան 0.8 կգ,
- Թափոնների հավաքման որակը և ծածկույթը օպտիմալից ցածր է, չնայած նրան, որ քաղաքային կենտրոններում վիճակն ավելի լավ է, քան գյուղական

բնակավայրերում: Հավաքման և տրանսպորտային սարքավորումները հիմնականում հնացած են և անբավարար են կանոնավոր ծառայության մատուցման համար,

- Թափոնները հեռացվում են անվերահսկելի և տեխնիկապես ոչ հագեցած աղբավայրերում, որտեղ չկա բնապահպանության համար որևէ միջոց և որտեղ պակասում է պրակտիկան: Բացի դրանից, կան բազմաթիվ “վայրի” աղբավայրեր, որտեղ մարդիկ իրենք են թափում թափոնները և որտեղ տարածված է որևէ անվերահսկելի վայրում հասարակ թափոնների հեռացումը,
- Դրա հետևանքով գոյություն ունեն բնապահպանության վրա ներկայիս և ժառանգական ազդեցություններ, իսկ դրան պետք է անդրադառնա Հկ-ը, ստանձնելով բնապահպանության և ֆինանսների համար մեծ պատասխանատվություն,
- Ոչ ստանդարտ աղբավայրից թափոնների փոխադրումը սահմանափակված է վերամշակմամբ, որը թելադրվում է որոշակի տնտեսական արժեք ունեցող և ընտրված վերամշակվելիք ապրանքների համար փոքր, բայց զարգացող անկախ շուկաներով, հիմնականում պլաստմասի, ապակու, թղթի և ալումինումի համար,
- Ներկայիս համակարգի համար սակագները տատանվում են յուրաքանչյուր բնակչի համար 0.20-ից 0.40 եվրոյի շրջանակում, իսկ դա բավարար չէ գոյություն ունեցող համակարգը ֆինանսավորելու համար, չհաշված որևէ բարելավում,
- Ներկայում ԿԹԿ ծառայությունները մատուցվում են քաղաքում սեփականաշնորհված, գործարկվող և քաղաքապետարանին ենթակա կազմակերպությունների կողմից, կամ տեղական մասնավոր օպերատորների հետ կնքվում են կարճաժամկետ պայմանագրեր, դրանք ամբողջապես ֆինանսավորվում են սակագներից ստացված քիչ գումարով, հանրային ոլորտի բյուջեներից ստացվող հատուկենտ կապիտալ դրամաշնորհներով կամ երբեմն տարբեր երկրներից ուղարկվող նվիրատվություններով:
- Մինչ օրս, ազգային և միջազգային նախաձեռնությունները բնութագրվել են համեմատաբար չհամակարգված, մասնատված, աստիճանական մոտեցմամբ՝ առանց որևէ հասանելի ընդհանուր ազգային քաղաքականության, պլանավորման կամ առաջնահերթությունը սահմանող շրջանակի, որի վրա հիմնված կլինի ներդրումների համար որոշումների կայացումը:
- 2012 թվականի ընթացքում կազմակերպությունների տարածքում առաջացել է 39.0 մլն.տ. թափոն: ՀՀ մեկ բնակչի հաշվով առաջացած թափոնների քանակը

կազմել է 12.9տ., իսկ ՀՀ տարածքի (առանց Սևանա լճի հայելու մակերեսի) մեկ քառ. կմ-ի հաշվով՝ 1.4մլն.տ.:

Համաշխարհային բանկի գեկույցի համաձայն՝ քաղաքային աղբի արտադրությունն ավելի արագ է աճում, քան ուրբանիզացիան:

Մինչև 2025թ. յուրաքանչյուր մարդու կողմից կանխատեսվում է, որ օրական կարտադրվի 1.42 կգ քաղաքային կոշտ թափոն, այսօր արտադրվող օրական 0.6 կգ-ի փոխարեն:

Ներկայում ՀՀ-ն ունի «Մաքուր զարգացման մեխանիզմի» միջազգային գործադիր խորհրդի կողմից գրանցված և իրականացման կամ շահագործման մեջ գտնվող թվով 5 նախագծեր, այդ թվում Երևանի Նուբարաշենի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կենսագազի օգտահանման նախագիծը, որի կարևորությունը պայմանավորված է Երևանում և մերձակա շրջաններում մեծ քանակությամբ թափոնների հեռացման հիմնախնդրով:

Վնասակար արտանետումները նվազեցնելու նպատակով Երևան քաղաքի Նուբարաշենի աղբավայրում (ընդհանուր տարածքը՝ 52.3 հա) ծրագրվել էր իրականացնել կենսագազի օգտահանման և էլեկտրական էներգիայի արտադրության հայ-ճապոնական նախագիծ, որի քննարկումները ծավալվել էին դեռևս 2002 թ-ից:

Օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից անշարժ գույքի գրանցում են ստացել 30 աղբավայր, իսկ օրինակ , Արագածոտնի մարզի Օշական համայնքի վարչական տարածքում՝ Աշտարակ-Էջմիածին մայրուղու հարևանությամբ, 1.58 հա մակերեսով աղբավայրի հողատարածքը, որտեղ տեղադրվում է նաև Երևանում առաջացող աղբի մի մասը, ոչ միայն չունի պետական գրանցում, այլ նաև հանդիսանում է գյուղ. նշանակության (արտավայր) հող: Արարատի մարզի Վեդի քաղաքի միջհամայնքային, Արտաշատ և Մասիս քաղաքների աղբավայրերը թեև արտոնագրված են, սակայն չեն համապատասխանում աղբավայրերի շահագործման նորմերին, քանի որ Արարատյան դաշտում բարձր է գրունտային ջրերի մակարդակը, իսկ օրինակ Մասիս քաղաքի աղբավայրը տեղաբաշխված է գետի անմիջական հարևանությամբ: Գյուղ. նշանակության, մշակովի հողատարածքների և գետակի անմիջական հարևանությամբ՝ Երևան- Մասիս ավտոճանապարհի նորաբաց համայնքի հատվածում շուրջ 1.0 հա մակերեսով աղբավայրը ևս օրինական չէ:

Ըստ վիճակագրական հաշվառման տվյալների ՀՀ տարածքում տարեկան առաջանում և աղբավայրեր տեղափոխվում է շուրջ 1.5 մլն մ3 կամ 535.2 հազ. տոննա (1000մ3 –ը 350տ. ընդունելու դեպքում) կենցաղային աղբ: Ընդ որում 57%-ը՝ 868 հազ. մ3 բաժինն ընկնում է Երևան քաղաքին, իսկ Հայաստանի Հանրապետության

քաղաքաշինության նախարարության տվյալների համաձայն՝ Հայաստանում տարեկան գոյանում է ավելի քան 700.000 տոննա թափոն: Միայն Նուբարաշենի աղբավայր օրական տեղափոխվում է շուրջ 450-470 տոննա կենցաղային աղբ, տարեկան՝ 170-180.000 տոննա:

Հայաստանի Հանրապետությունում գործում են 242 օրինական աղբավայրեր, որոնք զբաղեցնում են 1344 հեկտար տարածք: Բացի այդ, գոյություն ունեն պաշտոնապես չգրանցված 196 աղբավայրեր՝ 171,2 հեկտար տարածքով: Ամենախոշորը Նուբարաշենի աղբավայրն է, որը զբաղեցնում է մոտ 50 հա տարածք: Հայաստանում աղբավայրերը հետզհետե շատանում են մշակման ենթակա հողատարածքների հաշվին:

Աղբավայրերում թափոնների կուտակումը և այրումը նպաստում են օդի, ջրի և հողի աղտոտմանը, ինչպես նաև առաջացնում են աղմուկ և այլ անախորժ երևույթներ: Բացի այդ, քաղաքային և վտանգավոր թափոնների կառավարման տնտեսական ծախսերը տարեկան կազմում են շուրջ 75 մլրդ եվրո:

Թափոնների աճով են բացատրվում բնապահպանական, սոցիալական և տնտեսական մարտահրավերները: ԵՄ 6-րդ Բնապահպանական գործողությունների ծրագրով թափոնների կառավարումը հայտարարված է որպես չորս գերակա նպատակներից մեկը: Աղբավայրերը ոչ միայն գրավում են ավելի ու ավելի մեծ ու արժեքավոր հողային տարածքներ, այլև աղտոտում են օդը, ջուրը և հողը, մթնոլորտ են արտանետում ածխածնի երկօքսիդ (CO_2), մեթան (CH_4) և այլ գազեր, քիմիական նյութերով և պեստիցիդներով աղտոտում են հողը և ստորերկրյա ջրային պաշարները, ինչն էլ իր հերթին վնասակար է մարդու առողջության, բույսերի և կենդանիների համար:

4.5.2. Թափոնների կառավարման վերաբեյալ ԵՄ մոտեցումը՝ որպես միջազգային պրակտիկայի օրինակ

Եվրամիության մոտեցումը թափոնների կառավարման հարցին հիմնված է երեք սկզբունքների վրա:

Թափոնների կանխարգելում. այն կարևոր գործոն է ցանկացած թափոնի կառավարման ռազմավարությունում: Եթե կարելի է նվազեցնել թափոնների գոյացումը հենց սկզբից և նվազեցնել նաև նրանց վտանգավորությունը՝ փոքրացնելով վտանգավոր նյութերի առկայությունը արտադրանքի մեջ, ապա նրանց կառավարման խնդիրը ինքնաբերաբար կհեշտանա: Թափոնների կանխարգելումը

սերտորեն կապված է արտադրական մեթոդների բարելավման և սպառողների կողմից կանաչ արտադրանքի և ավելի քիչ փաթեթավորման պահանջարկի հետ:

Վերամշակում և վերաօգտագործում. եթե թափոնների առաջացումը հնարավոր չէ կանխել, ապա նյութերը, որքան հնարավոր է, պետք է վերականգնել, նախընտրելի է վերամշակման միջոցով: Եվրոպական հանձնաժողովը սահմանել է առաջնային ուշադրություն պահանջող մի շարք հատուկ “թափոնների հոսքեր”, նպատակ ունենալով ընդհանուր առմամբ նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Այն ներառում է փաթեթավորման աղբը, օգտագործումից դուրս եկած մեքենաները, մարտկոցները, էլեկտրական և էլեկտրոնային թափոնները: ԵՄ-ի դիրեկտիվներն այժմ պահանջում են անդամ պետություններից ընդունել թափոնների հավաքման, վերաօգտագործման, վերամշակման և տնօրինման օրենսդրական փաստաթղթեր: ԵՄ-ի մի քանի երկրների արդեն հաջողվել է վերամշակել փաթեթավորման թափոնների 50 % - ը:

Վերջնական կուտակում ու վերահսկողության ընթացքի կատարելագործում. այն թափոնները, որոնք չեն կարող վերամշակվել կամ օգտագործվել նորից, պետք է անվտանգ եղանակով այրվեն: Աղբավայրերում կուտակումը մնում է որպես ամենավերջին միջոց:

Այս երկու մեթոդները պահանջում են լուրջ մոնիտորինգ, քանի որ ունեն ծանր բնապահպանական վնաս պատճառելու մեծ ներուժ: ԵՄ-ը վերջերս հաստատել է աղբավայրերի կառավարման դիրեկտիվներ: Այն արգելում է թափոնների որոշ տեսակներ, օրինակ, օգտագործած անվադողեր, և սահմանում է կենսաբանորեն քայքայվող աղբի քանակի նվազեցման թիրախներ: Մեկ ուրիշ դիրեկտիվ խստորեն սահմանում է աղբայրիչներից արտանետումների ծավալները: Միությունը նաև ցանկանում է նվազեցնել դիօքսինների և գազերի արտանետումները, ինչպիսիք են ազոտի օքսիդները (NO_x), ծծմբի երկօքսիդները (SO_2) և ջրածնային քլորիդները (HCl), որոնք կարող են վնասակար լինել մարդու առողջության համար:

ՀՀ-ում կոշտ կենցաղային թափոնների հավաքումն իրականացվում է 49 քաղաքային և 468 գյուղական համայնքներում (գյուղ. բնակավայրերի 46%) ընդգրկված չեն թափոնների հավաքման ծառայությունում:

Կան համայնքներ, որտեղ աղբահանությունը կատարվում է տարերայնորեն և չհավաքվող ու չհեռացվող աղբը սովորաբար հայտնվում է գետերի ափերին կամ գոգերում՝ աղտոտելով շրջակա միջավայրը և ստեղծելով ռիսկեր մարդու առողջության համար: Երբեմն աղբավայրերը գտնվում են բարձրադիր վայրերում, օրինակ Լոռու մարզի Արջուտ գյուղի մոտ գտնվող 5,6 հա մարերեսով աղբավայրը և դրանց տարածքով հոսում են ձնհալից առաջացած ջրերը, նրա հարակից տարածքներն օգտագործվում են գյուղ. նպատակներով, որոնք մշտապես աղտոտվում

են թափոններով և կեղտաջրերով: Առանձին աղբավայրեր օգտագործվում են գյուղատնտեսական կենդանիների կերակրման համար, որը մեծ վտանգ է ներկայացնում մարդկան առողջության համար: Այս աղբավայրերից օգտվում են նաև վայրի կենդանիները օրինակ աղվեսները, որոնք լուրջ վարակի տարածման աղբյուր են հանդիսանում և վտանգում կենսաբազմազանությանը, ինչպես նաև վարակը փոխանցում են այլ կենդանիներին:

Չտեսակավորված կենցաղային աղբը համաձայն թափոնների մասին օրենսդրության, հանդիսանում է վտանգավոր թափոն, մինչդեռ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում վտանգավոր թափոնների հետ կապված հարաբերությունները, հետևաբար, այդ օրենքի դրույթները չեն կարող տարածվել կենցաղային աղբի աղբահանության գործընթացի հարաբերությունների վրա:

Ըստ վիճակագրական տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում տարեկան շուրջ 1 529 000 մ3 կամ 5 352 000 տոննա կենցաղային կոշտ թափոններ են գեներացվում և տեղափոխվում աղբանոցներ, որից 57.0%-ը (868.0 մ3)՝ Երեւանում:

Թափոնների կառավարման ոլորտում վերահսկողության հետ կապված հարցեր կան, մասնավորապես, երկրում կան 245 պաշտոնապես գրանցված աղբանոցներ, որոնք զբաղեցնում են 1344 հա, որից միայն 19-ն են գրանցված թափոնների հեռացման վայրերի գրանցամատյանում (ինչպես արձանագրում է Վերահսկիչ պալատը):

Ոչ պաշտոնական տվյալների համաձայն երկրում կա մոտ 200 անօրինական աղբանոց, որոնք զբաղեցնում են 170 հա:

Միևնույն ժամանակ աղբանոցներին կից տարածքները ծայրահեղ վատ վիճակում են, դրանցից շատերը չեն համապատասխանում սանիտարական պաշտպանության գոտիների նորմերին:

ՀՀ-ում կոշտ կենցաղային թափոնների հավաքումն իրականացվում է 49 քաղաքային և 468 գյուղական համայնքներում (գյուղ. բնակավայրերի 46%) ընդգրկված չեն թափոնների հավաքման ծառայությունում:

Քաղաքային աղբանոցների ընդհանուր մակերեսը 219 հեկտար է: Խոշոր աղբանոցները գտնվում են Երեւանում (52.3 հա եւ 8 մլն տոննա կուտակված աղբ), Վանաձորում (13 հա), Գյումրիում (10 հա), Արմավիրում (8 հա), Էջմիածնում (7 հա) եւ Հրազդանում (6 հա):



ԿԹ ներառում է կենցաղային, առևտրային եւ այլ տեսակի թափոններ: Բոլոր աղբավայրերում թափոնները կուտակվում են առանց նախնական դասակարգման եւ տարանջատման: Կոշտ թափոնների գեներացված քանակը մոտավորապես 700 հազար տոննա է, որից տեղափոխվում եւ աղբանոցներում պահվում է մոտ 510 հազար տոննա (241 կգ մեկ շնչի համար): Ոչ մի աղբանոց, բացի Երեւանում գտնվող ամենամեծ աղբանոցից, չի վերահսկվում: Կոշտ թափոններում քայքայվող օրգանական ածխածինը կազմում է 50- 60%:

Աղբանոցների տեղակայման տարածքի, դրանց տեղադրման, վնասագերծման եւ ոչնչացման հետ կապված ՀՀ կառավարության համապատասխան որոշումների խախտումներ կան:



4.5.3. Աղբահանության վիճակը ՀՀ ԲՀՊՏ-ներում

Հայաստանի Հանրապետության ԲՀՊՏ-ներում աղբահանությունը կատարվում է տարերայնորեն, ոչ պլանավորված և չկազմակերպված: Թերևս բացառություն է կազմում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, որտեղ աղբահանությունը կատարվում է հանրային լողափերում, այն էլ միայն սեզոնի ընթացքում:

Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել ԲՀՊՏ-ների աղբահանության վրա, քանի որ առաջիկայում՝ էկոլոգոսաշրջության զարգացման հետ միասին, այս հարցը կմղվի առաջնային պլան:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

5.1. Տնտեսությունը

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական աճի ցուցանիշը 2013-2014թթ կազմել է 3.5 %, իսկ 2015 թվականին փոքր ինչ նվազել է՝ կազմելով 3.1%: 2015 թ-ին հանրապետության յուրաքանչյուր բնակչի հաշվով համախառն ներքին արդյունքը կազմել է 3864 դոլար, իսկ տնտեսական ակտիվության ցուցանիշը՝ 3.1 %, ինչը վատ ցուցանիշ չէ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ներկայիս փուլում: Հարկ է նշել, որ թեև համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո տնտեսական աճի տեմպերը (2011 թվականից սկսած) զիջում են մինչճգնաժամային աճի ցուցանիշներին, այնուամենայնիվ երկրի տնտեսական աճի կառուցվածքում տեղի են ունեցել զգալի որակական տեղաշարժեր՝ ի օգուտավելի արտադրողական ճյուղերի, որի պարագայում տնտեսական աճին առավելապես նպաստել են տնտեսության արտահանելի հատվածը, մասնավորապես՝ գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը /հատկապես հանքային արդյունաբերությունը/:

Հայաստանի նախաճգնաժամային ՀՆԱ-ի մակարդակը (2002-2006 թթ.) գրեթե ամբողջությամբ վերականգնվեց 2013 թվականին, որն ուղեկցվեց տնտեսության բոլոր ճյուղերում վերականգնման համեմատաբար բարձր ցուցանիշներով, բացառությամբ շինարարության:

2015 թվականին 2014-ի համեմատությամբ, Հայաստանի տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է որոշակի աճ, բացառությամբ շինարարության և առևտրի շրջանառության, որոնք նվազել են համապատասխանաբար 3.1 և 7.1 տոկոսներով:


2015 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ հանրապետության տնտեսության ճյուղերից առավել բարձր աճ է արձանագրվել գյուղատնտեսության ոլորտում՝ շուրջ 12 %, որը պայմանավորված էր ինչպես բարենպաստ բնակլիմայական պայմաններով, այնպես էլ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված՝ գյուղատնտեսության օժանդակությանն ուղղված մի շարք ծրագրերի իրականացմամբ: Միաժամանակ ակնհայտ է, որ նախորդ տարիներին դրսևորված զարգացման միտումները և գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական կարգավորման քաղաքականությունը հուսալի նախադրյալներ են ստեղծում այս ոլորտում առաջիկա տարիներին ևս կայուն և տևական աճ ապահովելու համար:

Աղյուսակ 17. Հայաստանի Հանրապետության տնտեսության ճյուղերի աճը՝ ըստ տարիների/ավելացված արժեքով/

Տնտեսության ճյուղերը	2011	2012	2013	2014	2015	2016 /կանխատեսում/ (ըստ տնտեսագետների)
Արդյունաբերություն	13.9	8.8	6.9	2.7	5.2	5.0
Գյուղատնտեսություն	14.0	9.5	7.1	7.2	11.7	9.5
Շինարարություն	-9.1	-2.6	-7.7	0.2	-3.1	1.0
Ծառայություններ	5.4	10.8	3.6	8.7	2.7	3.0
Արտադրանքի հարկեր /հանած սուբսիդիաներ/	3.8	9.9	2.8	4.0	4.5	4.2
Տնտեսական աճ	4,7	7,2	3,5	3,5	3,1	3,5

**«Հայաստանի Հանրապետության տնտեսությունը» ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2015թ.*

Չճապատկեր 12: Կոշտ կենցաղային թափոնների տարեկան ծավալները (հազար խորհանարդ մետր) և ՀՆԱ-ի ցուցանիշը (%) ըստ տարիների



Ըստ տնտեսագետների կանխատեսումների, Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ-ի ցուցանիշը 2016 – 2020 թվականներին կտատանվի 3,5 – 4,5 %-ի սահմաններում, ընդ որում, այս ցուցանիշը կունենա թեև փոքր, սակայն կայուն աճման միտումներ:

Միաժամանակ, պետք է փաստել, որ ՀՆԱ-ի ցուցանիշի աճին զուգահեռ որոշակիորեն ավելանում են նաև կոշտ կենցաղային թափոնների ծավալները:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հսկայածավալ ներդրումներ են իրականացվել հատկապես տրանսպորտի, էներգետիկայի և գյուղատնտեսության ոլորտներում, ինչն իր հերթին նպաստել է տնտեսության թեև չափավոր, այնուամենայնիվ կայուն աճին:

5.2. Ժողովրդագրական տվյալները և ազգաբնակչության սոցիալական վիճակը

Համաձայն կանխատեսումների, տնտեսության խթանման, նոր աշխատատեղերի ստեղծման արդյունքում առաջիկա 5 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության ազգաբնակչությունը կաճի տարեկան 10 – 15 հազարով և 2020 թվականին կկազմի 3 մլն. 50 հազար մարդ կամ 2015 թվականի

համեմատությամբ բնակչության թիվը կավելանա ընդամենը 1,7%-ով: Դրան գուցահեռ, առաջիկա 5 տարվա ընթացքում կոշտ կենցաղային թափոնների ծավալը կաճի 86 հազար խորհանարդ մետրով կամ 4,7%-ով, ինչը նշանակում է, որ մինչև 2020 թվականը Հայաստանում ստացվող կոշտ կենցաղային թափոնների տարեկան աճը չի գերազանցի 1%-ի սահմանը: Գրեթե նույն իրավիճակը կարող է պահպանվել 2020 թվականին հաջորդող տասնամյակի ընթացքում:

Այստեղից հետևում է, որ կոշտ կենցաղային թափոնների կառավարմանն ուղղված ներկայիս ռազմավարությունը կարող է արդիական համարվել առնվազն հաջորդող 15 տարիների ընթացքում:

Տնտեսության վերականգնմանը զուգընթաց դրական տեղաշարժեր արձանագրվեցին նաև աշխատանքի շուկայում: Այսպես, եթե 2010 թ-ին գործազրկության մակարդակը Հայաստանում կազմում էր 19%, ապա այս ցուցանիշի շարունակական նվազման արդյունքում 2015 թ-ին այն կազմեց 15.8 %: Ընդ որում, գործազուրկների 56 %-ը կանայք են, 44 %-ը՝ տղամարդիկ: Սակայն խիստ տարբերակված է գործազրկության մակարդակը քաղաքներում և գյուղերում: Այսպես, գյուղական բնակավայրերում աշխատատեղերի սակավության պատճառով գործազրկությունը կազմում է 85 %, մինչդեռ քաղաքներում այն կազմում է ընդամենը 15 %:

Վերջին 3 տարիների ընթացքում որոշակիորեն ավելացել են նաև պետական և մասնավոր հատվածում ներգրավված աշխատողների միջին աշխատավարձի չափերը: Այսպես, 2103 թ-ին արձանագրվել է միջին աշխատավարձի շուրջ 4 % աճ, 2014թ-ին՝ 6%: 2015թ-ին, 3.4 % միջին գնաճի պայմաններում, 1 աշխատողի հաշվով իրական ամսական աշխատավարձերն աճել են 3.9 տոկոսով և կազմել. պետական հատվածում՝ 142.1 հազ. Դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ շուրջ 195 հազ. Դրամ:

Վերը նշված ցուցանիշների շնորհիվ վերջին տարիները կարելի է բնութագրել որպես տարեցների և հաշմանդամների սոցիալական աջակցության ոլորտի զարգացման ժամանակաշրջան: Բարելավվել է տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման որակը, ընդլայնվել մատուցվող ծառայությունների տեսականին, ինչպես նաև հիմնադրվել են բնակչության խոցելի խավերին աջակցող նոր կառույցներ: Մեծահասակների ծերության կենսաթոշակները և հաշմանդամներին ուղղվող նպաստները միայն վերջին 3 տարիների ընթացքում աճել են գրեթե 40%-ով:

Վերջին տարիներին զգալի առաջընթաց է նկատվել նաև օրենսդրական դաշտի կարգավորման ուղղությամբ: Համաձայն՝ CIVICUS ՝ Քաղաքացիական ինդեքս նախագծի իրականացրած վերլուծությունների արդյունքների, հանրապետությունում գործող քաղաքացիական հասարակական կազմակերպությունների

մեծամասնությունը/65.6 %/, համարում են, որ քաղաքացիական հասարակության համար երկրի օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը կամ չափավոր, կամ էլ լիովին նպաստավոր են: Հայաստանյան քաղաքացիական հասարակության գործունեությունը կանոնակարգող օրենսդրական դաշտին շնորհիվ է 3.9 ցուցանիշը, ինչը նշանակում է, որ օրենսդրական դաշտը գտնվում է անցումային միջին շրջանում:

5.3. Թափոնների կառավարման վիճակը

Հայաստանի Հանրապետության ազգաբնակչությունը կենտրոնացված է 48 քաղաքային և 925 գյուղական համայնքներում, որոնք ընդգրկված են հանրապետության 11 վարչատարածքային միավորումներում (տես նեքսի աղույակը): Վերջին տարիներին հավաքված կոշտ կենցաղային թափոնների ծավալը՝ Երևան քաղաքում և հանրապետության մարզերի քաղաքային համայնքներում, ներկայացված է ստորև.

Աղյուսակ 18. *Կոշտ կենցաղային թափոնների ծավալը Երևան քաղաքում և հանրապետության մարզերի քաղաքային համայնքներում, հազար խորանարդ մետր*

Մարզեր (վարչատարածքային միավորներ)	2011	2012	2013	2014	2015	Կոշտ կենց. Թափոնների վճարը 2014 թ. Հազ.դրամ (տարեկան ազգաբնակչություն)
Ք.Երևան	939.5	1380.2	1386.5	1188.3	1075.3	33 900.7
Արագածոտն	63.8	63.6	37.5	58.4	57.7	1 757.4
Արարատ	32.7	53.0	59.0	65.0	67.4	3 097.1
Արմավիր	133.9	140.5	138.7	154.9	160.6	5 108.6
Գեղարքունիք	59.8	60.9	60.1	52.4	51.4	2 218.5
Լոռի	87.0	84.4	80.0	85.3	86.1	4 051.7
Կոտայք	74.2	62.7	81.7	97.8	102.3	4 566.9
Շիրակ	77.8	84.8	67.4	60.4	59.8	2 169.0
Սյունիք	57.7	59.3	51.0	44.2	41.4	5 140.8
Վայոց ձոր	5.4	14.5	15.3	18.7	19.5	487.6
Տավուշ	84.0	86.1	93.5	91.9	92.4	2 277.1
Ընդամենը՝ ՀՀ	1615.8	2090.0	2070.7	1917.3	1813.9	64 775.4

**«Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2014 թվականին» ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2015թ.*

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, վերջին 3 տարիներին կոշտ կենցաղային թափոնների ծավալները կրճատվել են: 2015 թ-ին թափոնակուտակիչներում կոշտ կենցաղային թափոնների տեղադրման դիմաց վճարը կազմել է շուրջ 64.8 մլն դրամ, որը կազմել է բնապահպանական ընդհանուր վճարների 4.5 տոկոսը:

5.4. Մշակութային ժառանգություն

Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 3 պետական արգելոցներ,⁴ ազգային պարկեր,²⁷ պետական արգելավայրեր: Բացի այդ, հանրապետության տարածքում առկա են 232 բնական հուշարձաններ, որից.

106՝ երկրաբանական, 48՝ ջրաերկրաբանական, 40՝ ջրագրական, 17՝ բնապատմական և 21՝ կենսաբանական: Բնականաբար, թափոնների կառավարման պլաններում հաշվի է առնվում վերոհիշյալ հանգամանքը և թափոնակուտակիչները տեղադրվում են այնպիսի վայրերում, որպեսզի դրանք սահմանված նորմատիվներով հեռու լինեն վերը նշված վայրերից:

5.5. Երկրի սոցիալ-տնտեսական ոլորտում ծառացած խնդիրները

Շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման համար կարևոր նշանակություն ունի կենցաղային կոշտ թափոնների կառավարման խնդիրը: Ներկայումս բավականին հրատապ է դարձել կենցաղային կոշտ թափոնների հավաքման, տեղադրման և աղբավայրերի համակարգի կառավարման մի շարք հարցեր: Այդ ուղղությամբ՝ անհրաժեշտ է մշակել նշված համակարգի արդիականացման ռազմավարական ծրագիր, որը ենթադրում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝

- խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների կազմում և վերամշակման համար բիզնես ծրագրերի մշակում,
- թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի իրականացում շրջակա միջավայրի վրա թափոնների ներգործության գնահատում,
- թափոնների համար աղբավայրերի հողհատկացում և քարտեզագրում,
- միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում,
- առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և ցանկապատման աշխատանքների իրականացում,

- սանիտարական պահպանման գոտիների սահմանազատում, ինչը կխոչընդոտի գյուղատնտեսական կենդանիների անարգել մուտքը, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիներին կերակրելու նպատակով հացի և սննդի այլ մնացորդների հավաքը և կնվազեցնի վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածման ռիսկերը,
- շրջակա միջավայրը խաթարող թափոնակուտակումների լիկվիդացում և ռեկուլտիվացում,
- աղբի վերամշակման գործարանի կառուցում,
- համայնքներում տարածքների սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողության ուժեղացում,
- բնակավայրերին շատ մոտ տեղակայված աղբակուտակիչների հետևանքով զարշահոտության տարածում:

Վերը նշված խնդիրներից զատ Հայաստանի սոցիալ տնտեսական ոլորտում կան նաև գլոբալ հիմնախնդիրներ, որոնք ուղղակի ազդեցությունն են թողնում երկրի տնտեսության և ազգաբնակչության սոցիալական վիճակի վրա: Ներկայումս երկրի սոցիալ-տնտեսական ոլորտի առավել ծառացած հիմնախնդիրներից են.

1. Բնակչության նվազումը՝ միգրացիայի պատճառով: Եթե 2013 թ-ին

հանրապետության ազգաբնակչության թիվը կազմել էր 3.027 մլն մարդ, ապա 2014 թ-ին այն կազմել է 3.017 մլն, իսկ 2015թ-ին այն արդեն նվազել է 3 մլն-ից և կազմել 2 մլն 998 հազար մարդ;

2. Բնակչության գնողունակության անկումը՝ դրսից ուղարկվող տրանսֆերտների՝ գրեթե 40 %-ով նվազման արդյունքում (ինչը փաստում են Հայաստանի տնտեսության վերաբերյալ տարբեր վերլուծությունները): Աղբյուր՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսությունը» ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2015թ.

3. Բնակչության աղքատության բարձր մակարդակը: Վերլուծությունները ցույց են տալիս, որ վերջին 3-4 տարիների ընթացքում աղքատության մակարդակը չի նվազում և տատանվում է 30 %-ի սահմաններում:

**Աղյուսակ 19. Առկա հիմնախնդիրները և
կապը թափոնների կառավարման պլանի հետ**

Հիմնական հարցերը	Կոնկրետ մտահոգություններն ու խնդիրները	Աշխարհագրական տարածքները	Թափոնների կառավարման պլանի հետ հնարավոր կապը
Սոցիա- տնտեսական ոլորտ	Բնակավայրերի հարևանությամբ սողանքային հողերում խիստ վտանգավոր թունաքիմիկատների գերեզմանոցի առկայություն	Երևանի ծայրամասում գտնվող Նուբարաշենի աղբակուտակիչին հարակից տարածք	Իրականացվում է ծրագիր դրանք կոնսերվացնելու համար (մեկ այլ ծրագրի շրջանակներում)
	Աղբակուտակիչների տարածքների ընդարձակումը գյուղատնտեսական հողերի հաշվին (անօրինական աղբանետումների արդյունքում)	Քաղաքատիպ ավանների և գյուղերի գերակշիռ մասում	Աղբակուտակիչների տեղադրման ընդհանուր տարածական պլանի բացակայություն
	Աղբակուտակիչներից 500-1000 մետր շառավիղով գարշահոտության տարածում	Բնակավայրեր, որոնցում աղբակուտակիչները գտնվում են 500-1000 մ. Հեռավորության վրա/գյուղերի շուրջ 25 տոկոսում/	
	Աղբակուտակիչներից հացի և սննդամթերքի մնացորդի հավաքում՝ խոզերի կերակրման նպատակով	Երևանի ծայրամասում գտնվող Նուբարաշենի աղբավայր	Թափոնների վերամշակման կազմակերպում

6. ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

6.1. Մարդու առողջությանն առնչվող խնդիրներ և թափոնների կառավարում

Հայաստանի Հանրապետությունում մարդու առողջության խնդիրներ և թափոնների կառավարում

1. Հայաստանի Հանրապետության տարածքում յուրաքանչյուր ծրագիր, որն
իրականացվում է գոյություն ունեցող ԿԿԹ հավաքման, տեղափոխման և
վերամշակման համակարգը փոփոխելու ուղղությամբ, արդարացված է: Դրանց
թվին է պատկանում ՌԵԳ-ին ներկայացված «Հայաստանում ԿԿԹ ոլորտի

Ռազմավարական զարգացման ծրագիր, Ճանապարհային քարտեզ և Երկարաժամկետ ներդրումային ծրագիր» նախագիծը: Հայաստանում ներկայիս գոյություն ունեցող ԿԿԹԿ համակարգն անկատար է, կրում է բազմաթիվ ռիսկեր, հատկապես՝ կապված մարդու առողջության վրա ազդող գործոնների հետ: Վերջիններիս ազդեցությանն են ենթարկվում ՀՀ տարածքի բոլոր գոտիների բնակչությունը, տարիքային և ռիսկի բոլոր խմբերը (երեխաներ, մեծեր, մեծահասակներ, ծերեր, հղիներ, ցածր դիմադրողականություն ունեցող անձիք, հիվանդներ և այլն)՝ կյանքի տևողության ողջ ընթացքում:

2. Մարդու վրա ԿԿԹ-ների ներգործությունն իրականանում է հետևյալ ճանապարհներով՝ հողի, խմելու և մակերեսային ջրերի, մթնոլորտային օդի և աշխատանքային գոտու օդային միջավայրի, սննդային շղթայի միջոցով և օրգանոլեպտիկ եղանակով: Ներգործող ազդակներ են հանդիսանում քիմիական մանրէային, վիրուսային և մակաբուծային գործոնները: ՀՀ առողջապահական համակարգի կողմից առավել ուսումնասիրված է համաճարակային վտանգ ներկայացնող գործոններով պայմանավորված հիվանդացությունը՝ մանրէային, վիրուսային և մակաբուծային վարակների տարածվածությունը:

- 1) Ըստ ուսումնասիրությունների՝ աղբարկղերի շուրջը, 15 մետր շառավղով, համարվում է մանրէաբանական ցուցանիշներով ամենավարակված տարածք և գործնականում, վիրուսային վարակներով հիվանդացության բարձրացման ժամանակ, այդ տարածքներից նմուշառված ճանճերից հիմնականում անջատվում են էնտերավիրուսներ:

- 2) Հայտնի է, որ բոլոր տեսակի օբյեկտները, այդ թվում նաև ԿԿԹ-ներից, ճանճերը կարող են տեղափոխել/փոխանցել ավելի քան 63 տեսակի միկրոօրգանիզմներ (աղիքային ցուպիկ, մանրէային դիզենտերիայի հարուցիչներ, պոլիոմիելիտի վիրուսներ և այլն), ինչպես նաև հելմինթների ձվիկներ և մանր տզեր: Միկրոօրգանիզմների և տզերի հավելյալ փոխանցողներ և/կամ կրողներ կարող են հանդիսանալ նաև առնետներն ու մկները, որոնք հանդիսանում են սանիտարական անբարեհաջող վիճակի ուղղակի ցուցիչներ:

- 3) Միջազգային գործնականում գրանցվել են մարդկանց ՁԻԱՀ-վարակով, հեպատիտ Բ-ով վարակման և հիվանդացման դեպքեր բժշկական թափոնների միջոցով. սովորաբար վարակվում են աղբանոցներին մոտ տարածքներում խաղացող երեխաները, որոնք խաղում են գտնված ներարկիչներով և սրվակներով:


- 4) Ստորև ներկայացվում են որոշ համաճարակային անբարենպաստ պայմանների մասին վկայող աղիքային վարակներով հիվանդացության

օրինակներ, որոնց փոխանցման մեխանիզմներում իրենց դերն ունեն նաև ԿԿԹ-ները, դրանց ճիշտ կառավարման բացակայությունը:

ա. Ընդհանուր աղիքային խմբում ներառված են դիզենտերիան, իերսինիոզը, չհաստատված հարուցիչներով սուր աղիքային վարակների խումբը, գաստրոէնտերոկոլիտները, էնտերովիրուսային և ռոտավիրուսային վարակները, ինչպես նաև սննդային տոքսիկոինֆեկցիաները և այլն: Սկսած 2005թ.,


Հայաստանում նկատվում է աղիքային վարակներով հիվանդացության աճ՝ 147.6-ից 312.6՝ 100 հազ. բնակչի հաշվով (Գծապատկեր 13):

Գծապատկեր 13




Ելնելով 2012-2014թթ. ընդհանուր աղիքային խմբի վարակներով հիվանդացության համեմատականից, հիվանդացության աճ է դիտվում Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի մարզերում և ք. Երևանում, իսկ Գեղարքունիքի մարզում հիվանդացությունը մնում է կայուն բարձր (Քարտեզ 2):

Քարտեզ 2. Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր աղիքային խմբի հիվանդացության 2012-2014թթ.




2014 թվականին մանրեային դիզենտերիայով հիվանդացության ցուցանիշը 100 հազ. բնակչի հաշվարկով կազմում է 22.8. միջին հանրապետականից բարձր հիվանդացության ցուցանիշ արձանագրվել է 64.8՝ Շիրակի, 46.4 Գեղարքունիքի և 36.7՝ Արմավիրի մարզերում, մնացած մարզերում ցուցանիշները եղել են միջին հանրապետականից ցածր, մասնավորապես. 20.5՝ Սյունիքի, 18.8՝ Կոտայքի մարզերում, 16.5՝ Երևան քաղաքում, 13.5՝ Վայոց Ձորի, 10.3՝ Լոռու, 7.8՝ Տավուշի, 6.8՝ Արագածոտնի և 6.1՝ Արարատի մարզերում (Գծապատկեր 14):

Գծապատկեր 14




2013-2014 թվականներին հանրապետությունում համեմատած նախորդ տարիների հետ, «Գաստրոէնտերոկոլիտներ, սննդային տոքսիկոինֆեկցիա» հաստատված հարուցիչներով վարակների տեսանկյունից նկատվել է աճ, 2005-2014 թվականներին՝ 100 հազ. բնակչի հաշվարկով արձանագրվել է աճ՝ 4.3 անգամ (Գծապատկեր 15 և 16՝ ՀՀ-ում և ըստ մարզերի):

Գծապատկեր 15




Գծապատկեր 16



1. ՀՀ տարածքում ԿԿԹ-ների անբարենպաստ ազդեցությանը ենթարկվող բնակչության առավել թիրախային խմբեր են հանդիսանում՝

1) անմիջապես խոշոր աղբավայրերի սանիտարական պաշտպանության գոտիներին հարող տարածքների բնակիչները,

- 2) աղբի հավաքման, տեղափոխման և վերամշակման գործընթացներում ներգրավված կոմունալ տնտեսության աշխատակիցները,
 - 3) բազմահարկ շենքերի ցածր հարկերի բնակիչները:
2. Մարդու առողջության վրա ԿԿԹ-ների ազդեցության գնահատման համար խոչընդոտ են հանդիսանում այն հանագամանքները, որ մինչ օրս
- 1) մշակված չեն ԿԿԹ-ների վտանգավորության գնահատման մեթոդներ,
 - 2) ԿԿԹ-ները դասակարգված չեն ըստ շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա ունեցած ազդեցության ներուժի,
 - 3) մշակված չեն ԿԿԹ-ների վնասակարարության աստիճանի որոշման հիգիենիկ հետազոտությունների համապատասխան մեթոդներ և ավգորիթմներ:
 - 4) բնակչության թիրախային խմբերում հիվանդացության և ԿԿԹ-ների վնասակար ազդեցության կապը հաստատող հետազոտությունների և/կամ մշտադիտարկումների վերաբերյալ տեղեկություններ չկան:
3. Չնայած հետազոտական փաստացի տվյալների, և, հետևաբար, նաև պատճառահետևանքային կապը հաստատող եզրակացությունների բացակայությանը, կարելի է, հիմնվելով միայն վիզուալ հետազոտությունների վրա, եզրակացություն տալ ԿԿԹ-ների հավանական վնասակար ազդեցության վերաբերյալ, օրինակ՝ Կոտայքի մարզի, Արովյան քաղաքի և շրջակա գյուղերը սպասարկող աղբավայրի ուսումնասիրության արդյունքում ակնառու է դառնում վերջինիս վնասակար ազդեցությունը: Քարտեզ 3-ում ներկայացված է Արովյան քաղաքից դեպի հյուսիս, մոտ 5 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայրը:



- 1) աղբավայրի պոլիգոնի տարածքը որևէ կերպ մեկուսացված չէ շրջակա տարածքից,
- 2) աղբավայր տանող բոլոր ճանապարհների եզրերին գոյացել են աղբակույտեր, որոնք վեր են ածվել չարտոնված աղբանոցների,
- 3) շրջակա տարածքները, որտեղով անցնում է Սևանի ոռոգման ջրանցքը՝ աղտոտված է ԿԿԹ-ներով, որոնք մասամբ լցված են ջրանցքի մեջ,
- 4) թափոնները լցված են նաև $d=500$ մմ Մաքրավան-Աբովյան խմելու ջրի ջրատարի սանիտարապաշտպանական գոտում,
- 5) աղբավայրը ողջ տարվա ընթացքում ծխում կամ վառվում է. առաջացած կայուն օրգանական ախտոտիչներով ծխածածկույթը հասնում է ք. Աբովյան և մոտակա գյուղեր,
- 6) ինչպես ք. Աբովյանի աղբավայրում, այնպես էլ ճամփեզրերին գոյացած աղբակույտերում ակնառու է տարբեր բնույթի թափոնների առկայությունը, այդ թվում՝ քիմիական, կենսաբանական, արդյունաբերական և այլ անհայտ ծագման,
- 7) շրջակա տարածքում գտնվում են արոտավայրեր, ամառանոցներ, այգիներ (մրգատու ծառերի և բանջարաբուստանային կուլտուրաների), դեպի ուր,

տեղումների ժամանակ աղբավայրի տարածքից հոսում են խիստ աղտոտված հոսքաջրեր:

8) Նմանատիպ իրավիճակներ կարելի է Գծապատկերագրել ՀՀ այլ տարածքներում:

4. Բերված փաստերը՝ հողի, խմելու և ոռոգման ջրերի, օդի ախտոտումը, ինչպես նաև սննդային շղթայի միջոցով ներգործությունը անխուսափելիորեն անդրադառնում են մարդու առողջության վրա:

Աղյուսակ 20. ՌԵԳ կողմից հասցեագրվող հիմնական հարցերը ԹԿՊ-ի շրջանակներում

Հիմնական հարցերը	Կոնկրետ մտահոգություններն ու խնդիրները	Մտահոգություններ ի աշխարհագրական տարածքը	Թափոնների կառավարման պլանի հետ հնարավոր կապերը
Հանրային առողջություն	1. աղբավայրերի տարածքների ընդլայնում, ջրատարների և ջրանցքների սանիտարապաշտպանական գոտիների խախտում, 2. աղբի այրում 3. աղբավայրերի սանիտարապաշտպանական գոտիների խախտումներ, 4. աղբավայրերում տոքսիկ թափոնների (ծանր մետաղներ, քիմիկատներ) և բժշկական թափոնների (ներարկիչներ, սրվակներ և այլն) առկայություն,	Աղբավայրերին կից տարածքների ախտոտում (մթնոլորտային օդի, հողի, ջրի՝ ֆիլտրարտների, ստորգետնյա և մակերեսային ջրերի)	1. Մշտադիտարկման կետերի բացակայություն՝ շրջակա միջավայրի վրա աղբավայրերի անբարենպաստ ազդեցության ուսումնասիրության համար, 2. Չվնասագերծվող թափոնների պոլիգոնների բացակայություն
	1. Բազմահարկ բնակելի շենքերի աղբատարներին հարող տարածքի մթնոլորտային օդի և փակ շինությունների	բարձրահարկ շենքերի ներքին հարկեր, աղբատարներ և	1. Աղբատարների և աղբախցիկների լվացման և ախտահանման համակարգի

	(բնակարանների) օդի որակ, 2. Աղբատարներում միջատների և կրծողների առկայություն	աղբախցիկներ	բացակայություն
	1. Կոմունալ տնտեսությունների աշխատակիցներ և աղբի անօրինական վերամշակմամբ զբաղվող անձիք	Աղբավայր	1.Անկատար պարբերական բժշկական զննության հետազոտությունների կազմակերպում և հիվանդացության ուսումնասիրություն

**ԿԿԹԿ ծրագրի հիմնական ուղղությունների կապը հենակետային առողջապահական
խնդիրների հետ**

ԿԿԹԿ ծրագրի հիմնական ուղղություններ	Քաղաքներում և գյուղական բնակավայրե- րում ծառայու- թյունների մատուցման կարողություն- ների հավա- սարեցում	Բնակ- չությանը բարձր որակի ծառայու- թյուն- ների մա- տուցում	Ցածր գնային քաղաքա կանու- թյան վարում	Մասնա- վոր բիզնեսի համար գրավչու- թյան բարձրա- ցում	Թափոննե- րի օգտա- հանման բարձրա- ցում	Վերամշակ- ման կարո- ղություն- ների ապահովում
Մարդու առողջության վրա ազդող վնասակար գործոնների նկատմամբ մշտադիտարկումների իրականացում և պատճառահետևանքային և կապի հաստատում	1	0	0	1	0	0

Բնակչության շրջանում ընդհանուր հիվանդացության իջեցում	3	2	0	1	0	3
Բնակչության շրջանում վարակիչ հիվանդություններով հիվանդացության իջեցում	3	1	0	1	0	3

Տվյալ կապի գնահատման նպատակով 0 նիշը նշանակում է՝ կապ չկա, 1 նիշը՝ կա թույլ կապ, 2 նիշը՝ կա միջին կապ, 3 նիշը՝ կա ուժեղ կապ:

Ներկայացված Գծապատկերագրական նյութում հիվանդացության տվյալները բերված են ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»-ի վիճակագրական հաշվետվություններից:

Քաղաքականության նախնական վերլուծություն

Այս բաժինը տեղեկություն է տրամադրում միջազգային, ազգային և այլ մակարդակներում առկա բնապահպանական, այդ թվում՝ առողջապահական խնդիրների մասին, որոնք էական են թափոնների կառավարման պլանի համար:

Թափոնների կառավարման պլանի ՌԷԳ շրջանակը

Այս բաժինը ներկայացնում է հիմնական բնապահպանական ու առողջապահական խնդիրները, որոնք առնչվում են Թափոնների կառավարման պլանին, և որոնք հետագայում կհասցեագրվեն ՌԷԳ գործընթացի հետագա փուլերում:

Հիմնական բնապահպանական մարտահրավերները

Ինստիտուցիոնալ և իրավական շրջանակ
<ul style="list-style-type: none"> Տվյալների ու տեղեկատվության միասնական համակարգ գոյություն չունի, ինչը կպարզեցնեք և ժամանակի առումով կօժանդակեք իրականացման գործընթացին: Աղբի տեսակավորման համակարգ չկա: Աղբի գրեթե բոլոր տեսակները առանց տեսակավորման տարվում են կենցաղային աղբի աղբանոց:

- Առկա աղբանոցները չեն համապատասխանում սահմանված չափանիշներին:

Հողեր և հանքարդյունաբերություն

1. ՀՀ-ում չկան պաշտոնական վերլուծական տվյալներ առողջական ու բնապահպանական խնդիրների վրա հանքարդյունաբերության ազդեցության վերաբերյալ, թեև 2013թ. հունվարի 10-ին ՀՀ կառավարությունը հաստատել է Թիվ 22-Ն որոշումը, համաձայն որի հանքերի փակումից հետո պետք է իրականացվի մոնիտորինգ:

2. Հանքարդյունաբերության ոլորտում 2012 թվականին՝ հանքարդյունաբերության օրենսգրքի ընդունումից հետո, մշակվեց բնապահպանական կառավարման պլանի հայեցակարգը: Սակայն, չկա հաշվետվություններ ներկայացնելու պահանջ, և այդպիսով, մոնիտորինգի արդյունքները չեն հրապարակվում: ՀՀ Բնապահպանության նախարարությունը աշխատանքներ է տանում՝ հասցեագրելու համար հիմնական խնդիրները: Համապատասխան փոփոխություններ են պլանավորվում հանքարդյունաբերության օրենսգրքում: Համաձայն Թափոնների կառավարման պլանի հավելված 1-ի՝ թափոններ տեղավորելիս պետք է հաշվի առնել.

- Թափոնների տեղադրման երկրաբանական ու հիդրոերկրաբանական պայմանները,
- Ջրհեղեղների, հողի դեգրադացման / նվազման, աղբանոցների, տեղադրման վայրում ձյունակույտների հետ կապված ռիսկերը / վտանգները:
- Սահմանային հեռավորություններ տեղադրման և հանգստի վայրերից, ներքին ջրերից, ջրային գոտիներից ու այլ գյուղատնտեսական և քաղաքային վայրերից:

Թափոնների կառավարման պլանում չկան ստորգետնյա կայանների օգտագործման հետ կապված դրույթներ: Մասնավորապես, այն հաշվի չի առնում թափոնների կուտակման վայրում ստորգետնյա հանքային պաշարների հնարավոր ներկայությունը: Հետևաբար, հանքային պաշարների հավանական շահագործումը կարող է անհնար դառնալ:

Թափոնների կառավարման պլանում վերլուծվում ու ներկայացվում է ՀՀ տարածքում առկա և ակտիվ աղբանոցների պլանավորման ու օգտագործման ձեռնարկը (հրահանգ թիվ 321Ա, որը հաստատվել է 2009թ.ի դեկտեմբերի 29-ին, և հրատարակվել է Քաղաքաշինության նախարարության կողմից), որը սահմանում է պահպանել 500մ հեռավորությունը բնակելի շենքերից և սանիտարական պահպանության գոտիներից, ինչպես նաև վկայում է, որ գյուղատնտեսական հողերը և անտառները չեն կարող օգտագործվել որպես աղբանոցներ: Սակայն սա չի նշանակում, որ աղբանոցը չի կարող տեղադրվել գյուղատնտեսական հողի հարևանությամբ:

Ջուր / ստորգետնյա ջրեր

- Մակերեսային ջրերի աղտոտում կենցաղային, գյուղատնտեսական և արդյունաբերական քիմիկատների միջոցով
- Չմշակվող քաղաքային կոյուղաջրերի հետևանքով աղտոտում
- Չկարգավորվող եւ անօրինական աղբավայրերից արտահոսքերի հետևանքով

աղտոտում

- Միջոցառումներ ձեռնարկել կանխելու համար աղբավայրերի պատճառով հողի մակերևութային եւ գրունտային ջրերի աղտոտումը (օրինակ, պատշաճ շերտավորում, երկրաբանական խոչընդոտներ եւ այլն)
- Հաշվի առնել աղբավայրերի տեղադրության չափանիշները (առկա ջրատար շերտեր, բնապահպանական գոտիներ, հոսքի ձևավորման գոտիներ, հանգստի գոտիներ, վարարումներ, սելավներ, էրոզիա եւ այլն)
- Հաշվի առնել շրջակա միջավայրի, հողի և ջրի պաշտպանությունը հատուկ դասի աղբավայրի չափանիշները սահմանելիս (ընդունելի թափոնների տեսակներ)
- Հաշվի առնել կառավարության կողմից ընդունված Թիվ 64-Ն որոշման կողմից սահմանված միջոցառումները «ջրային էկոհամակարգերի, հոսքերի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանության եւ ջրերի պաշտպանության գոտիների, էկոտոների եւ անօտարելի տարածքների սանիտարական պահպանության տարածքների չափանիշների սահմանման վերաբերյալ» (20.01.2005):
- Հաշվի առնել աղբավայրի վերահսկողությունն ու մոնիտորինգը, տվյալների հավաքագրումն ու քարտեզագրումը (գազերի արտանետումներ, ջուր և այլն):

Սոցիալ տնտեսական հատված

- Հիմնական խնդիրը մնում է կոշտ թափոնների աղբավայրերի վատ պայմանները՝ հատկապես գյուղական վայրերում:
- Մի կողմից դա սպառանլիք է բնությանը, մյուս կողմից այն կարող է լինել որոշ հիվանդությունների աղբյուր, ինչը լուրջ առողջական խնդիրներ կարող է հասցնել բնակչությանը:
- Թափոնների կառավարման պլանը պետք է ներդաշնակեցնի գործողությունները և, որպես առաջնահերթություն, ներառի սոցիալական հավասարությունը և սոցիալական խնդիրների լուծման շարունակականությունը:
- Ներկայում խիստ արդիական են դարձել թափոնների հավաքման, տեղադրման և աղբանոցների արդյունավետ կառավարման խնդիրները, որոնց անտեսումը բացասական ազդեցություն կունենա էկոլոգիական, սոցիալական և տնտեսական իրավիճակի վրա:

Կենսաբազմազանություն

- Թափոնների նետումը հանգեցնում է հողում վնասակար քիմիական նյութերի, կոշտ և գազային մասնիկներով օդի աղտոտվածության, ստորգետնյա ջրերի և գետերի աղտոտման, տեսակների աճի, զարգացման ու վերարտադրողականության համար անբարենպաստ պայմանների աճի, անտառային էկոհամակարգերում արժեքավոր, սպառնալիքի տակ գտնվող և հազվագյուտ տեսակների վերացման,

արտադրողականության և բերքի որակի կրճատման:

- Կենսաբազմազանության վրա աղբի բացասական ազդեցության արդյունքում բնակչությունը բախվում է տարբեր առողջական խնդիրների, էկոհամակարգի ծառայությունների աղավաղման հետևանքով կրճատված եկամուտների, կենսամակարդակի պայմանների անկման, կենսաբազմազանության / ագրոկենսաբազմազանության որակի կրճատման, ինչն ազդում է գյուղատնտեսության և առևտրի վրա, որոնք համայնքներում հանդիսանում են հիմնական եկամտի աղբյուր:
- Հողի և ջրի աղտոտումը, հողի կենսաբազմազանության վերացումը (անողնաշարավորներ, բակտերիաներ), բուսածածկի տեսակների բաղադրիչների փոփոխությունը, արժեքավոր և հազվագյուտ բուսատեսակների կրճատումը, էկոհամակարգի աղճատման հետևանքով առողջական խնդիրները հանքային պարարտանյութերի կիրառված ծավալների մասին վիճակագրական տվյալների և համապատասխան մոնիտորինգի բացակայությանը զուգահեռ, տեղի են ունենում աղբի և բնապահպանական աղտոտման բացասական ազդեցության արդյունքում:
- Կենսաբազմազանության և էկոհամակարգի փոփոխությունները խախտում են ջրային ռեժիմը և ագրարային ու անտառային հատվածների ներկա իրավիճակը, ինչը կարող է իրական սպառնալիք դառնալ մարդու առողջության, սնդի ու ջրային պաշարների համար:
- Կենսաբազմազանությանը սպառնացող՝ հանքարդյունաբերության հիմնական երկրակաշիկային հետևանքները ներառում են հողածածկույթին հասցված վնասը, պոչամբարների աճը, աղբի կուտակումը և ջրային ռեսուրսների աղտոտումը:
- Որոշ աղբանոցներ օգտագործվում են ֆերմային կենդանիներ կերակրելու համար, ինչը մեծ սպառնալիք է մարդկային առողջությանը: Աղվեսների պես վայրի կենդանիները օգտագործում են այս աղբանոցները, ինչը վարակների մեծ աղբյուր է ու սպառնալիք կենսաբազմազանության համար, ինչպես նաև այլ կենդանիներին վարակի փոխանցման աղբյուր:
- Աղբի հավաքումը Հայաստանի ԲՀՊՏ-ներում անկանոն կերպով է իրականացվում, այն չի պլանավորվում և կազմակերպված կերպով չի իրականացվում:
- Հողային ծածկույթին հասցված վնասը / վերացումը և աղբի կուտակումը վստահաբար հանգեցնում են բույսերի ու կենդանիների և համայնքների ֆրագմենտացիայի, խախտում են միգրացիոն ուղիներն ու անգամ սպառում որոշ հազվագյուտ տեսակների գոյությանը:
- Հողի և ջրի աղտոտումը երկրի շատ շրջաններում էականորեն գերազանցում է առավելագույն թույլատրելի կենտրոնացումը, և աղտոտման հիմնական աղբյուրը արտահոսքն է պոչամբարներից: Ոչ կատարյալ տեխնիկական սարքավորումների հետևանքով ցեմենտի փոշին օդ է արտանետվում, ինչը ազդում է բնական էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների վրա՝ փոխելով հողի պայմանները և ազդեցություն թողնելով անողնաշարավոր ֆաունայի և բույսերի ֆոտոսինթետիկ

գործունեության վրա: Մակերևույթի ջրային ուղիները և լանդշաֆտները աղտոտվում են նաև կոշտ կենցաղային աղբի միջոցով:

- Գյուղատնտեսության ոլորտում շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները ներառում են ոչ արդյունավետ ոռոգման արդյունքում առաջացած ջրային կորուստները, ինչպես նաև հողի աղակալումը, էրոզիան, գյուղատնտեսական աղբի պատճառով առաջացած աղտոտումը: Ներկայում վարելահողերի մոտ 33%-ը կամ 150 հազար հեկտարը չի օգտագործվում այդ նպատակով: Սա սպառնում է վայրի կենսաբազմազանությանը, քանի որ լքված մշակելի հողերը ծածկվում են ագրեսիվ մոլախոտերով և դառնում են դրանց վերարտադրության կենտրոնը: Բնական էկոհամակարգերի՝ որպես արոտավայրեր օգտագործման դեպքում, ամենամեծ սպառնալիքը արոտավայրերի բեռի անհամամասնական բաշխումն է, երբ հեռավոր արոտավայրերում արածումը թերի է լինում:
- Ջրի օգտագործումը գյուղատնտեսության և էներգիայի արտադրության ոլորտի զարգացման նպատակով հաճախ հանգեցնում է ջրային ուղիների չորացման, ինչը առաջ է բերում ափամերձ և ջրային էկոհամակարգերի՝ հատկապես ձկնատեսակների և դրանցով կերակրվող տեսակների վերացում: Ջրային ուղիների մաքրման և փոփոխման աշխատանքները հաճախ հիմնավորված չեն և հանգեցնում են գետերի բիոտոպերի, այդ թվում՝ ձկների կերերի ու դրանց ձվադրման տարածքների վերացմանը:

Կլիմայի փոփոխությունը, արտանետումները, օդի աղտոտվածությունը

- Կլիմայի փոփոխությունը Հայաստանի մշակաբույսերի վրա կթողնի 3 հիմնական ազդեցություն: Նախ յուրաքանչյուր մշակաբույսի աճեցման գոտին մինչև 2030 թ. վեր է բարձրանալու 100 մետրով, իսկ մինչև 2100թ.՝ 200-400 մետրով: Մշակաբույսերի աճեցման համար ավելի մեծ տարածքներ կառաջանան բարձր գոտիներում, որը որոշակի մրցակցություն կառաջացնի բարձր գոտիներում արոտավայրերի ու խոտհարքների հետ:
- Երկրորդը՝ եթե ոռոգման մակարդակը չբարձրացվի և ոռոգվող տարածքները չընդլայնվեն, բարձր ջերմաստիճանների, գոլորշիացման ավելացման և Հայաստանի շատ տարածքներում տեղումների նվազումը բերելու է մշակաբույսերից շատերի արտադրողականության կրճատմանը:
- Երրորդը՝ եղանակի փոփոխություններն այնպիսի վնաս են պատճառելու մշակաբույսերին և հողերին, ինչը հնարավոր չէ կանխատեսել միջին ջերմաստիճանների բարձրացման կամ տարեկան տեղումների փոփոխությունների հիման վրա:
- Հայաստանում դեռևս չեն գործում ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) համակարգերը և չկա բնապահպանական խնդիրների նկատմամբ «բարի կամքի» մոտեցում: Թերի է նաև իրազեկումը այս ոլորտում: Հետևապես, եթե արտանետման չափաքանակները բավարարում են արտանետման

թույլտվություն ստանալու համար, ձեռնարկությունները որևէ լուրջ քայլեր կամ ներդրումներ չեն ձեռնարկում իրենց տեխնոլոգիաները փոխարինելու համար: Անշարժ աղբյուրների համար տեխնոլոգիական նորմավորման սկզբունքը և նորագույն տեխնոլոգիաների ներդրումը ներկայումս հանդիսանում են մթնոլորտային օդի պահպանության կարևորագույն խնդիր:

Հայաստանի ներկայիս /2012թ./ ՔԿԹ առաջացման մակարդակը գնահատվում է տարեկան շուրջ 700 հազար տոննա կամ մարդու համար օրեկան շուրջ 0.6 կգ: Քսանհինգ տարվա կտրվածքով թափոնների կառավարումը նշանակում է, որ 2036 թվականին, տարեկան կառաջանա 950 հազար տոննա ՔԹԿ, որը հավասար կլինի մարդու համար օրեկան 0.8 կգ:

- Թափոնների հավաքման որակը և ծածկույթը օպտիմալից ցածր է, չնայած նրան, որ քաղաքային կենտրոններում վիճակն ավելի լավ է, քան գյուղական բնակավայրերում: Հավաքման և փոխադրման սարքավորումները հիմնականում հնացած են և անբավարար են կանոնավոր ծառայության մատուցման համար:
- Թափոնները հեռացվում են անվերահսկելի և տեխնիկապես ոչ հագեցած աղբավայրերում, որտեղ չկա բնապահպանության համար որևէ միջոց և որտեղ պակասում է պրակտիկան: Բացի դրանից, կան բազմաթիվ «վայրի» աղբավայրեր, որտեղ մարդիկ իրենք են թափում թափոնները և որտեղ տարածված է որևէ անվերահսկելի վայրում հասարակ թափոնների հեռացումը:
- Սրա հետևանքով գոյություն ունեն բնապահպանության վրա ներկայիս և ժառանգական ազդեցություններ, իսկ դրան պետք է անդրադառնան ՀԿ-ները, ստանձնելով բնապահպանության և ֆինանսների համար մեծ պատասխանատվություն:
- Ոչ ստանդարտ աղբավայրից թափոնների փոխադրումը սահմանափակված է վերամշակմամբ, որը թելադրվում է որոշակի տնտեսական արժեք ունեցող և ընտրված վերամշակվելիք ապրանքների համար փոքր, բայց զարգացող անկախ շուկաներով, հիմնականում պլաստմասի, ապակու, թղթի և ալումինումի համար:
- Ներկայիս համակարգի համար սակագները տատանվում են յուրաքանչյուր բնակչի համար 0.20-ից 0.40 եվրոյի շրջանակում, իսկ դա բավարար չէ գոյություն ունեցող համակարգը ֆինանսավորելու համար, չհաշված որևէ բարելավում:
- Ներկայումս ԿԹԿ ծառայությունները մատուցվում են քաղաքում սեփականաշնորհված, գործարկվող և քաղաքապետարանին ենթակա կազմակերպությունների կողմից, կամ տեղական մասնավոր օպերատորների հետ կնքվում են կարճաժամկետ պայմանագրեր, դրանք ամբողջապես ֆինանսավորվում են սակագներից ստացված քիչ գումարով, հանրային ոլորտի բյուջեներից ստացվող հատուկենտ կապիտալ դրամաշնորհներով կամ երբեմն տարբեր երկրներից ուղարկվող նվիրատվություններով:
- Մինչ օրս, ազգային և միջազգային նախաձեռնությունները բնութագրվել են համեմատաբար չհամակարգված, մասնատված, աստիճանական մոտեցմամբ՝

առանց որևէ հասանելի ընդհանուր ազգային քաղաքականության, պլանավորման կամ առաջնահերթությունը սահմանող շրջանակի, որի վրա հիմնված կլինի ներդրումների համար որոշումների կայացումը:

- 2012 թվականի ընթացքում կազմակերպությունների տարածքում առաջացել է 39.0 մլն.տ. թափոն: ՀՀ մեկ բնակչի հաշվով առաջացած թափոնների քանակը կազմել է 12.9տ., իսկ ՀՀ տարածքի (առանց Սևանա լճի հայելու մակերեսի) մեկ քառ. կմ-ի հաշվով՝ 1.4մլն.տ.:
- Հայաստանի տարածքում ԿԿԹ հավաքումն իրականացվում է 49 քաղաքային և 468 գյուղական համայնքներում, իսկ 398 գյուղական համայնքներ (գյուղական բնակավայրերի 46%-ը) ընդգրկված չեն թափոնների հավաքման ծառայությունում:
- Համայնքներ կան, որտեղ աղբի հավաքումը անկանոն կերպով է իրականացվում: Աղբը, որը չի հավաքվում կամ տեղափոխվում սովորաբար հայտնվում է գետերի ափերին՝ աղտոտելով շրջակա միջավայրը և ռիսկեր ստեղծելով մարդու առողջության համար:
- Վերադիր շրջաններում աղբանոցներ կան, ինչպիսին է Լոռի մարզի Արջուտ գյուղի հարևանությամբ տեղադրված 5.6հա աղբանոցը. նման վայրերում ջրեր են հոսում հալչող ձյան արդյունքում, դրանց հարևանությամբ գտնվող տարածքները օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով, որոնք մշտապես աղտոտվում են աղբի և կոյուղաջրերի պատճառով:

Առողջություն

- Աղբանոցների տարածքների աճ և սանիտարական պաշտպանության գոտիներում ջրախողովակներին ու կանալներին առնչվող խախտումներ:
- Աղբավայրի պոլիգոնի տարածքը որևէ կերպ մեկուսացված չէ շրջակա տարածքից:
- Աղբավայր տանող բոլոր ճանապարհների եզրերին գոյացել են աղբակույտեր, որոնք վեր են ածվել չարտոնված աղբանոցների:
- Շրջակա տարածքները, որտեղով անցնում է Սևանի ոռոգման ջրանցքը՝ աղտոտված է ԿԿԹ-ներով, որոնք մասամբ լցված են ջրանցքի մեջ:
- Աղբավայրը ողջ տարվա ընթացքում ծխում կամ վառվում է. առաջացած կայուն օրգանական ախտոտիչներով ծխածածկույթը հասնում է ք. Աբովյան և մոտակա գյուղեր:
- Խախտումներ Աղբանոցների սանիտարական գոտիներում:
- Թունավոր աղբի առկայություն (ծանր մետաղներ, քիմիկատներ) և բժշկական աղբ (ներարկիչներ, ամպուլաներ և այլն) աղբանոցներում:
- Թափոնները լցված են նաև d=500մմ Մաքրավան-Աբովյան խմելու ջրի ջրատարի սանիտարապաշտպանական գոտում,
- Ինչպես ք. Աբովյանի աղբավայրում, այնպես էլ ճամփեզրերին գոյացած աղբակույտերում ակնառու է տարբեր բնույթի թափոնների առկայությունը, այդ թվում՝ քիմիական, կենսաբանական, արդյունաբերական և այլ անհայտ ծագման:

- Շրջակա տարածքում գտնվում են արոտավայրեր, ամառանոցներ, այգիներ (մրգատու ծառերի և բանջարաբուստանային կուլտուրաների), դեպի ուր, տեղումների ժամանակ աղբավայրի տարածքից հոսում են խիստ աղտոտված հոսքաջրեր:
- Հայաստանում ներկայիս գոյություն ունեցող ԿԿԹԿ համակարգն անկատար է, կրում է բազմաթիվ ռիսկեր, հատկապես՝ կապված մարդու առողջության վրա ազդող գործոնների հետ: Վերջիններիս ազդեցությանն են ենթարկվում ՀՀ տարածքի բոլոր գոտիների բնակչությունը, տարիքային և ռիսկային բոլոր խմբերը (երեխաներ, մեծեր, մեծահասակներ, ծերեր, հղիներ, ցածր դիմադրողականություն ունեցող անձիք, հիվանդներ և այլն)՝ կյանքի տևողության ողջ ընթացքում:
- Մարդու վրա ԿԿԹ-ների ներգործությունն իրականանում է հետևյալ ճանապարհներով՝ հողի, խմելու և մակերեսային ջրերի, մթնոլորտային օդի և աշխատանքային գոտու օդային միջավայրի, սննդային շղթայի միջոցով և օրգանոլեպտիկ եղանակով: Ներգործող ազդակներ են հանդիսանում քիմիական մանրէային, վիրուսային և մակաբուծային գործոնները: ՀՀ առողջապահական համակարգի կողմից առավել ուսումնասիրված է համաճարակային վտանգ ներկայացնող գործոններով պայմանավորված հիվանդացությունը՝ մանրէային, վիրուսային և մակաբուծային վարակների տարածվածությունը:
- Ըստ ուսումնասիրությունների՝ աղբարկղերի շուրջը, 15 մետր շառավղով, համարվում է մանրէաբանական ցուցանիշներով ամենավարակված տարածք և գործնականում, վիրուսային վարակներով հիվանդացության բարձրացման ժամանակ, այդ տարածքներից նմուշառված ճանճերից հիմնականում անջատվում են էնտերավիրուսներ:
- Հայտնի է, որ բոլոր տեսակի օբյեկտներց, այդ թվում նաև ԿԿԹ-ներից, ճանճերը կարող են տեղափոխել/փոխանցել ավելի քան 63 տեսակի միկրոօրգանիզմներ (աղիքային ցուպիկ, մանրէային դիզենտերիայի հարուցիչներ, պոլիոմիելիտի վիրուսներ և այլն), ինչպես նաև հելիինթների ձվիկներ և մանր տզեր: Միկրոօրգանիզմների և տզերի հավելյալ փոխանցողներ և/կամ կրողներ կարող են հանդիսանալ նաև առնետներն ու մկները, որոնք հանդիսանում են սանիտարական անբարեհաջող վիճակի ուղղակի ցուցիչներ:
- Միջազգային փորձում գրանցվել են մարդկանց ՁԻԱՀ-վարակով, հեպատիտ Բ-ով վարակման և հիվանդացման դեպքեր բժշկական թափոնների միջոցով. սովորաբար վարակվում են աղբանոցներին մոտ տարածքներում խաղացող երեխաները, որոնք խաղում են գտնված ներարկիչներով և սրվակներով:
- Ընդհանուր աղիքային խմբում ներառված են դիզենտերիան, իերսինիոզը, չհաստատված հարուցիչներով սուր աղիքային վարակների խումբը, գաստրոէնտերոկոլիտները, էնտերովիրուսային և ռոտավիրուսային վարակները, ինչպես նաև սննդային տոքսիկոինֆեկցիաները և այլն:
- Բազմաօրակ բնակելի շենքերի աղբատարներին հարող տարածքի մթնոլորտային օդի և փակ շինությունների (բնակարանների) օդի որակ. շենքերում աղբախցիկների

- բացակայություն, հոտի ու օդի անառողջ աղտոտում կուտակված աղբի արդյունքում:
- Աղբատարներում միջատների և կրծողների առկայությունը խթանում է հիվանդությունների տարածքումը:
 - Անկատար պարբերական բժշկական զննության հետազոտությունների կազմակերպում, հիվանդացության ուսումնասիրությունների ու մոնիտորինգի տվյալների պակաս:

Աղյուսակ 21. ԹԿՊ ՌԷԳ կողմից հասցեագրվող հիմնական հարցերը (Հիմնահարցերը սահմանող աղյուսակ)

1. Բնապահպանական ու առողջապահական տվյալների նախնական վերլուծության ՌԷԳ աղյուսակ, թափոնների կառավարման արդյունքում ծագող հանրային քաղաքականության հարցեր	
Օրենսդրությանն առնչվող հարցեր	
<p>Հիմնական բնապահպանական խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> • Ձեր ոլորտին առնչվող բնապահպանական ու առողջապահական տվյալների նախնական վերլուծություն • Սահմանեք ձեր ոլորտի թափոնների կառավարման պլանից (ԹՓԿ) բխող բնապահպանական ու առողջապահական խնդիրները • Սահմանեք ձեր ոլորտին առնչվող և թափոնների կառավարումից բխող բնապահպանական ու առողջապահական քաղաքականության խնդիրները 	<ul style="list-style-type: none"> • Իրականացնել թափոնների կառավարման պլանի ՌԷԳ գործընթաց համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի: • Վեր հանել թափոնների ծրագրի հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, և առաջարկել լուծումներ՝ ուղղված դրանց կանխարգելմանն ու նվազեցմանը: • Գործընթացի ամենավաղ փուլերից սկսած հանրությանը ներգրավել թափոնների ծրագրի ՌԷԳ գործընթացում, հաշվի առնել հանրության կարծիքը: • Պետական կառավարման մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին թափոնների փորձնական ծրագրի օրինակով ծանոթացնել ՌԷԳ գործընթացի օգուտներին և իրականացման անհրաժեշտությանը: <p>Խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> • Հանրապետությունում չկա թափոնների տեսակավորման համակարգ: • Գրեթե բոլոր կարգի թափոնները առանց տեսակավորման հեռացվում են կենցաղային թափոնների աղբավայրեր: • Գոյություն ունեցող աղբավայրերը չեն

	<p>համապատասխանում սահմանված չափորոշիչներին:</p> <ul style="list-style-type: none"> • ՌԷԳ կարգավորող օրենսդրական դաշտը ամբողջովին չի արտացոլում ՌԷԳ արձանագրության պահանջները, հատկապես առողջապահության ոլորտում: • Հանրապետությունում չկան ոլորտի կարգավորման մեթոդական ձեռնարկներ, որոնք գործընթացի մասնակիցներին կօգնեն առավել հեշտությամբ հաղթահարել ծառացած դժվարությունները՝ ՌԷԳ իրականացման գործընթացում: • Հայաստանում չկա ոլորտին վերաբերող տվյալների և տեղեկատվության միասնական համակարգ, ինչը դյուրին կդարձներ, և ժամանակի առումով կհեշտացներ գործընթացի իրականացումը:
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող հնարավոր անդրսահմանային ազդեցությունները	Ծրագրի արդյունքում անդրսահմանային ազդեցություններ չեն ակնկալվում
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող նախնական ՌԷԳ առաջարկությունները	<p>ՀՀ Կառավարություն, թափոնների քաղաքականություն ՀՀ Բնապահպանության նախարարություն, Թափոնների կառավարում, հիմնական փաստաթղթերի տրամադրում / այդ թվում ՌԷԳ եզրակացություններ ՀՀ Առողջապահության նախարարություն, թափոնների կառավարման ոլորտին առնչվող մարդու առողջության պահանջների մշակում ՀՀ Տարածքային կառավարման ու արտակարգ իրավիճակների նախարարություն պլանի իրականացման պատասխանատվություն Տարածքային կառավարման մարմիններ, <i>Մասնակցություն իրենց տարածքներում Պլանի իրականացմանը: Պատասխանատվություն հանրության իրազեկման, քննարկումների կազմակերպման համար:</i> Տեղական ինքնակառավարման մարմիններ, <i>Մասնակցություն իրենց տարածքներում Պլանի իրականացմանը: Պատասխանատվություն հանրության իրազեկման, քննարկումների կազմակերպման համար:</i> ՀԿ-ներ, հանրություն, <i>Մասնակցություն պլանի վերաբերյալ հանրային քննարկումներին, կարծիքի, առաջարկությունների</i></p>

	<i>ներկայացում:</i>
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող նախնական ՌԷԳ առաջարկությունները	<ul style="list-style-type: none"> - Օրենքի ՌԷԳ և ՇՄԱԳ կարգավորող հոդվածներում «Թափոնների օգտագործումը» փոխարինել «թափոնների կառավարում» բառերով: - Օրենքի նախատեսվող գործողությունների ցանկում՝ ըստ կատեգորիաների, հստակ տարանջատել թունավոր, վտանգավոր, կենցաղային թափոնները, և այն համապատասխանեցնել «Թափոնների մասին» ՀՀ օրենքի հասկացություններին և պահանջներին:
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող տեղեկատվական բացերն ու մարտահրավերները	<ol style="list-style-type: none"> 1. Հաշվի առնելով, որ ՌԷԳ իրականացումը համեմատաբար նոր է Հայաստանում, դեռևս չեն ձևավորվել իրականացնող մարմինները: Այս գործառույթները լիովին և բավարար կերպով չեն իրականացվում անհատների կամ ընկերությունների միջոցով, որոնք ԷԱԳ են իրականացնում: 2. Հիմնադրությային փաստաթղթերը (թափոնների կառավարման պլան) ընթացք են ստանում վարչական մարմինների կողմից, որոնք դեռևս չունեն ՌԷԳ իրականացման համար պահանջվող փորձ և ռեսուրսներ: 3. Տարածքային կառավարման մարմիններն ու տեղական իշխանությունները բավարար ռեսուրսներ չունեն այս ոլորտում՝ օրենսդրությամբ սահմանված իրենց պարտականությունները իրականացնելու համար: 4. Ոլորտին առնչվող առկա տեղեկատվությունն ու տվյալները շատ հին են, ինչը չի կարող ներկա իրավիճակի համար պատշաճ տեղեկատվական աղբյուր հանդիսանալ: Որոշ հատվածների համար տեղեկատվություն և համապատասխան տվյալներ անգամ գոյություն չունեն: 5. Թափոնների հատվածի կարգավորման դաշտում կան շատ չկարգավորված հարաբերություններ և բացթողումներ, որոնք հետագա մշակման և վերանայման կարիք ունեն:
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող ազդեցության գնահատման նախատեսված մոտեցումները	<ul style="list-style-type: none"> - Աղբավայրերի տեղակայման վայրերը տեղակայել բնակավայրերից նվազագույնը 500մ հեռավորության վրա - Գյուղատնտեսական հողերը և անտառները չեն

	<p>կարող օգտագործվել որպես աղբավայրեր:</p> <ul style="list-style-type: none"> - Նախընտրելի են տարածքները, որտեղ ստորերկրյա ջրերը մակերևույթից գտնվում են 2մ խորության վրա: - Աղբավայրերը պետք է տեղակայվեն օդանավակայաններից 15կմ հեռավորության վրա: - Աղբավայրերի տարածքների օգտագործման ժամկետը սահմանել 25 տարի: - Ստորին միջնաշերտը պետք է լինի ոչ պակաս քան 0.5մ խորը հոսող ջրի նորմայով ոչ ավել քան $10^{5\text{մ}^3/\text{վ}}$. ($0.0086 \text{ մ/օրը}$) /սահմանվում է կավահողի բնական վիճակով/: Այն դեպքում, եթե հոսող ջրի նորման գերազանցում է $10^{5\text{մ}^3/\text{վ}}$. պետք է տեղադրվի արհեստական թաղանթ: - Հայաստանում աղբի այրման վերաբերյալ օրենսդրական կարգավորման բացակայություն - Այնպիսի կլիմայական պայմաններում, որտեղ խոնավությունը չի գերազանցում 52% և տարեկան անձրևների քանակը ավելի քիչ է, քան 100մմ, ջրաթափանց շերտ տեղադրելու կարիք չկա:
<p>Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող հետազա ՌԷԳ քայլերը</p>	<ul style="list-style-type: none"> - Այլընտրանքային լուծումների վերլուծություն և ընտրության հիմնավորում - Միջոցառումների կազմակերպման պլանի մշակում - Մոնիտորինգի և հետպլանային վերլուծության մշակում - Հանրային ծանուցման և քննարկումների կազմակերպում - ՀՀ Բնապահպանության նախարարություն, Էկոլոգիական ազդեցության գնահատման ներմուծում և տեխնիկական առաջադրանքի մշակում
<p>Հողին առնչվող հարցեր</p>	

<p>Հիմնական բնապահպանական խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> • Ձեր ոլորտին առնչվող բնապահպանական ու առողջապահական տվյալների նախնական վերլուծություն • Սահմանեք ձեր ոլորտի Թափոնների կառավարման պլանից (ԹՓԿ) բխող բնապահպանական ու առողջապահական խնդիրները • Սահմանեք ձեր ոլորտին առնչվող և թափոնների կառավարումից բխող բնապահպանական ու առողջապահական քաղաքականության խնդիրները 	<p>1. ՀՀ-ում չկան պաշտոնական վերլուծական տվյալներ առողջական ու բնապահպանական խնդիրների վրա հանքարդյունաբերության ազդեցության վերաբերյալ, թեև 2013թ. հունվարի 10-ին ՀՀ կառավարությունը հաստատել է ԹԻՎ 22-Ն որոշումը, համաձայն որի հանքերի փակումից հետո պետք է իրականացվի մոնիտորինգ:</p> <p>2. Հանքարդյունաբերության ոլորտում 2012 թվականին հանքարդյունաբերության օրենսգրքի ընդունումից հետո մշակվեց բնապահպանական կառավարման պլանի հայեցակարգը: Սակայն, չկա հաշվետվություններ ներկայացնելու պահանջ, և այդպիսով, մոնիտորինգի արդյունքները չեն հրապարակվում: ՀՀ Բնապահպանության նախարարությունը աշխատանքներ է տանում՝ հասցեագրելու համար հիմնական խնդիրները: Համապատասխան փոփոխություններ են պլանավորվում հանքարդյունաբերության օրենսգրքում: Համաձայն Թափոնների կառավարման պլանի հավելված 1-ի՝ թափոններ տեղավորելիս պետք է հաշվի առնել.</p> <ul style="list-style-type: none"> • Թափոնների տեղադրման երկրաբանական ու հիդրոերկրաբանական պայմանները, • Ջրհեղեղների, հողի դեգրադացման / նվազման, աղբանոցների, տեղադրման վայրում ձյունակույտերի հետ կապված ռիսկեր / վտանգներ: • Սահմանային հեռավորությունները տեղադրման և հանգստի վայրերից, ներքին ջրերից, ջրային գոտիներից ու այլ գյուղատնտեսական և քաղաքային վայրերից:. <p>Թափոնների կառավարման պլանում չկան ստորգետնյա կայանների օգտագործման հետ կապված դրույթներ: Մասնավորապես, այն հաշվի չի առնում թափոնների կուտակման վայրում ստորգետնյա հանքային պաշարների հնարավոր ներկայությունը: Հետևաբար, հանքային պաշարների հավանական շահագործումը կարող է անհնար դառնալ:</p> <p>Թափոնների կառավարման պլանում վերլուծվում ու ներկայացվում է ՀՀ տարածքում առկա և ակտիվ աղբանոցների պլանավորման ու օգտագործման</p>
--	--

	<p>ձեռնարկը (հրահանգ թիվ 321Ա հաստատված 2009թ.ի դեկտեմբերի 29-ին, հրատարակվել է Քաղաքաշինության նախարարության կողմից), որը սահմանում է պահպանել 500մ հեռավորությունը բնակելի շենքերից և սանիտարական պահպանության գոտիներից, ինչպես նաև վկայում է, որ գյուղատնտեսական հողերը և անտառները չեն կարող օգտագործվել որպես աղբանոցներ: Սակայն սա չի նշանակում, որ աղբանոցը չի կարող տեղադրվել գյուղատնտեսական հողի հարևանությամբ:</p>
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող հնարավոր անդրսահմանային ազդեցությունները	Հանքարդյունաբերության հատվածում ամենակարևոր անդրսահմանային հետևանքներից է հանքարդյունաբերության արդյունքում աղտոտված ջուրը:
Ներկայացրեք ձեր ոլորտին առնչվող շահագրգիռ կողմերի վերլուծությունը	ՀԿ-ների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պոչամբարներով զբաղեցված տարածքները բացասական հետևանքներ են ունենում մարդու առողջության վրա: Գյուղերից մեկի մանկապարտեզում իրականացվել է վերլուծություն: Արդյունքում պարզվել է, որ երեխաների մազերում վտանգավոր տարրեր կան:
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող նախնական ՌԷԳ առաջարկությունները	Առաջարկում եմ իրականացնել հանքարդյունաբերական տարածքներում աղտոտված հողերի անտրոպոգեն մոնիտորինգ (հողի մոնիտորինգ Հայաստանում չի իրականացվել 2010թ.-ից սկսած):
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող տեղեկատվական բացերն ու մարտահրավերները	Մոնիտորինգի արդյունքների հանրայնացմանը առնչվող օրենսդրական բացեր
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող ազդեցության գնահատման նախատեսված մոտեցումները	-
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող հետագա ՌԷԳ քայլերը	Առաջարկում եմ ներառել իրավական դաշտի և աղտոտված հողերի անտրոպոգեն մոնիտորինգի աշխատանքներ ՌԷԳ հետագա քայլերում:
Ջրերին առնչվող խնդիրներ	
<p>Հիմնական բնապահպանական խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> • Ձեր ոլորտին առնչվող բնապահպանական ու 	<ul style="list-style-type: none"> • Մակերևութային ջրերի աղտոտում կենցաղից ու արդյունաբերությունից առաջացած քիմիկատների արդյունքում • Չմշակվող քաղաքային կոյուղաջրերի հետևանքով աղտոտում

<p>առողջապահական տվյալների նախնական վերլուծություն</p> <ul style="list-style-type: none"> • Սահմանեք ձեր ոլորտի թափոնների կառավարման պլանից (ԹՓԿ) բխող բնապահպանական ու առողջապահական խնդիրները • Սահմանեք ձեր ոլորտին առնչվող և թափոնների կառավարումից բխող բնապահպանական ու առողջապահական քաղաքականության խնդիրները 	<ul style="list-style-type: none"> • Չկարգավորվող եւ անօրինական աղբավայրերից արտահոսքերի հետևանքով աղտոտում • Միջոցառումներ ձեռնարկել կանխելու համար աղբավայրերի պատճառով հողի մակերևութային եւ գրունտային ջրերի աղտոտումը (օրինակ, պատշաճ շերտավորում, երկրաբանական խոչընդոտներ եւ այլն) • Հաշվի առնել աղբավայրերի տեղադրության չափանիշները (առկա ջրատար շերտեր, բնապահպանական գոտիներ, հոսքի ձեւավորման գոտիներ, հանգստի գոտիներ, վարարումներ, սելավներ, էրոզիա եւ այլն) • Հաշվի առնել շրջակա միջավայրի, հողի և ջրի պաշտպանությունը հատուկ դասի աղբավայրի չափանիշները սահմանելիս (ընդունելի թափոնների տեսակներ) • Հաշվի առնել կառավարության կողմից ընդունված Թիվ 64-Ն որոշման կողմից սահմանված միջոցառումները «ջրային էկոհամակարգերի, հոսքերի ձեւավորման, ստորերկրյա ջրերի պահպանության եւ ջրերի պաշտպանության գոտիների, էկոտոների եւ անօտարելի տարածքների սանիտարական պահպանության տարածքների չափանիշների սահմանման վերաբերյալ» (20.01.2005): • Հաշվի առնել աղբավայրի վերահսկողությունն ու մոնիտորինգը, տվյալների հավաքագրումն ու քարտեզագրումը (գազերի արտանետումներ, ջուր և այլն):
<p>Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող հնարավոր անդրսահմանային ազդեցությունները</p>	<p>Անդրսահմանային հնարավոր ազդեցությունները վերաբերում են անդրսահմանային գետերի մակերևութային ջրերի աղտոտմանն ու անդրսահմանային ստորջրյա ջրատար շերտերի աղտոտմանը: Պետք է հաշվի առնել աղբավայրերի տեղադրությունը և գոտիավորումը՝ խուսափելու համար աղբավայրերի արտահոսքի արդյունքում անդրսահմանային էկոհամակարգերի վրա բացասական ազդեցությունից :</p>
<p>Ներկայացրեք ձեր ոլորտին առնչվող շահագրգիռ կողմերի վերլուծությունը</p>	<ul style="list-style-type: none"> • Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարություն (ԲՆ)

	<ul style="list-style-type: none"> • ԲՆ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն • ԲՆ Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ • ԲՆ Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ • Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության Հիվանդությունների վերահսկման ու կանխարգելման ազգային կենտրոն • Գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե • Ջրամատակարար ընկերություններ • Տեխնիկական աջակցություն տրամադրող միջազգային դոնոր կազմակերպություններ (գետավազանների պլանավորում, ջրային քաղաքականության և օրենսդրության մշակում), ենթակառուցվածքի զարգացում (ջրամբարներ, ճանապարհներ) և համապատասխան այլ ոլորտներ • Քաղաքացիական հասարակություն (բնապահպանական, առողջապահական և այլ ՀԿ-ներ) • Մամուլ
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող նախնական ՌԷԳ առաջարկությունները	<ul style="list-style-type: none"> • Բարելավել Հայաստանում ստորջրյա ռեսուրսների մոնիտորինգի համակարգը: • Մշակել աղտոտումը կանխարգելող միջոցառումներ՝ կանխելու համար աղբավայրերի արդյունքում ջրի, հողի և ստորգետնյա ջրերի աղտոտումը: • Բարձրացնել թափոններին առնչվող հարցերում իրազեկությունն ու տեղեկատվությունը:
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող տեղեկատվական բացերն ու մարտահրավերները	<ul style="list-style-type: none"> • Ստորգետնյա ջրերի որակի վերաբերյալ տվյալների պակաս ստորգետնյա ռեսուրսների անբավարար մոնիտորինգի պատճառով: • Հայաստանում ջրհեղեղներին հակված տարածքների քարտեզի բացակայություն: • Մակերևութային ջրերի կենսաբանական մոնիտորինգի բացակայություն, ինչը թույլ կտար գնահատել ազդեցությունը ջրային էկոհամակարգերի վրա:

<p>Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող ազդեցության գնահատման նախատեսված մոտեցումները</p>	<ul style="list-style-type: none"> • Ազգային համապատասխան օրենսդրության կողմից սահմանված քաղաքականության նպատակների իրագործման գնահատում: • Հնարավոր բնապահպանական ազդեցությունների գնահատում: • Յուրաքանչյուր ազդեցության մանրամասն վերլուծություն: • Կանխարգելիչ միջոցառումների հատնաբերում, որոնք հնարավոր է կիրառել՝ բացասական ազդեցությունները հասցեագրելու նպատակով:
<p>Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող հետագա ՌԷԳ քայլերը</p>	<ul style="list-style-type: none"> • ՌԷԳ հիմնախնդիրները սահմանող զեկույցի նախագծի քննարկում շահագրգիռ կողմերի հետ: • Հիմնախնդիրները սահմանող զեկույցի վերանայում և վերջնականացում՝ շահագրգիռ կողմերի մեկնաբանությունների հիման վրա: • Հետագա քայլեր, որոնք սահմանված են ՀՀ Էկոլոգիական ազդեցության գնահատման և փորձագիտության մասին օրենքով:
<p>Սոցիալ – տնտեսական խնդիրներ</p>	
<p>Հիմնական բնապահպանական խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> • Ձեր ոլորտին առնչվող բնապահպանական ու առողջապահական տվյալների նախնական վերլուծություն • Սահմանեք ձեր ոլորտի Թափոնների կառավարման պլանից (ԹՓԿ) բխող բնապահպանական ու առողջապահական խնդիրները • Սահմանեք ձեր ոլորտին առնչվող և թափոնների կառավարումից բխող բնապահպանական ու առողջապահական քաղաքականության խնդիրները 	<p>Հիմնական խնդիրը մնում է կոշտ թափոնների աղբավայրերի վատ պայմանները՝ հատկապես գյուղական վայրերում: Մի կողմից դա սպառանլիք է բնությանը, մյուս կողմից այն կարող է լինել որոշ հիվանդությունների աղբյուր, ինչը լուրջ առողջական խնդիրներ կարող է հասցնել բնակչությանը: Թափոնների կառավարման պլանը պետք է ներդաշնակեցնի գործողությունները և որպես առաջնահերթություն այն պետք է ներառի սոցիալական հավասարությունը և սոցիալական խնդիրների լուծման շարունակականությունը:</p> <p>Ներկայում խիստ արդիական են դարձել թափոնների հավաքման, տեղադրման և աղբանոցների արդյունավետ կառավարման խնդիրները, որոնց անտեսումը բացասական ազդեցություն կունենա էկոլոգիական, սոցիալական և տնտեսական իրավիճակի վրա:</p>

Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող հնարավոր անդրսահմանային ազդեցությունները	Թեթև մասնիկների ու տհաճ հոտի տարածում աղբից (քամու միջոցով) դեպի համայնք
Ներկայացրեք ձեր ոլորտին առնչվող շահագրգիռ կողմերի վերլուծությունը	Հիմնական շահառուն բնակչությունն է, որը հաղորդակցության սահմանափակ հնարավորություն ունի:
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող նախնական ՌԷԳ առաջարկությունները	Անհրաժեշտ է մշակել նշված համակարգի արդիականացման ռազմավարական ծրագիր, որը ենթադրում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների կազմում և վերամշակման համար բիզնես ծրագրերի մշակում, թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի իրականացում շրջակա միջավայրի վրա թափոնների ներգործության գնահատում, առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, աղբի վերամշակման գործարանի կառուցում:
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող տեղեկատվական բացերն ու մարտահրավերները	Տեղական իշխանությունների համար ամբողջական խորհրդատվության պակաս, միջհամայնքային համագործակցության բավարար մակարդակի պակաս, հանրային իրազեկության պակաս:
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող ազդեցության գնահատման նախատեսված մոտեցումները	Ազդեցության գնահատման տեսանկյունից վատ հետևանքներից են բարձր սակագները, հավաքման կետերի և աղբանոցների շրջապատող տարածքների աղտոտումն ու զարշառոտությունը, աղբանոցների ու շրջապատող տարածքների հողերի մաշվածությունը:
Մասնավորեցրեք ձեր ոլորտին առնչվող հետագա ՌԷԳ քայլերը	Հետագա քայլերից են. <ul style="list-style-type: none"> - Գործակիցների հաստատման համար քաղաքականության մշակում - Տարեկան մոնիթորինգի ու եկամուտների բարելավմանն ուղղված միջոցառումների մշակում

	<ul style="list-style-type: none"> - Աղբի համար թափանցիկ գրանցման համակարգ - Վճռորոշումների ու հավաքման համակարգերի բարելավում - Վերամշակվող նյութերի պատշաճ հավաքման վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում - Աղբ հավաքողների ներգրավում վերամշակվող նյութերի հավաքման գործում և շուկայավարման կազմակերպում:
Աղբահանության խնդիրներ	
<p>Հիմնական բնապահպանական խնդիրները</p> <ul style="list-style-type: none"> • Ձեր ոլորտին առնչվող բնապահպանական ու առողջապահական տվյալների նախնական վերլուծություն • Սահմանեք ձեր ոլորտի թափոնների կառավարման պլանից (ԹՓԿ) բխող բնապահպանական ու առողջապահական խնդիրները • Սահմանեք ձեր ոլորտին առնչվող և թափոնների կառավարումից բխող բնապահպանական ու առողջապահական քաղաքականության խնդիրները 	<p>Կլիմայի փոփոխությունը հնարավոր է անկանխատեսելի հետևանքներ ունենա շրջակա միջավայրի վրա: Կլիմայի փոփոխությունը Հայաստանի մշակաբույսերի վրա, օրինակ, կթողնի 3 հիմնական ազդեցություն: Նախ յուրաքանչյուր մշակաբույսի աճեցման գոտին մինչև 2030 թ. վեր է բարձրանալու 100 մետրով, իսկ մինչև 2100թ.՝ 200-400 մետրով: Մշակաբույսերի աճեցման համար ավելի մեծ տարածքներ կառաջանան բարձր գոտիներում, որը որոշակի մրցակցություն կառաջացնի բարձր գոտիներում արոտավայրերի ու խոտհարքների հետ:</p> <p>Երկրորդը՝ եթե ոռոգման մակարդակը չբարձրացվի և ոռոգվող տարածքները չընդլայնվեն, բարձր ջերմաստիճանների, գոլորշիացման ավելացման և Հայաստանի շատ տարածքներում տեղումների նվազումը բերելու է մշակաբույսերից շատերի արտադրողականության կրճատմանը:</p> <p>Երրորդը՝ եղանակի փոփոխություններն այնպիսի վնաս են պատճառելու մշակաբույսերին և հողերին, ինչը հնարավոր չէ կանխատեսել միջին ջերմաստիճանների բարձրացման կամ տարեկան տեղումների փոփոխությունների հիման վրա:</p> <p>Հայաստանում դեռևս չեն գործում ստանդարտացման</p>

	<p>միջազգային համակարգերը: Հետևապես, եթե արտանետման չափաքանակները բավարարում են արտանետման թույլտվություն ստանալու համար, ձեռնարկությունները որևէ լուրջ քայլեր կամ ներդրումներ չեն ձեռնարկում իրենց տեխնոլոգիաները փոխարինելու համար:</p> <p>Թափոնների կառավարման պլանից բխող բնապահպանական հարցերն ու խնդիրները հետևյալն են.</p> <ol style="list-style-type: none"> 1) ՀԿԿԹ տեսակավորում և վերամշակում 2) Թափոնների հավաքման որակի ու ծածկույթի բարելավում 3) Թափոնների հավաքման և փոխադրման սարքավորումների բարելավում 4) Աղբավայրերի տեխնիկական վերազինում 5) Ապօրինի աղբավայրերի օրինականացում 6) Թափոնների կանխարգելում 7) Թափոնների վերամշակում ու կրկնակի օգտագործում 8) Վերջնական կուտակում և մոնիտորինգի ծառայությունների բարելավում:
<p>Ներկայացրեք ձեր ոլորտին առնչվող շահագրգիռ կողմերի վերլուծությունը</p>	<p>Հետևյալ ոլորտներում.</p> <ol style="list-style-type: none"> 1) Կլիմայի փոփոխություն 2) Օդ 3) Կենսաբազմազանություն 4) Կոշտ կենցաղային թափոններ <p>Կլիմայի փոփոխության շահառուներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1) ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն (ֆերմաներ, մշակաբույսերի արտադրություն, անասնաբուծություն, պտղաբուծություն, ոռոգման համակարգ և այլն) 2) ՀՀ Բնապահպանության նախարարություն (կենսաբազմազանություն, բնության պահպանվող տարածքներ և այլն) 3) Քաղաքաշինություն 4) Արտակարգ իրավիճակների նախարարություն (մթնոլորտային կայաններ) 5) Տարածքային կառավարում, համայնքներ և այլն

	<p>Մթնոլորտային օդի պահպանության ոլորտի շահառուներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1) Բնակչությունը՝ (հատկապես խոշոր արդյունաբերական քաղաքներում) շարժական ու անշարժ աղբյուրների արտանետումների պատճառով 2) Հանքարդյունաբերական վայրերի հարևանությամբ գտնվող բնակավայրերի բնակիչները 3) Ատոմակայանի հարևանությամբ գտնվող բնակավայրերի բնակիչները 4) Աղբավայրերի հարևանությամբ գտնվող բնակավայրերի բնակիչները և այլն: <p>Կենսաբազմազանության ոլորտի շահառուներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1) Ֆլորա 2) Ֆաունա 3) Զրավազաններ 4) Անտառային ֆերմաներ և այլն: <p>Կոշտ կենցաղային թափոնների ոլորտի շահառուներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1) Բոլոր օրինական ու ապօրինի աղբավայրերի հարևանությամբ գտնվող տարածքների բնակիչները (աղբավայրերի այրումից առաջացող ծուխը, գարշահատությունը, աղբաջրերի հոսքը և այլն):
--	--

«ԿԿԹԿ ոլորտի Ռազմավարական զարգացման ծրագիր, ճանապարհային քարտեզ և երկարաժամկետ ներդրումային ծրագրի» առկա նախագծի հիման վրա կներկայացվեն առաջարկություններ՝ բնապահպանական (այդ թվում՝ առողջապահական) խնդիրների կանխելու կամ մեղմման նպատակով:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. ԱԶԲ (Ասիական Զարգացման Բանկ), 2011. Հայաստանի ջրամատակարարումը և առողջապահությունը. Մարտահրավերներ, նվաճումներ և հետագա ուղղություններ:
2. Բնապահպանության նախարարություն, 2010. *Կլիմայի փոփոխության երկրորդ ազգային հաղորդագրություն*: Կլիմայի փոփոխության շուրջ ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի զեկույց: Երևան, Հայաստանի Հանրապետության Կառավարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն:
3. Ազգային վիճակագրական ծառայություն, (տարբեր տարիների): Հայաստանի վիճակագրական տարեգիրք, բնական պաշարներն ու շրջակա միջավայրը. Երևան: Հայաստանի Հանրապետության Կառավարություն, Ազգային վիճակագրական ծառայություն: <http://www.armstat.am/en/?nid=45>
4. ԱՄՆ ՄԶԳ (ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալություն). 2008: Հայաստանի ջրային ռեսուրսների ատլաս:
5. ԱՄՆ ՄԶԳ (ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալություն). 2014. *Արարատի դաշտավայրի ստորերկրյա ռեսուրսների գնահատման հաշվետվություն*: Վերջնական հաշվետվություն, որը մշակվել է ԱՄՆ ՄԶԳ Մաքուր Էներգիա և ջուր ծրագրի շրջանակներում:
6. Համաշխարհային բանկ. 2011: Հայաստանի Հանրապետության ջրային հատվածի զեկույց 61317-AM, Վաշինգթոն:

Կարևոր հղումներ

1. «Հայաստանի Հանրապետությունում բնակարանային ֆոնդը և կոմունալ ծառայությունները 2014թ.ին», ՀՀԱզգային վիճակագրական ծառայություն, 2015 թ.:
2. «Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրն ու բնական պաշարները», ՀՀԱզգային վիճակագրական ծառայություն, 2015 թ.:

3. «Հայաստանի Հանրապետության տնտեսությունը», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2015 թ.:
4. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (տարեգիրք):
5. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Պետական կոմիտե, հողերի առկայության և բաշխման զեկույց:
6. Անապատացման դեմ պայքարի ազգային գործողությունների պլան, Երևան, 2002:
7. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում վնասակար բնական եւ տեխնածին աղետները նվազեցնելու ուղեցույց, Երևան 2015:
8. Կլիմայի փոփոխության նկատմամբ Հայաստանի գյուղատնտեսական համակարգերի խոցելիության նվազեցում: Ներգործության և աղապտացման տարբերակների գնահատում: Երևան. Համաշխարհային բանկ, 2014
9. Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարություն և ազգային գործողությունների պլան, Երևան, 2015:
10. Կլիմայի փոփոխության երրորդ ազգային հաղորդագրություն, Երևան 2015, Լուսաբաց հրատարակչություն, 190 էջ:
11. ՀՀ հանքարդյունաբերությունը, համակողմանի վերլուծություն, 2015:
12. ՀՀ սողանքների կառավարման ծրագիր, Ճանպոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալություն, 2014:
13. Թափոնների կառավարման համակողմանի համակարգ, Վանաձոր, Հայաստան, 2013:
14. www.mnp.am
15. www.minenergy.am
16. <http://www.atlas.d-waste.com/>
17. www.hetq.am
18. www.minagro.am
19. www.mta.gov.am

Հավելված 1. Հայաստանի ջրավազանների կառավարման

քարտեզ

